

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ռիմա Սերժիկի Համբարձումյան

**ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆ  
ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ. 02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման

**Գիտական ղեկավար՝ Յուրի Սրապիոնի Ավետիսյան**  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 1 6**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----</b>	<b>3</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ</b>	
<b>ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ---</b>	<b>12</b>
1.1. Հարադրական բայեր -----	12
1.2. Բայակերտ ածանցյեղ. այլ խոսքի մասերից կազմված բայեր -----	32
1.3. Բայակազմ բայեր: Սեռի և կերպի ձևավորումը բայական համակարգում -----	<b>40</b>
<b>ԳԼՈՒԽ 2. ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ</b>	
<b>ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ---</b>	<b>66</b>
2.1. Անկախ դերբայների ընդհանուր բնութագիրը հայերենում (համառոտ ակնարկ) -----	67
2.2. Անորոշ դերբայի իմաստային-քերականական հատկանիշները -----	73
2.3. Անկախ դերբայների հիմքակազմության յուրահատկությունները արևմտահայերենում -----	88
2.4. Բայի և անվան (գոյական, ածական) քերականական-իմաստային հատկանիշները անկախ դերբայների համակարգում -----	91
2.5. Բայի և մակբայի քերականական-իմաստային հատկանիշները դերբայական համակարգում -----	106
2.6. Փոփոխություններ-տեղաշարժեր արևմտահայերենի բայի խոնարհման համակարգում -----	111
<b>ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----</b>	<b>116</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----</b>	<b>119</b>
<b>ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----</b>	<b>125</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից լեզվաբանության առավել արդիական խնդիրներից մեկը լեզվի կենդանի գործընթացների ուսումնասիրությունն է, ինչպես նաև գործառույթային ընդհանուր օրինաչափությունների, առկա կառույցները որպես համակարգերի ամբողջություն դիտարկելու, լեզվի գիտական հիմքերի խոր քննությունը: Լեզվական համակարգերի կանոնարկումը, դրանց կառուցվածքային-գործառույթային յուրահատկությունների ուսումնասիրությունը պայմանավորում են լեզուների զուգադրական քննության անհրաժեշտությունը: Լեզվի մեջ միշտ էլ ծագում են տարբեր խնդիրներ (զուգաձևություններ, գրական, խոսակցական և այլ տարբերակներ), և ինչ-որ մի ժամանակ դրանց քննությունը, կանոնարկումը և արձանագրումը դառնում են պարտադիր: Հայտնի է, որ լեզվական իրողությունների հետազոտությունը առավել հետաքրքրական ու արդյունավետ է դառնում հատկապես դրանց զուգադրական ուսումնասիրության դեպքում:

Հաղորդակցական-գործառույթային տեսանկյունից լեզվական հետազոտության զուգադրական մեթոդը թերևս նպատակահարմար է, քանի որ զուգադրական հետազոտությունը բնորոշվում է նախ և առաջ հենց լեզվաբանական բոլոր ուղղությունների անսահմանափակ կիրառությամբ (հանրալեզվաբանություն, հոգելեզվաբանություն և այլն): Լեզուների ուսումնասիրության համեմատական մեթոդի կարևորությունը ընդգծելով՝ հարկ է նշել, որ լեզուների փոխազդեցության ուսումնասիրությունը լեզվաբանության կարևորագույն խնդիրներից է: Դա պայմանավորված է նրանով, որ լեզուների փոխազդեցությունը միանգամայն իրական է, օբյեկտիվ իրականության փաստ, որը լեզվաբանությունը շրջանցել չի կարող: Սրանից կախված՝ փոխազդեցությունների, դրանց հետևանքների հետազոտությունների մակարդակը պետք է բարձրացվի և հասցվի լեզվական համակարգերի հետազոտությունների մակարդակին: Այս մոտեցումը հստակ ընդգծում է ինչպես հիմնական գիտակարգերը, այնպես էլ ածանցյալ և համաբանական արտահայտությունների նշանակությունները և լույս սփռում լեզվական միավորների փոխկապակցվածության վրա: Լեզվամիավորների քննությունը նպաստում է լեզվաբանության հիմնահարցերից մեկի լուծմանը և առաջնորդում հետազոտողին գիտական նորույթ փնտրելու ճանապարհին:

Լեզվաբանության զարգացման ներկա փուլում բոլորովին էլ սպառված չեն այն հարցերը, որոնց լուծումն ուղղակիորեն կախված է լեզուների ուսումնասիրության համեմատական մեթոդից (որի կիրառությունը դրականորեն է ազդում նաև զուգադրական լեզվաբանության զարգացման վրա): Եվ ոչ միայն. զուգադրական լեզվաբանության համար համեմատական մեթոդը խորապես գիտական հիմքեր է ապահովում: Որքան լայն են այդ մեթոդի կիրառության շրջանակները, այնքան մեծ է լեզվական օրինաչափությունների բացատրության հավաստիության աստիճանը, իսկ այդ օրինաչափությունները հենվում են տարբեր կառուցվածքներ ունեցող լեզուների ներհամակարգային տվյալների և փոխազդեցական փաստերի վրա: Եվ սա ընդամենը բնորոշող թվարկում էր այն բոլոր խնդիրների, որոնք կարևոր են զուգադրական մեթոդի համար:

Լեզվաբանության մեջ ընդգծվում է, որ կարելի է համեմատել ոչ միայն ցեղակցական, այլև պատմականորեն իրար հետ կապ չունեցող լեզուներ, որոնք «օտար են» թե՛ ծագումնաբանորեն, թե՛ պատմականորեն և թե՛ աշխարհագրորեն:

Համեմատական հետազոտության խնդիրները, քննության նպատակով պայմանավորված, տարբեր են. դրանցից առաջնահերթ են մի լեզվի երևույթների յուրահատկությունների դուրսբերումը և դրանց համեմատությունը ոչ միայն այլ լեզուների (ցեղակից և ոչ ցեղակից), այլև լեզվի տարբերակների հետ, ինչպես մեր դեպքում:

Մեր աշխատանքի հիմնական նպատակը **արևելահայերենի և արևմտահայերենի բայակազմական** (մասամբ նաև ձևակազմական) **կաղապարների համեմատական քննությունն** է: Արևելահայերենն ու արևմտահայերենը, թեև միևնույն լեզվի երկու տարբերակներ են, ունեն ծագումնաբանական նույն հիմքը, սակայն լեզվական բոլոր մակարդակներում դրսևորում են էական տարբերություններ: Հայտնի է, որ արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական տարբերությունները արտահայտվում են ձևաբանական մակարդակում (հատկապես թեքվող խոսքի մասերում), ուստի արևելահայերենի և արևմտահայերենի **բայակազմական ու ձևակազմական կաղապարները**, ինչպես նաև **դերբայների շարահյուսական կիրառություններից բխող խոսքիմասային պատկանելության հարցը** քննում ենք որպես մեկ գրական լեզվի տարբերակային ձևերի իրողություններ:



Հայտնի է, որ բայը քերականական կարգերով ամենահարուստ խոսքի մասն է: Այն ոչ միայն նշված կարգերով է հարուստ, այլև ունի կառուցվածքային մի շարք յուրահատկություններ, որոնցով տարբերվում է մյուս խոսքի մասերի կազմությունից: Բայը միակ խոսքի մասն է, որն ունի ձևային ընդհանրություն՝ **Լ** (գրե՛լ, կարդա՛լ, նստի՛լ, թողո՛ւ): Ինչպես գիտենք, **ա, ե, ի, ու** հնչյունները հիմքի ձայնանիշեր են:

Լեզվաբանության մեջ բոլոր ժամանակներում բայն ու խոսքը (նախադասություն) հավասարազոր հասկացություններ են համարվել, իսկ երբեմն նաև քերականական ամեն մի փոխհարաբերություն դիտվել է բայական:

Հայերենի քերականագիտության մեջ բայը ի սկզբանե դիտվել է իբրև առանձին խոսքի մաս և վաղ շրջանի քերականների աշխատություններում ներկայացվել է անմիջապես անուն խոսքի մասերից հետո: Դ. Թրակացու աշխատության մեկնիչներն արդեն բայը բնորոշում են իբրև ութ քերականական կարգեր ունեցող խոսքի մաս: Այդ կարգերն են՝ «խոնարհմունք», «տրամադրութիւնք», «տեսակք», «ծեւք», «թիւք», «դէմք», «ամանակք», «լծորդութիւնք»: Նշվում է, թե դրանցից որը քանի տեսակի է լինում և ինչ է ցույց տալիս<sup>1</sup>:

Արևմտահայերենի գիտական քերականության հիմնադիր **Արսեն Այտընյանը**, անդրադառնալով բայի քերականական կարգերին և բնութագրելով դրանք առանձին-առանձին, գրում է. «Ունի եղանակ, ժամանակ, թիւ եւ դէմք մէկտեղ գալով՝ բայը կը խոնարհեն: Սակայն ամէն բայ միեւնոյն կերպով չի խոնարհիր. զոր օրինակ. **սիրել՝ կ'ըլլայ սիրեցի, սիրուել՝ սիրուեցայ, խաղալ՝ խաղացի**: Այս կերպ խոնարհիլը կը կոչուի բայերու լծորդութիւնքը որ հայերէն լեզուի մէջ չորս կերպ է: Չորս լծորդութիւններն աներեւոյթ ժամանակին մէջ իրարմէ կ'որոշուին. ինչպէս՝ առաջին լծորդութիւնն է՝ **-ել՝ լս- ել**, երկրորդ լծորդութիւնն է՝ **-իլ՝ սորու - իլ**, երրորդ լծորդութիւնն է՝ **-ալ՝ կարդ - ալ**, չորրորդ լծորդութիւնն է՝ **-նալ՝ մոռ - նալ**: Ներգործական ու չեզոք բայերն այս չորրորդ լծորդութեանց (կամ չորս կերպ խոնարհմանց) մեկուն տակը կ'երթան: Իսկ կրաւորականները՝ հատուկ կերպով մը ներգործականէն կազմուելէն ետեւ՝ ամէնն ալ միօրինակ եւ հաւասարապէս երկրորդ լծորդութեան պէս կը խոնարհին»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Адонц Н.**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 146:

<sup>2</sup> **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 60:

Ինչպես տեսնում ենք, Ա. Այտընյանը **-ն-** սուկաձանցը ներկայացնում է խոսքիմասային **-ալ** ածանցի հետ:

**Հրաչյա Աճառյանը** հայերենում ածանցավոր բայերի կազմության մեջ առանձնացնում է երեք խումբ.

**ա) Պարզ բայեր.** Ժառանգություն են հնդեվրոպական նախալեզվից, և որոնց արմատը պետք չէ որոնել հայերենի մեջ, ինչպես՝ **տալ, լալ, գալ, ուտել, կենալ** և այլն:

Կարող են լինել բայեր, որոնց ծագումը դեռ մեզ հայտնի չէ, բայց իբրև պարզ բայ պատկանում են այս խմբին:

**բ) Ածանցյալ կամ ածանցական բայեր.** առաջացել են նույն պարզ բայերից գա՛նազան մասնիկներով. դրանք են **անցողական, կրավորական, բացասական, հարցական, կրկնավոր, հաճախական** և այլ բայեր:

**գ) Անվանական բայեր.** կազմվում են գոյականից կամ ածականից՝ ստանալով որևէ բայական վերջավորություն<sup>3</sup>:

**Մանուկ Աբեղյանը**, անդրադառնալով բայաձանցներին, առանձնացնում է հետևյալ տեսակները՝ **բայաձևի ածանցներ (ա<այ, աց, յաց (եց)<եաց (եց), ույց<ոյ, ց,** ինչպես՝ գնացք, մարդատյաց, մերձեցում, ապացույց, զեկուցում): Նա նշում է, որ գրաբարում ներաձանցի բունը, որից կազմվում է անորոշ դերբայը, վերջանում է չորս ձայնավորով՝ **ա, ե, ի, ու.** անորոշ դերբայն ունի կա՛մ սուկ **-ալ, -ել, -իլ, -ուլ,** կա՛մ **-անել, -նել, -անիլ, -չիլ, -նչիլ, -անալ, -ենալ, -նալ, -նուլ** և պատճառական կազմությունները: Դրանցից աշխարհաբարում կենդանի բեղմնավոր են **-ալ, -ել, -անալ, (-ացնել>)-ցնել,** իսկ մնացածները մեռած են: Աբեղյանը մեկ առ մեկ ներկայացնում է դրանք և դրանց հետագա զարգացումը: Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը ևս սուկաձանց կոչվածները միացնում է խոսքիմասային **-ել, -ալ, -ուլ, -իլ** ածանցներին և դիտարկում միասին, որը նկատելի է ոչ միայն հետագա քերականների<sup>4</sup>, այլև նախորդների աշխատություններում:

Հետագայում հարցը մանրամասն քննում է **Աշոտ Աբրահամյանը:** Նա գրում է. «Բայաձանցները քերականական հատուկ ածանցներ են, որոնք բայերի կազմում երևան են գալիս քերականական տարբեր հասկացություններ արտահայտելու համար.

<sup>3</sup> Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն, հ. 4, գիրք Բ, Եր., 1961, էջ 5, 23-32:

<sup>4</sup> Տե՛ս **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:

մի քանիսն էլ մասնակցում են որոշ կարգի բայական բառայթների բաղադրմանն ու ձևավորմանը և, այդուհանդերձ, ունենում են քերականական որոշ դեր, որը դարձյալ բնորոշ է բայերին»<sup>5</sup>:

Ժամանակակից հայերենի բայական համակարգում Ա. Աբրահամյանն առանձնացնում է ածանցներ և ածանցատիպ մասնիկներ՝ տալով դրանց հետևյալ անվանումները՝ **դերբայական մասնիկներ, հիմնային բաղադրիչներ և բայատիպարային ածանցներ**: Դրանք բնութագրվում են այսպես. «Ժամանակակից հայերենի բայական համակարգում բայատիպարային ածանցներ են այնպիսի բայաձանցները, որոնք կրում կամ բաղադրում են բայական բառայթը՝ քերականական լրացուցիչ իմաստների հետ կամ առանց դրանց, կամ էլ պատրաստի բայական բառայթներին քերականական ածանցամբ հաղորդում են քերականական ուրույն իմաստներ՝ միաժամանակ հանդես գալով իբրև այդ իմաստների ածանցական ցուցիչներ»<sup>6</sup>:

Այնուհետև Ա. Աբրահամյանը ժամանակակից արևելահայ գրական լեզվի «բայատիպարային» ածանցները բաժանում է հետևյալ խմբերի՝ **ա)** բաղադրության-քերականական ածանցներ, **բ)** բուն քերականական ածանցներ<sup>7</sup>:

**Էդվարդ Աղայանը** նույնպես անդրադարձել է հարցին: Նա ժամանակակից հայերենի բայերը բայակազմության տեսակետից ներկայացնում է երկու կարգով՝ **պարզ և բաղադրյալ. պարզ՝** բառահիմքից և վերջավորություններից կազմված, ինչպես՝ **գործել, խաղալ և այլն, բաղադրյալ, որոնք, բացի բառահիմքից և վերջավորություններից, ունեն նաև որևէ այլ կարգի բայական ձևույթ, ինչպես՝ կորատել, կոխ-կռտել, կորչել, մոռանալ, տեսնել, սիրվել, կորցնել և այլն**: Հայտնի է, որ բաղադրյալ բայեր կազմելու համար ժամանակակից հայերենն ունի երեք միջոց՝ **ածանցում, կրկնություն, հարադրություն**. համապատասխան բաղադրյալ կազմությամբ բայերն էլ կոչվում են **ածանցավոր, կրկնավոր, հարադիր**: Էդ. Աղայանը քննում է միայն պարզ և ածանցավոր բայակազմությունները: Ըստ նրա՝ ածանցավոր

<sup>5</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 210:

<sup>6</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 212:

<sup>7</sup> Այս և մյուս դիտարկումներին ըստ անհրաժեշտության կանդրադառնանք աշխատանքի համապատասխան հատվածներում:

են համարվում **-ոտ-, -ատ-, -տ-, -կոտ-, -ոտ-, -կլտ-, -րտ-, -կրտ-, -որ-, -ավոր-, -ան-, - են-, -ն-, -չ-, -ցն-/ -ցր-, -վ-** ածանցներով բայերը: Այս բոլոր ածանցները էդ. Աղայանը բաժանում է երեք խմբի՝ **կերպային-բառակազմական, սեռային-քերականական և հիմքակազմ**<sup>8</sup>:

**Գևորգ Ջահուկյանը** **-ան-, -են-, -ն-, -չ-** ածանցները համարում է հիմքակազմ վերջնամասնիկներ<sup>9</sup>: Իսկ «Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցեր» գրքում, առավել հանգամանորեն ներկայացնելով իր տեսակետները բայի վերաբերյալ, գրում է. «Նախքան բայի կառուցվածքային բաղադրիչների իմաստային վերլուծությանն անցնելը պարզենք դրանց ձևային արտահայտությունն ու բաշխումը: Թե՛ բառակազմական և թե՛ ձևակազմական առումով ժամանակակից հայերենի բայը միատիպ չէ. նրա մեջ հանդես են գալիս ձևավորման և՛ համադրական, և՛ վերլուծական եղանակներ: Այս դեպքում էլ հարկավոր է, որ եթե այլ խոսքի մասերի դեպքում բառակազմական և ձևաբանական բաղադրիչների տարբերակումը բավական հեշտ է, ապա բայի դեպքում այն դժվարություն է հարուցում. այսպես, եթե գոյական անվան մեջ բառակազմական ձևային-բաղադրիչները միշտ նախորդում են բուն ձևակազմական ձևային-բաղադրիչներին (վերջավորություններին), ապա բայի դեպքում բաշխման այդ հետևողականությունը չկա»<sup>10</sup>: Նշվում է նաև, որ, ի տարբերություն անվանական ձևերի, ժամանակակից հայերենի բայաձևերը չեն կազմվում մեկ ընդհանուր կաղապարով: Ըստ բաղադրիչների հաջորդականության՝ այստեղ կաղապարային տարբերություններ կան ոչ միայն համադրական և վերլուծական (բաղադրյալ), հաստատական և ժխտական, սեռային նիշ ունեցող և չունեցող քերականական ձևերի, այլև ժողովրդախոսակցական և գրքային ոճերին պատկանող ձևերի միջև, ինչպես՝ վախել – վախենալ<sup>11</sup>:

Հարցը քննում է նաև **Լիանա Հովսեփյանը**: «Ինչ վերաբերում է այլ խոսքի մասերից բայերի առաջացմանը,– գրում է նա,– ապա այստեղ գործ ունենք բայական բառակազմության հետ իր բուն իմաստով: Բայերի կերտում այլ խոսքի մասերից կարող

<sup>8</sup> Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1986, էջ 327:

<sup>9</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 249:

<sup>10</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցեր, Պէյրուս, 2002, էջ 45:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը:

է տեղի ունենալ կամ պարզապէս բայական վերջավորության հավելումով (անորոշ դերբայում՝ և ածանցն իր լծորդ ձայնավորներով), կամ, որ ավելի ցայտուն է դարձնում բառակազմությունը, **անալ** բաղադրյալ բայակերտ ածանցով»<sup>12</sup>: Լ. Հովսեփյանը, հետևելով Էդ. Աղայանի դասակարգմանը, բազմապատկական, սաստկական և զորացման ածանցները նույնպէս համարում է կերպածանցներ<sup>13</sup>:

Հարցի համառոտ պատմությունից անգամ նկատելի է, որ հայոց լեզվի մեջ բայակազմության և բայական ձևակազմության վերաբերյալ տեսակետներն ու սկզբունքները տարբեր են, որոնց կանդրադառնանք ըստ անհրաժեշտության: Նշենք, որ ոչ միայն քննվող, այլև արևմտահայերենի այլ հարցեր այսօր էլ գտնվում են մասնագետների ուշադրության կենտրոնում<sup>14</sup>:

Այս ուսումնասիրությամբ առաջին անգամ փորձ է արվում մանրամասն հետազոտելու արևելահայերենի և արևմտահայերենի բայական բառակազմության ու ձևակազմության, հատկապէս անդեմ ձևերի կազմության յուրահատկությունները, ինչպէս նաև դրանց միջքերականական կարգերի հարաբերություններն իրենց ամբողջության մեջ: Համակարգված ներկայացվում են բայական անդեմ ձևերի՝ դերբայների նշանակությունների, իմաստային ու կիրառական համապատասխանություններն ու տարբերությունները: Այս դեպքում նկատելի են նաև էական տարբերություններ. դրանք ունեն իրենց լեզվական ու արտալեզվական հիմնավոր բացատրությունները, որոնք առավել ակնհայտ են երևում համեմատելիս, ավելի կոնկրետ՝ հակադրելիս:

Բոլոր բայերի համար ներկայացրել ենք միայն հիմքերն ու անդեմ բայերի կազմության ձևերի տարբերությունները: Բայական ձևակազմությանը, հատկապէս անդեմ բայերի կազմությանը անդրադարձել ենք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դերբայական ձևերի կազմության մեջ արևելահայերենն ու արևմտահայերենը դրսևորում են մի շարք առանձնահատկություններ:

Մեր նպատակը երկու գրականների բայական բառակազմական օրինաչափությունների, դրանց համապատասխանությունների ու կիրառությունների վերհանումն է

<sup>12</sup> Տե՛ս **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմություն, Եր., 1987, էջ 300:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 304:

<sup>14</sup> Տե՛ս «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում», Եր., 2015: «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», Եր., 2013 և այլն:

եղել, իսկ (քերականական ձևերի կազմություններին և ոճական ամենաբազմազան կիրառություններին) նրբիմաստներին անդրադարձել ենք միայն անհրաժեշտության դեպքում:

Ատենախոսության մեջ չենք քննել արևելահայերենի և արևմտահայերենի բայի խոնարհման համակարգերի առանձնահատկությունները: Անշուշտ, խոնարհման համակարգը ամբողջությամբ **ձևակազմական** հարացույց է, և կան էական տարբերություններ: Սակայն երկու գրականների խոնարհման համակարգի քննությունը մեզանում (հատկապես վերջին տասնամյակներում) հանգամանորեն կատարվել է տարբեր լեզվաբանների կողմից, որոնց աշխատություններին կանդրադառնանք ըստ անհրաժեշտության: Սակայն նույն խոնարհման համակարգերում մեր «տեսադաշտից» չեն վրիպել բայի խոնարհված այնպիսի ձևեր, որոնք շեղվում են կանոնավոր կազմություններից և հանդես են գալիս ձևակազմական այլ կաղապարներով: Խոնարհման համակարգի ինչ-ինչ փոփոխություններ առկա են և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում: Սակայն ատենախոսության մեջ մենք շեշտը դրել ենք հատկապես արևմտահայերենի խոնարհման համակարգում նկատվող տեղաշարժերի վրա, քանի որ արևելահայերենի նույն իրողությունները արդեն քննվել են: Մինչդեռ արևմտահայերենի արդի վիճակով պայմանավորված՝ խնդիրը մնացել է առկախ, գուցե աննկատ, և կարծում ենք, որ խոնարհման համակարգում կատարվող սակավաթիվ փոփոխությունների քննությունը այս աշխատության շրջանակներում հետաքրքիր է, տեղին է, ինչ-որ առումով՝ պահանջված:

Աշխատանքում փորձել ենք նաև ներկայացնել արևելահայերենի և արևմտահայերենի բայական կառուցվածքային տիպերը, դերբայական համակարգը, բայական դարձվածքների կազմության ու իմաստային տարբերությունները և ընդհանրությունները:

Հետազոտությունը կատարելիս գրական-գեղարվեստական սկզբնաղբյուր են եղել 20-րդ դարի արևելահայ և արևմտահայ, սփյուռքահայ հեղինակների երկերը (Դ. Վարուժան, Ռ. Սևակ, Սիամանթո, Հ. Թումանյան, Եղ. Չարենց, Վ. Տերյան, Ռ. Որբերյան Ա. Ծառուկյան, Ա. Բակունց, Դ. Դեմիրճյան, Ն. Սիմոնյան, Շ. Շահնուր, Վ. Թեքեյան, Մ. Իշխան և այլք): Օգտվել ենք նաև պարբերական և էլեկտրոնային մամուլի

նյութերից («Անահիտ», «Ազատ խօսք», «Ճակատամարտ», «Ազդակ», «Ժամանակ», «Սովետական Հայաստան», «Գրական թերթ», «Ազգ» և այլն): Օրինակներ նշելիս աշխատել ենք դրանք ներկայացնել երկու գրականներին բնորոշ տարբերակներով, եթե, իհարկե, այդ իրողությունները ունեցել են յուրահատկություններ, հակառակ դեպքում՝ օրինակները բերվել են կա՛մ արևելահայերենով, կա՛մ արևմտահայերենով: Եթե ներկայացվող երևույթը հատուկ է եղել երկու տարբերակներին էլ, աշխատել ենք պարբերաբար չկրկնել այդ միտքը՝ շարադրանքի միօրինակությունից խուսափելու համար:

## ԳԼՈՒԽ 1. ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Վերջին ժամանակներում լեզվաբանության մեջ մեծացել է հետաքրքրությունը բայական բառակազմության, հատկապես դարձվածքների և հարադրական բայերի՝ որպես լեզվական կայուն կառույցների քննության նկատմամբ: Դրանք հատկապես կարևորվում են ազգային լեզվամտածողության, լեզվամշակույթի ուսումնասիրության տեսանկյունից:

Արևելահայերենում և արևմտահայերենում բայերն ըստ կազմության լինում են երկու տեսակ՝ **վերլուծական** և **համադրական**: Հայտնի է, որ բայական հարադրական բարդությունները լինում են երեք տեսակ՝ **հարադրավոր** կամ **հարադրական բայեր, զուգաբայեր և պատճառական բայեր** (որոնք կազմվում են վերլուծական եղանակով՝ **անորոշ դերբայ + տալ** կաղապարով): Համադրական բայերը լինում են երկու տեսակ՝ **աններածանց** և **ածանցավոր**. Վերջիններս իրենց հերթին լինում են չորս տեսակ՝ **սուկածանցավոր, բազմապատկական, կրավորական, պատճառական**: Այս ամենի հանգամանալից քննությանը անդրադառնում ենք ստորև՝ զուգադրաբար ներկայացնելով արևելահայերենի և արևմտահայերենի համապատասխան լեզվական իրողությունները:

### 1.1. Հարադրական բայեր

Ժամանակակից հայերենի երկու տարբերակներում էլ ընդունված է հարադրական բայերն առանձնացնել՝ հիմք ընդունելով բաղադրիչների քերականական հարաբերությունները: Հարադրական բայերի բաղադրիչների հարաբերությունները լինում են **համադասական** և **ստորադասական**: Հարկ է նշել, որ ստորադասական բարդությունների համար առավել տիպական են համադրական ձևերը: Բաղադրիչների կազմով սրանք հարաբերակից են հարադրական բայերին, սակայն այս ձևերում բարդության հիմնական իմաստն արտահայտվում է հարադիրի միջոցով, և դրանք սովորաբար ունենում են իրենց համադրական զուգահեռը, ինչպես՝ **բարև տալ - բարևել, խոսք տալ - խոստանալ, միտք անել - մտածել** և այլն: Այս կարգի վերլուծական ձևերում



սովորական կայուն կապակցությունների համեմատությամբ հաճախադեպ են դարձվածքային կապակցությունները:

Ներկայումս երկու գրականներում էլ բայական հարադրություններ քիչ են կազմվում: Նորակազմությունները հիմնականում ստեղծվում են գրավոր խոսքում և ըստ էության լայն տարածում չեն ստանում, ինչպես՝ **արևառ լինել, բողոքի հանել, գետնատապալ անել, թիրախված լինել** (ռազմ.) և այլն: Ավելին, վերջին տասնամյակներում արևելահայերենի բառակազմական համակարգերում նկատվում է **հարադրական - համադրական** անցումը, ինչպես՝ **վեր լուծել - վերլուծել, փոխ առնել - փոխառել, անց կացնել - անցկացնել** և այլն: Արևմտահայերենում ավելի շատ հակառակ անցումն է նկատելի, ինչպես՝ **աչքալուսել - աչքը լուսել, երդնուլ - երդում ընել, լռել - լուռ մնալ, մաքրագրել - մաքուրի առնել, փոխառել - փոխ առնել, ցաւակցիլ - ցաւակցութիւն յատնել** և այլն. **սուրճ խմել - սրճել** հարադրությունն ավելի հեզնական կիրառություն ունի:

Ըստ բաղադրիչների անկախության՝ հարադիրները լինում են **բուն հարադիրներ** և **հարադիր բառեր**: Բուն հարադիրները գործածական են միայն իբրև հարադիրներ, որոնցում հարադիրն ինքնուրույն արժեք չունի (**ման ածել, հուպ տալ**): Դրանց մի մասը նույնությամբ կամ տարբեր ձևերով հանդես է գալիս որպես բայահիմք և առաջ է բերում զուգահեռ ձևեր, որոնք միմյանցից տարբերվում են կա՛մ մասամբ իմաստային-քերականական հատկանիշներով, կա՛մ միայն ոճական գործառույթով՝ **թաք կենալ - թաքնվել, պոկ գալ - պոկվել** և այլն: Իսկ հարադիր բառերում որպես հարադիր հանդես են գալիս առավելապես.

**ա)** գոյականներ, որոնք մեծ մասամբ բայահիմքային են, ընդ որում, գործածվում են ուղիղ կամ թեք հոլովաձևերով և կազմում ինչպես սովորական, այնպես էլ դարձվածային (կայուն) կապակցություններ: Այդ հարադրությունների բայական բաղադրիչը առավելապես արտահայտվում է **ածել, անել // ընել, առնել, բերել, գալ, գործել** և այլ բայերով՝ **ականջ դնել, գլուխ բերել, երես թեքել, խօսք ընել, կոնակ դարձնել,**

**բ)** ածականներ - **արմատախիլ անել, պատառ - պատառ ընել, պզտիկ ըլլալ, ջարդուխորդ անել, ջարդուփշուր ըլլալ // ընել, սրտակից լինել,**

**գ)** դերանուններ (սակավադեպ) - **իրար անցնել, իրար անցնիլ, իրարու անցնիլ,**

**դ) թվականներ (սակավադեպ) - երկու անել, մեկը հազար անել, մեկ ըլլալ,**

**ե) մակբայներ - առաջ գալ, հետ գնալ, ետև նայիլ,**

**զ) ձայնարկություններ - ախ տալ, հարայ գցել, վայ տալ:**

**Հարադրավոր** բայերի բաղադրիչները համաձուլվել են, սակայն մեկ միություն են կազմում, ինչպես՝ **դուրս գալ, վազ տալ, ցույց տալ, լաց լինել, աղաչանք անել // ընել, մեջ ընկնել // իյնալ, գրել տալ, վեր ելնել // ելլել** և այլն: Հարադրավոր բայերի բաղադրիչները կապակցվում են հարադրական բարդության եղանակով: Այս բայերը համադրականներից տարբերվում են ոչ թե միայն իմաստով, այլև կառուցվածքով:

Հարադրավոր բայերը պարտադիր ունենում են բայ-բաղադրիչ՝ **թույլ տալ, մտիկ անել // ընել**, կամ կազմված են երկու բայերի հարադրությամբ՝ **տարած-հետ բերած, գրել տալ** և այլն: Հարադրական բայերը մեծ մասամբ սերում են ժողովրդական լեզվամտածողությունից<sup>15</sup>: Ըստ արտահայտած իմաստների և ձևաբանական կառուցվածքի՝ դրանք լինում են երեք տեսակի՝ **հարադրավոր, զուգադրական, պատճառական**:

Հարադրավոր բայերը կազմվում են որևէ խոսքի մասի պատկանող բառով կամ ինքնուրույն գործածություն չունեցող հիմնական ձևույթով (հարադիրով) և համադրական բայով, ինչպես՝

արևել.՝ **առաջ ընկնել, ման գալ, ոտքի կանգնել, սիրտ անել, վազ տալ, վեր ելնել** և այլն,

արևմտ.՝ **առջև իյնալ, խաղք ըլլալ, մտիկ ընել, պարապի երթալ, սիրտ ընել, վեր ելլել, տակ երթալ** և այլն:

Ի տարբերություն համադրական բայերի՝ հարադրավոր բայերը կազմված են բաղադրիչներից՝ հարադիրից ու բայից. դրանք հիմնական ու բաղկացուցիչ տարրեր են և բարդության համար հավասարաթեք են, հատկանշվում են իրենց առանձնահատուկ կողմերով, տարբեր ծավալներով ու դրսևորումներով:

Կազմության տեսանկյունից բայական բաղադրիչը, ինչպես արդեն նշեցինք, միշտ առկա է և միշտ հանդես է գալիս հարադիրից հետո: Սակայն ոչ բոլոր համադրական բայերից է հնարավոր հարադրական բայ կազմել: Սա հատուկ է երկու գրականներին

<sup>15</sup> Հմմտ. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965: Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962: Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966: Джаякян Г., Общее и армянское языкознание, Е., 1978, էջ 226:

էլ: «Հարադրավորներ կարող են կազմել այն բայերը, որոնք **իմաստապես** վերացարկվելու, նրանց հետ հարադրվելու և կամ միասնաբար մի ընդհանուր գործողության նշանակություն արտահայտելու հատկություն ու հիմքեր ունեն»<sup>16</sup>: Հարադրավոր բայերի կազմությանը մասնակցում են շուրջ 450 այդպիսի բայ<sup>17</sup>: Սակայն այս բոլոր բայերը նույն չափով չեն մասնակցում հարադրավորների կազմությանը. բայակազմական-բառակազմական գործընթացին մասնակցում են ամենաշատը 30-ը<sup>18</sup>, որոնցից էլ ամենակենսունակն են՝ **ածել, առնել,անել // ընել, գալ, գցել // ձգել, դառնալ, ընկնել // իյնալ, լինել // ըլլալ, տալ**, օրինակ՝

արևել.՝ **աչքով անել, գլխի ընկնել, դուր գալ, մտիկ անել, սիրտ տալ, վրա տալ, ցած ընկնել** և այլն,

արևմտ.՝ **ականջ տալ** (ունկնդրել)<sup>19</sup>, **ատեն տալ** (ժամանակ տալ), **աֆ ընել** (խսկց.՝ ներել), **մաքուրի առնել** (մաքրագրել), **մտիկ ընել** (լսել), **պարապի երթալ** (իզուր անցնել), **վար առնել** (իջեցնել), **վար իյնալ** (ցած ընկնել) և այլն:

Ըստ իրենց արտահայտած իմաստների՝ հարադրավոր բայերը կարելի է բաժանել երեք խմբի.

**ա)** Հարադրավոր բայեր, որոնց մեջ հարադիրն է արտահայտում գործողության հիմնական իմաստը և որոշում բայի իմաստը՝ ինչ անելը կամ ինչ լինելը, օրինակ՝

արևել.՝ **աշխատանք անել** (աշխատել), **բաց անել** (բացել), **եռ գալ** (եռալ), **խոյս տալ** (խուսափել), **միտք անել** (մտածել), **ջանք անել** (ջանալ), **վազ տալ** (վազել) և այլն,

արևմտ.՝ **գործ ընել, երդում ընել, միտք դնել, ջանք թափել, վազ անցնիլ** (խսկց.) և այլն:

**Խոյս տալ** հարադրավոր բայը արևմտահայերենում գրեթե չի կիրառվում. դրա փոխարեն գործածվում են համադրական կազմությամբ երկու այլ համարժեք բայեր՝ **խոյս տալ ( խուսանալ // խուսափիլ // խուսիլ**՝ «Իրմէ հեռու կը խուսին կոյսերն անբիծ...»<sup>20</sup> (Դ. Վ.):

<sup>16</sup> Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 354:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 80-90:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 354:

<sup>19</sup> Փակագծերում նշվում են բայերի արևելահայերեն համարժեքները կամ բացատրությունները:

<sup>20</sup> Բոլոր հղումներում պահպանում ենք հրատարակված օրինակի ուղղագրությունը:

Արևմտահայերենում **եռ գալ** բայը բառարանային **եռալ** նշանակությամբ նույնպես գործածական չէ: Սակայն փոխաբերական՝ **բորբոքվել** իմաստով հանդես է գալիս **եռեփել** համադրական ներգործական սեռի բայը, ինչպես՝ «Գյուղացիի խորշոմներուն մեջ աղվոր՝ ուր արեգակն առողջ արյուն **եռեփեց...**» (Դ. Վ.):

**բ)** Հարադրավոր բայեր, որոնց մեջ բայը պահում է իր նշանակությունը, իսկ հարադիրը, որը սովորաբար մի տեղանուն է կամ մակբայ, միայն ձևափոխում է, զորացնում կամ պարզում է բայի նշանակությունը, ինչպես՝ **Ամերիկա հայտնաբերել, ի վերին Երուսաղեմ գնալ // երթալ, դուրս գալ, մեջ գալ, վեր գալ, շուռ // ժուռ գալ** և այլն:

Կառուցվածքային այս տիպարներով արևմտահայերենում ավելի շատ հանդիպում են **առնել, դնել, ելլել** բայերով կազմված հարադրավորները, ինչպես՝ **վար դնել** (ցած դնել), **վեր ելլել** (վեր բարձրանալ), **մեջեն ելլել** (հաղթահարել), **դասին վրայեն անցնիլ, քովեն անցնիլ** և այլն: Օրինակ՝ «Վշտի հառաչով մը ան **վար դրավ** լրագիրը» (Ս. Ս.), «Պիտի կրնայի **մեջեն ելլել**» (Շ. Շ.), «Եվ սանդուղով դանդաղ **վեր կյելլեր**» (Հ. Պ.) և այլն:

**գ)** Հարադրավոր բայեր, որոնցում հարադիրն ու բայը վերաիմաստավորվում են, դառնում կայուն բառակապակցություններ (այլ կերպ ասած՝ **դարձվածքներ**<sup>21</sup>) և ի սկզբանե գործածվում են միայն փոխաբերական իմաստով, ինչպես՝ **բերանը շտկել** (խոսքը չափավորել), **գեշ ըլլալ // վրան գեշություն գալ** (վատ զգալ), **գետնին տակը անցնիլ** (գետնի տակ անցնել - 1. չքվել, 2. ամոթ զգալ), **գլխուն թափուիլ // գլուխդ թափուիլ** (գլխին թափվել), **գլուխ դարձնել** (գլուխ դնել), **գլուխը (գլխուն) կապել // գլուխը հանել** (գլխին փաթաթել) և այլն: Օրինակ՝ «Վրադ գլուխդ շտկելու տեղ **բերանդ շտկեիր**» (Հ. Պ.), «Տեղն ու տեղը եթե չմաքրեր, **վրան գեշություն պիտի գար**» (Շ. Շ.), «Մեկեն ի մէկ **գեշ կ'ըլլա, քովը գնա**» (Տ. Կ.), «**Գետնին տակն անցնին** սա

<sup>21</sup> Հայերենն առհասարակ հարուստ է բառային կայուն կառույցներով: Դարձվածքներն ավանդաբար քննվում են բառագիտության բաժնում, սակայն դրանց սահմանումն արդեն հակադրվում է բառի՝ որպես բառագիտության ուսումնասիրության առարկայի սահմանմանը: Հայտնի է, որ դարձվածքը նյութական նշանակություն ունեցող երկու և ավելի լիմաստ բառերի վերաիմաստավորված կայուն կապակցություն է: Հետևաբար դարձվածքները նախ և առաջ շարահյուսական միավորներ են: Սակայն այս դեպքում էլ առկա է նույն հակասությունը. դրանք նախադասության մեջ հանդես են գալիս որպես մեկ անդամ և ի տարբերություն սովորական բառակապակցությունների՝ ներքին վերլուծության չեն ենթարկվում, այսուհանդերձ դրանց կազմության կաղապարները քննելի են ու հետաքրքիր:

աղջիկները» (Շ. Շ.), «Հպարտ ու առանձին կը մնար՝ **գլուխ չդարձնելով** երբեք երիտասարդ շաղակրատ ու սեթևեթող խոսքերուն» (Գ. Զ.), «Ես ի՞նչ հանցանք ունիմ, որ կու գան, **գլուխս կը թափուին...**» (Հ. Պ.), «...Էֆենդին... առանց դրամօժիտի աղջիկը **գլխուս հանեց**» (Ե. Օ.) և այլն:

Ինչպես առհասարակ բառակազմության, այնպես էլ դարձվածքների կազմության մեջ արևելահայերենում և արևմտահայերենում դրսևորվում են մի շարք տարբերություններ: Վերաիմաստավորված այսպիսի հարադրությունները երկու գրականներում, ձևավորվելով լեզվական միևնույն կաղապարով, նաև նույն ձևայիններով, երբեմն հանդես են գալիս բոլորովին տարբեր իմաստներով: Այսպես, օրինակ՝ **գլուխ ելնել** դարձվածքը արևելահայերենում նշանակում է **հաջողվել**, իսկ արևմտահայերենում (**գլուխ ելլել**) այն ունի **հասկանալ, գլուխ հանել, փորձանքի հանդիպել** իմաստները, ինչպես՝ «Բայց շուտով ըմբռնեց, թե իր կրկնապատիկ ֆիզիկական ուժը այդ գյուղացիին հետ **գլուխ չպիտի կրնար ելլել**» (Շ. Շ.), «Սա գործեն **գլուխ կյնելա՞**» (Ե. Օ.):

Այստեղ նպատակահարմար ենք գտնում փոքր-ինչ հանգամանորեն քննել հատկապես արևմտահայերենի բայական դարձվածքների կառուցվածքային տիպերը:

Երկու գրականներում դարձվածքների հիմնական տարբերությունները բխում են բառիմաստային, բառապաշարային և քերականական տարբերություններից: Բնականաբար, յուրաքանչյուր տարբերակում դարձվածքները կազմվում են բառաքերականական որոշակի օրինաչափություններով: Իմաստային տեսանկյունից նախ պետք է առանձնացնել երկու հիմնական գործոններ, որոնցով պայմանավորված՝ տարբեր են արևելահայերենի և արևմտահայերենի դարձվածքները: Երկու գրականներում դարձվածքների տարբերությունները հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել դարձվածքների երկու խմբեր, ինչպես՝

- Դարձվածքներ, որոնց բաղադրիչները արևելահայերենում և արևմտահայերենում նույն կամ մոտ իմաստներ ունեն, ինչպես՝ **աշխարհի չորս հովերուն ցրված - աշխարհի չորս կողմը ցրված, աչք փակել - աչք գոցել, դուռը երեսին փակել - դուռը երեսին գոցել, ինքնիրեն հավաքել - ինքզինքը ժողվել, միսը ոսկորից պոկել - միսը եղունգեն զատել** և այլն:

▪ Գրական միայն մեկ տարբերակում գործածվող կամ առավելապես մեկ տարբերակին բնորոշ դարձվածքներ, ինչպես՝ **աչքը երկինքեն վար չառնել - Աստծո լույսին սպասել, երեսը մեռոն չէ տեսեր - երեսին մուր է քսել, լաչակը ծառի գլուխը ելլել - աշխարհով մեկ խայտառակվել, պզտիկ թողուլ // ձգել - ամոթով թողնել, քելը // գլուխը տաքնալ - գլուխը տաքանալ** և այլն:

Նույնը վերաբերում է նաև օտար բաղադրիչով կազմություններին: Դարձվածքների մեջ մեծ թիվ են կազմում օտարաբանություններով կառույցները, որոնք գործածվում են խոսակցական լեզվում: (Այս կառույցները արտալեզվական գործոնի ազդեցության հետևանք են): Արևելահայերենում (նաև բարբառներում) հանդիպում են ռուսերենով, վերջին ժամանակներում նաև անգլերենով կազմված հարադրական կիսապատճենումներ, ինչպես՝ **նադայել** անել, **լայք** անել և այլն: Այսպիսի կառույցներ կան նաև արևմտահայերենում, որում, ինչպես հայտնի է, մեծ է հատկապես թուրքերենի ազդեցությունը. «Լեզու մը ունի, **թեմամ** պլպուլ է», «Փառք Աստծո, սա տարի ձեռքս **կեյնիշ** է», «Փողոցի ծայրեն շուներուն մեջ **հավար** մը փրթավ», «Քառսուն անգամ ըսեր եմ, «չկա» մի՛ ըսեր. տան **խեր** ու **պերեքթթը** կը փախի», «Աղբյուրն է ցամքեր, **շիվան** են բռներ», «Էսքան ատեն իմ կռնակս գետին եկած չէր. աղջիկս զիս **չամուռին** մեջ խոթեց» (<.) և այլն: Բերված օրինակները հերոսների խոսքերից են և առավելապես բնորոշ են այդ ժամանակաշրջանին: Ներկայիս արևմտահայերենում հազվադեպ են թուրքերենից, պարսկերենից և կամ արաբերենից անցած հարադիրներով կառույցները, որոնք առավելաբար գործածվում են խոսակցական լեզվում: Դրանք են՝ **վազ** գալ, **խեր** ըլլալ, **շառը** ելլել, **քէֆ** ընել: Վերջին տասնամյակներում արևմտահայերենում ավելանում են նաև անգլերեն բաղադրիչով կիսապատճենումները, ինչպես՝ **չենջ** ընել, **փարքինգ** ընել, **սելֆի** ընել և այլն:

Դարձվածքների քննության հարցում հետաքրքիր դիտարկում է անում Պ. Բեդիրյանը: Նա գրում է, որ կան դարձվածքներ, «որոնք, թեև առանձին բառեր են, ունեն կապակցության, գերազանցապես նախադասության արժեք: Այդպիսի դարձվածքներից են՝ **ներողություն // ներեցեք // կներեք // կներես // ներող կլինես // ներողություն կանեք, թքած, խոսկց. մեռած, զարգանաս, արևմտի. հոգըս** և այլն»<sup>22</sup>:

<sup>22</sup> **Բեդիրյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 6:

Սկզբունքորեն նույն տեսակետն է պաշտպանում նաև Ալ. Մարգարյանը. «Կան բառեր, որոնք, վերլուծական բարդությունների պես այլաբերական-փոխաբերական իմաստով գործածվելով, նույնպես դարձված(ք)ային նշանակություն են արտահայտում, ինչպես՝ **աղվես..., ոչխար..., օձ...**»<sup>23</sup>: Թերևս այս շարքին պետք է դասել նաև **համմե, հաճիս** բառերը:

Դժվար է համաձայնել այս տեսակետին. մեր կարծիքով՝ այստեղ գործ ունենք կոչական վերաբերականների հետ: Այս մոտեցումը մի կողմից՝ հակասում է դարձվածքի բուն սահմանմանը (դարձվածքը վերաիմաստավորված կայուն **կապակցություն է**), մյուս կողմից՝ բառի հասկացությանը (բառը կարող է հանդես գալ **փոխաբերական** իմաստով):

Երկու գրականներում էլ դարձվածքի բաղադրիչ սովորաբար դառնում են առաջին հերթին բառապաշարի հիմնական բառաֆոնդին պատկանող և հաճախակի գործածվող բառերը: Այսպիսիք են, օրինակ, մարմնի մասերի անուններով կազմված դարձվածքները (**սոմատիկ դարձվածքներ**. դրանք ամենաշատն են հայերենում): Այսպես, օրինակ՝ ըստ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Դարձվածաբանական բառարան»-ի տվյալների՝ հայերենում կա **գլուխ** բառով շուրջ 750 դարձվածք, իսկ **աչք** բառով՝ ավելի քան 450, ինչպես՝

արևել.՝ **աչքի գրող** - մարդ, որին տանել չեն կարողանում, **աչքի զարկել** - նկատվել, երևալ, **ատամները սրել**- 1. պատրաստվել մի բան կորզելու, 2. պատրաստվել մեկի վրա հարձակվելու, **դնչին յուղ քսել** - կաշառել և այլն,

արևմտ.՝ **մորուքը քերել** - 1. մտածել, բայց չխոսել, 2. ծանր հուսախաբություն ապրել, **ոտքը վերցնել**- 1. ճամփա ընկնել, 2. քայլերն արագացնել, 3. ըմբոստանալ, **սիրտ հատցնել**- 1. սիրտ մաշեցնել, 2. եռանդով աշխատել և այլն:

Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքների մեծ քանակությունը թերևս բացատրվում է նրանով, որ այդ բառերի արտահայտած իմաստները առավել առարկայական են և ունեն ընդգծված պատկերավորություն ու արտահայտչականություն:

---

<sup>23</sup> **Մարգարյան Ալ.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 307:

Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում շատ են դարձվածքները, որոնք կազմված են՝

**ա) բնության երևույթներ նշանակող բառերից, ինչպես՝**

արևել.՝ **ամպերում սավառնել**- երազել, անրջել, **ջրից չոր դուրս գալ**- փորձանքից, նեղ վիճակից անվնաս ազատվել, **վարդ դառնալ**- կարմրել, **քամու բերած** - անաշխատ եղանակով ձեռք բերված և այլն,

արևմտ.՝ **գետին շահիլ**- ազդեցության ոլորտը ընդարձակել, **երկինքը գլուխը փլիլ** - մեծ փորձանքի հանդիպել, **լուիկ ըլլալ** - կարմրիլ, **քար ուտել** - չարքաշ կյանքով ապրել և այլն:

**բ) կենդանիների անուններից, ինչպես՝**

արևել.՝ **էշը ցեխից հանել**- մի կերպ դժվարություններից դուրս գալ, **շան քթից ջուր խմել**- տառապել, չարչարվել, **օձի կծած** - սաստիկ չար, անգութ և այլն,

արևմտ.՝ **կատու դառնալ** - կակղել, հնազանդվել, **շուն ծեծելով ապրիլ**- դժվարությամբ ապրուստը վաստակել, **շուն կտրիլ** - կատաղել, **մուկ կտրիլ**- սուսուփուս նստել և այլն:

**գ) կենցաղային առարկաներ անվանող բառերից, ինչպես՝**

արևել.՝ **մի բարձի ծերանալ**- միասին ապրել մինչև խոր ծերություն, **թակարդ լարել**- դավ դնել, **թախտից գցել**- իշխանությունից գրկել, տապալել և այլն,

արևմտ.՝ **շաքարը ջուր իյնալ**- անդառնալի կորուստ ունենալ, **հացը կիսել** - շահին բաժնեկից դարձնել, **սեղանը տաքնալ**- սեղանակիցների տրամադրությունը բարձրանալ, **տուն մը նստիլ**- մի տան մեջ բնակվել և այլն:

Դարձվածքները դասակարգվում են նաև ըստ **գլխավոր բաղադրիչի խոսքիմասային պատկանելության**: Սակայն միշտ պետք է նկատի ունենալ, որ դարձվածքի հիմնական բաղադրիչը և ամբողջ դարձվածքը խոսքիմասային պատկանելությամբ կարող են համընկնել կամ տարբերվել: Այսինքն՝ բայով կազմված դարձվածքը կարող է ոչ միայն բայական արժեքով հանդես գալ, այլև ածականական, կամ գոյականով կազմված դարձվածքը կարող է գոյականի, ինչպես նաև ածականի արժեք ունենալ<sup>24</sup>:

<sup>24</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ.**, Հայոց լեզու, Ա պրակ, Եր., 1980, էջ 501-502:



Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բայական կայուն կապակցությունները (դարձվածքները) գերակշռում են: Դրանք բայական արժեք ու նշանակություն ունեցող դարձվածքային արտահայտություններ են: «Բայական արտահայտությունները,– ինչպես նշում է Ա. Մուրվալյանը,– սովորաբար կազմված են լինում երկու բառից կամ բաղադրիչից, որոնցից մեկը մասամբ առանցքային բառ է, մյուսը՝ սպասարկու. մեկը լրացնում է մյուսի նշանակությունը, կամ երկուսով լրացնում են և այդպիսով դրսևորում մի ընդհանուր կամ միասնական բայական իմաստ»<sup>25</sup>: Հարկ է նշել, որ բայական արտահայտությունները ոչ միայն հոմանիշ են, այլև համարժեք են առանձին ամբողջական բայերին և կարող են ստանալ վերջիններիս բնորոշ քերականական ձևավորում կամ փոփոխություն՝ արտահայտելով իմաստային որոշ նրբերանգներ: Բայական դարձվածքային արտահայտությունների մեծ մասը կազմված է լինում երկու բաղադրիչից, ինչպես՝

արևել.՝ **բերանը բացել**- 1. խոսել, 2. ապշահար նայել, 3. ուտել, **գլխին նստեցնել**- մեկին բեռ դարձնել, **ծուխը գլխից չկտրել**- անընդհատ ծխել, **ծուռ աչքով նայել**- թշնամաբար վերաբերվել և այլն,

արևմտ.՝ **գործը գոցել**- դադարեցնել գործը, **լեզու ելլալ**- խոսել սկսել, **խօսքին ետելը կենալ**- խոսքը հարգել, **կեանքին թելը փրթիլ**- մեռնել և այլն:

Համեմատաբար սակավ են բայական չորս և ավելի բաղադրիչներով կազմված դարձվածքները (այստեղ իհարկե նկատի չունենք հաղորդակցական բնույթի արտահայտությունները, առած-ասացվածքները), ինչպես՝

արևել.՝ **մահը ականջի քամակին ձեն տալ**- մոտ լինել մահվան, **մեկի դռանը շուն լինել** - ավերապահորեն հնազանդ լինել (հաճախ խիստ աղաչական, ստորացուցիչ արտահայտություն), **մեկ թրով հողմաղացների դեմ գնալ**- առանց լուրջ նախապատրաստության փորձել մեծ դժվարության խնդիրներ լուծել և այլն,

արևմտ.՝ **շապիկին փեշը գլխուն քաշել** - որդեգրել, **շաքարը դնել կաթին մեջ** - խաբելու համար շողոքորթել, **ժամուն մոմը խելոք կատուն է գողցեր** - շատ ճարպիկ մեկի արարքն է և այլն:

<sup>25</sup> **Մուրվալյան Ա.**, Դարձվածաբանություն և բայակազմություն, Եր., 1959, էջ 72:

Բայական դարձվածային արտահայտությունները երկու գրականներում էլ ըստ կազմության բաժանվում են երկու խմբի՝ **1.** առանձին **գործածական** բառերով կազմված բայական արտահայտություններ, **2.** առանձին **անգործածական** բառերով կազմված բայական արտահայտություններ:

Առաջին խմբի մեջ մտնում են բայական այն արտահայտությունները, որոնց առաջին բաղադրիչները անուն խոսքի մասերին պատկանող բառեր են<sup>26</sup>: Դրանք կազմությամբ կարող են լինել պարզ, ածանցավոր, բարդ կամ բարդաձանցավոր: Այսպես՝

1. Անուն բաղադրիչը կազմությամբ **պարզ է.**

արևել.՝ **երկու անել** - կիսել երկու մասի, **գրոյի վերածվել** - ոչնչություն դառնալ, **իրար ուտել** - իրար հետ գժտվել, **իրենից դուրս գալ** - համբերությունից դուրս գալ, **կարմիր(ը) կապել** - տղային ամուսնացնել, **կարճ կապել** - ասելիքը, անելիքը համառոտել, **կարմիր կանչել** - հարսանիքում տղայի համար դրամ հավաքել, **մեկը երկու անել** - կրկնապատկել, շատացնել, **մոխիր դառնալ** - վառվել, ոչնչանալ, **սով ընկնել** - սով տարածվել, **ութ գծել** - հավասարակշռությունը կորցրած զիզգազան քայլել և այլն,

արևմտ.՝ **երկու ոտը չորս ընել** - ընթացքը արագացնել, **իրարու ձգել** - գժտեցնել, **իրեն քաշել** - առինքնել, հրապուրել, համախոհ դարձնել, **մազերը փուշ-փուշ ընիլ** - զարհուրել, **մաղը ծակիլ** - խարդախությունը բացահայտվել, **մաքուրի առնել** - մաքրագրել, **պաղ առնել** - մրսել, **պարապի երթալ** - փչանալ, ձախողվել, **պոչ բռնել** - հերթ կանգնել, **պոչը քաշել** - լուռ հեռանալ և այլն:

2. Անուն բաղադրիչը կազմությամբ **աձանցավոր է.**

արևել.՝ **կնության տալ** - աղջկան ամուսնացնել, **հանգստություն շնորհել** - թույլ տալ հանգստանալ և այլն,

արևմտ.՝ **դիմակը վար առնել** - դիմակագերծել, դիմակը պատռել, **խօսքը քալեցնել** - խոսքն անցկացնել, **կռնակ տալ/կռնակ ցուցնել** - թիկունք//երես դարձնել, **կռնակ ունենալ** - օգնող, հովանավոր ունենալ և այլն:

---

<sup>26</sup> Նշենք, որ ի տարբերություն գոյականների՝ դերանունները, խոսքային առանձնահատկություններով պայմանավորված, երկու գրականներում էլ ունեն կապակցելիության համեմատաբար սահմանափակ հնարավորություններ, սակայն հոլովական իմաստների միջոցով բայական դարձվածքների կազմությանը մասնակցում են մասնավորապես տրական և բացառական հոլովներով:

3. Անուն բաղադրիչը կազմությամբ **բարդ է** կամ **բարդածանցավոր**.

արևել.՝ **բերնեբերան անցնել** - տարածվել, **դես ու դեն ընկնել** - սրան-նրան դիմել, **ձեռ ու ոտ ընկնել** - իրար խառնվել և այլն,

արևմտ.՝ **զուգակշիռ հաստատել** - խիստ վերահսկողության տակ պահել, **ինքնիրմէ ելլել**- համբերությունից դուրս գալ, **մրցանիշ կոտրել** - ռեկորդ սահմանել և այլն:

Երկու գրականներում էլ գոյական բաղադրիչի բոլոր հոլովածներով կազմվում են բայական դարձվածքներ (**բայ+հոլով** /գոյական/ նաև դերանուն/ կաղապարով): Չենք կարող ասել, թե դրանք արևելահայերենում և արևմտահայերենում նույն քանակն ունեն, քանի որ արևմտահայերենը առնվազն մեկ կաղապար պակաս ունի: Այստեղ բացակայում է **բայ+ներգոյական հոլով** կաղապարը<sup>27</sup>: Մի քանի օրինակ ներկայացնենք աղյուսակով.

Աղյուսակ 1

ՀՈԼՈՎ	ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ	ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ
ուղղական	<b>թագը հափշտակել</b> - թագավորությունը մեկից խլել, <b>թևերը փռել</b> - տարածվել, տեղ գրավել, <b>ձեռքը դողալ</b> - երկնչել, վախենալ, <b>ձեռքը չորանալ</b> - անկարող դառնալ որևէ վատ բան անելու, <b>միտքը փոխել</b> - նախկին մտադրությունից ետ կանգնել, <b>պոչը քաշել</b> - լուռ հեռանալ, <b>սիրտը քարանալ</b> - անգութ դառնալ	<b>ականջը խօսիլ</b> - ականջը ձեն տալ, <b>աչքը տնկել</b> - ակնկալել, <b>ափը քերուիլ</b> - ձեռքը քոր գալ, <b>կինը ձգել</b> - ամուսնալուծվել, <b>ձեռքը երթալ</b> - կամենալ, <b>մատը բերանը հասնիլ</b> - միջին ապրուստ ունենալ, <b>ոտքը պագնել</b> - աղերսել, նվաստանալ, <b>պատիւ բռնել</b> - պատվի կանգնել
տրական	<b>լեզվին տալ</b> - անտեղի խոսել, <b>ճակատին կպցնել//խփել</b> - վիրավորանքին նույնախփի վիրավորական խոսքով պատասխանել, երեսին ճշմարտությունն ասել, <b>պարանին ցախ չղնել</b> - հավատ չընծայել, չվստահել	<b>գլուխին զարնել</b> - գլխին տալ <b>խօսքին անսալ</b> - խոսքը լսել, <b>մաքուրի առնել</b> - մաքրագրել, <b>մօրուքին խնդալ</b> - հեզնել, ծաղրել, <b>քիթին տալ</b> - երեսին ասել, խստորեն պատասխանել
բացառական	<b>աչքից գցել</b> - այլևս չսիրել, ատելի դարձնել, ուշադրությունից վրիպել, <b>բախտից գանգատվել</b> - իր կյանքից վիճակից դժգոհել, <b>մտքից հանել</b> - մոռացության տալ, <b>սրտից անել</b> - սիրտը թելադրել, ցանկանալ	<b>կօշիկէդ վեր մի՛ ելլէ</b> - ոտքդ վերմակի չափով մեկնի՛ր, <b>մտքէս անցնիլ</b> - մտքով անցնել, <b>սրտէն երթալ</b> - խղճալ, <b>քիթէն իյնալ</b> - ճշտորեն նմանվել, <b>քիթէն բռնել</b> - ստիպել, պարտադրել
գործիական	<b>գլխով հատուցել</b> - կյանքը զոհաբերել, <b>երեսով խոսել</b> - առերես՝ կեղծավորաբար,	<b>երեսով խօսիլ // երեսանց վարուիլ</b> - կեղծավորություն անել, <b>խօսքը մեղրով</b>

<sup>27</sup> Ինչպես հայտնի է, արևմտահայերենում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է **ուղղական, տրական** հոլովներով կամ **սեռական-տրական + մեջ** կառույցով:

	խոսել, <b>հայացքով ուղեկցել</b> - երկար նայել գնացողի ետևից	<b>կտրիլ</b> - խոսքը շաքարով կտրել, <b>մատով ցուցնել</b> - մատնացույց անել
ներգոյական	<b>գլխում նստեցնել</b> - լավ հասկացնել, <b>խելքում չլինել</b> - չհասկանալ, <b>խոսքը բերանում սառչել</b> - մինչև վերջ խոսքը չավարտել	-----

Գաղտնիք չէ, որ արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական տարբերությունները դրսևորվում են հատկապես թեքվող խոսքի մասերի համակարգում: Դարձվածքների կազմության ժամանակ հաճախ արևելահայերենի «**բայ+ներգոյական հոլով**» կառույցի դիմաց արևմտահայերենն ունի «**բայ+տրական հոլով+մէջ**» կառույցը (ծվում մազ փնտրել - հավկիթին մէջ մազ փնտրել), կամ՝ արևելահայերենի «**բայ+տրական հոլովի**» դիմաց՝ «**բայ+ուղղական հոլով**» (*երեսին նամուս ունենալ - երեսը մեռոն ունենալ*) կառույցը, ինչպես նաև արևելահայերենի «**բայ+բացառականի**» դիմաց՝ «**բայ+տրական**» կառույցը (*ադ բանին լուր չունիմ (Հ.) - այդ բանից լուր չունեմ*) և այլն:

Վերը քննված բոլոր դեպքերում բայական դարձվածքների առաջին բաղադրիչները նյութական նշանակությամբ առանձին գործածական բառեր են: Սակայն ինչպես արդեն նշել ենք, կան նաև բայական այնպիսի դարձվածքներ, որոնք երկու գրականներում էլ կազմված են ոչ նյութական նշանակությամբ ինքնուրույն չգործածվող բառերով: Որպես այդպիսիք հանդես են գալիս որոշ կապեր (հիմնականում հետադրություններ) ու մակբայներ: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այս դեպքում բայական դարձվածքներում հետադրությունների իմաստը մթագնած է կամ շատ թույլ է արտահայտված. այն և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում սովորաբար փոխարինվում է բաղադրիչների ընդհանուր կամ միասնական իմաստով, ինչպես՝

## Աղյուսակ 2

ԿԱՊ/ՄԱԿԲԱՅ	ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ	ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ
<b>առաջ (առաջք)</b>	<b>առաջ</b> գալ - երևալ, <b>առաջը</b> կապել-խափանել, արգելել	<b>առաջք</b> առնել - սկիզբ առնել, սկսել, <b>առաջքը</b> առնել- կանխել
<b>դեմ // դէմ</b>	<b>դեմը</b> գնալ - փոխհատուցում ստանալ արածի դիմաց, <b>դեմ</b> առնել - համառել, արգելել, անսպասելի հանդիպել	<b>դէմ ընել</b> - հանդիպեցնել, <b>դէմը առնել</b> - առաջն առնել, <b>դէմ խօսիլ</b> - դիմադրել
<b>դեպի</b>	(գործերը) <b>դեպի</b> աջ գնալ - հաջողվել	<b>դէպի</b> աղէկը դառնալ - սկսել ապաքինվել
<b>դուրս</b>	<b>դուրս</b> բերել - դժվար կացությունից	<b>դուրս</b> զարնել - վրիպել, <b>դուրս</b>

	հանել, <b>դուրս տալ</b> - անհմաստ խոսել	ծգել - վտարել, <b>դուրս</b> նետուիլ-ելնել, մերժել
<b>ես</b>	<b>ես</b> բերել - ուշքի բերել, <b>ես</b> գցել-տնտեսել, ուշացնել, պահել, մեծացնել, բերել	<b>ես</b> կեցնել- տարհամոզել, <b>ես-ես</b> քալել - դեպի վատը գնալ
<b>ներս</b>	<b>ներս</b> գցել- թաքցնել, չարտահայտվել, <b>ներս</b> ասել (բրբ.) - խոր ազդել, վիրավորել	<b>ներսը</b> բանալ - սիրտը բացել, <b>ներսէն</b> երթալ - խղճալ, <b>ներս</b> իյնալ - նիհարել, թափանցել
<b>վրա</b>	<b>վրա</b> դառնալ - օգնել, օժանդակել, <b>վրա</b> գալ - սկսել գիրանալ	<b>վրան</b> ըլլալ - հսկել, մի բանով զբաղված լինել, <b>վրան</b> առնել-իրեն վերագրել ասվածը, <b>վրան</b> գալ - զուգադիպիլ

Բայական դարձվածքային միավորները ունեն բայի քերականական բոլոր կարգերն ու հարացույցային բոլոր ձևերը, ինչպես, օրինակ՝

արևել.՝ **դարդ անել** - մտահոգվել, օր.՝ «**Դարդ մի՛ անի**, նանի՛ ջան...» (Հ. Թ.), **օր ու արև չտեսնել** - հանգիստ, ապահով կյանք չունենալ, օր.՝ «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ ցավ, **Օր ու արև չտեսանք...**» (Ավ. Իս.), **ձեռ առնել** - ծաղրել, օր.՝ «Հասկացավ կլուբի մեյմունը, որ **ձեռ է առել** իրեն վարսավիր Վասիլը» (Ե. Չ.) և այլն,

արևմտ.՝ **ձեռքը նեղ ըլլալ** - գումար չունենալ, օր.՝ «Եթե Թորիկ Ղուկասի **ձեռքը նեղ չըլլար**, այդ տարի...» (Հ.), **կոնակը գետին գալ** - հեղինակազրկվել, օր.՝ «... ադ ատեն իմ **կոնակս գետին եկած չէր**» (Հ.):

Կան բայական դարձվածքներ, որոնք կազմվում են միայն **բայի ժխտական ձևերով**, ինչպես՝

արևել.՝ **աչքով աչք չունենալ** - չսիրել, **քիթ սրբելու ժամանակ չունենալ** - խիստ զբաղված լինել, **օր արև չունենալ** - թշվառ կյանք անցկացնել և այլն,

արևմտ.՝ **աղէկ հօտ չի գայ** - մեկից կամ մի բանից կասկածելի, վտանգավոր բանի սպասել, **աչքին լույսին հետ չփոխել** - անփոխարինելի համարել, **դեռ սեւ շունի չէ հանդիպած** - անփորձ է, **մարդու երես չտեսնալ** - մենության մատնվել և այլն:

Ըստ **միաձուլության աստիճանի**՝ դարձվածքները լինում են չորս տեսակ՝ դարձվածքային սերտաճում, միասնություն, կապակցություն, արտահայտություն<sup>28</sup>:

<sup>28</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Բաղիկյան Խ.**, Դարձվածքային ոճաբանություն, Եր., 2000: **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2004:

**Սերտաճող դարձվածքների** իմաստները չեն բխում դրանք կազմող բաղադրիչների արտահայտած իմաստներից, միշտ հանդես են գալիս վերահիմաստավորված և չունեն իրենց զուգահեռ սովորական բառակապակցությունները, ինչպես՝

արևել.՝ **ականջները սրել** - մեծ ուշադրությամբ լսել, **գլուխ դնել** - 1. մեկով զբաղվել, 2. մեկի հետ վեճի կամ խոսքի բռնվել, **սիրտը փուլ գալ** - հուզվել, փղձկալ և այլն:

արևմտ.՝ **ականջը ետև ընել** – լսել, հետևել («Վեղ մը ականջդ ետև ըրե՛, թե աղջկանդ վրա ինչ կը խոսին» (<.)), **ասեղը շուք ընել** - ճար, հնար փնտրել, գտնել («Նուրիկ այլևս շաբաթ քանի մը անգամ ասեղը շուք կ'ըներ. իր աղջիկն ու փեսան տեսնելու կ'երթար» (<.)), **բան մը ընելեն բերանը մազ բուսնել** - բազմիցս ասել, խրատել («...Ըսելեն, խրատելեն բերանս մազ բուսավ» (<.)), **գերեզմանի վրա մի թիզ խոտ բուսնիլ** - երբեք, մահվանից հետո ինչքան էլ անցնի («Տերպապա՛, գերեզմանիս վրա մեկ թիզ խոտ ալ բուսնի, նորեն չեմ հաշտվիր» (<.)), **ինքն իրեն հարս ու փեսա ըլլալ**- ինքնակոչ մեջտեղ ընկնել, **կրիան ծառն է ելեր** - անհավանական բան է տեղի ունեցել («Կրիան ծառն է ելեր. Պալիկ հորքուրն է նշանվեր» (<.)), **հայուն մէջ երթալ** - Կովկաս գաղթել, **հում կաթ ուտել** - վատ դաստիարակություն ունենալ («Մարդ ըսածդ հում կաթ է կերեր» (<.)), **ոտքը կտրիլ** - այցելությունները դադարեցնել («Երեք շաբաթ է, որ Խոիկ Գևոյի ոտքը մեր դռնեն կտրեր է» (<.)) և այլն:

Այս առումով հետաքրքրական է **ականջ դնել** դարձվածքը: Արևելահայերենում այն նախ նշանակում է **լսել, հնազանդվել**, ապա՝ **գաղտնի լսել**: Արևմտահայերենում այս դարձվածքը գործածվում է **մեկի ասածին կարևորություն տալ, ականջ կախել** իմաստով (որն ըստ էության **լսել, հնազանդվել** նշանակությունից է բխում), ինչպես՝ «Իննամի՛, կ'երևա խալիսի խոսքին **ականջ ես դրեր**» (<.):

**Դարձվածքային միասնության** բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստով, իսկ դարձվածքն ամբողջապես ձեռք է բերում ընդհանրացած բովանդակություն: Այս դարձվածքները հիմնականում պատկերավոր արտահայտություններ են, որով տարբերվում են նույն կարգի ազատ կապակցություններից: Սրանք ունեն իրենց զուգահեռ ձևերը՝ սովորական կապակցությունները, որոնցում

բառերը հանդես են գալիս իրենց անվանական իմաստներով, և կապակցությունը վերահիմաստավորված չի լինում, ինչպես՝

արևել.՝ **գլուխը կախել** - 1. հանգիստ իր գործին մնալ, 2. ամաչել, **դանակ սրել** - հարձակման համար նախապատրաստական աշխատանքներ կատարել, **սիրտը ցավել**- մեկի կամ մի բանի համար ցավել, ափսոսալ, **հոնքերը կիտել** - մոայլվել, զայրանալ, **ծեռք մեկնել** - օգնել, աջակցել, **քիթը ջարդել** - մեկին խիստ վախեցնել, ծեծելով գոռոզությունը կոտրել և այլն:

արևմտ.՝ **ակռան սեղմել** - 1. զսպել, 2. նեղությանը դիմանալ, **երեսը յոթ ջուրով լվալ** - չքմեղ ձևանալ («Կ'ըսես երեսը յոթ ջուրով են լվացեր. էդ լաչակին հի՛ջ Ավետարանի հով չդիպավ» (<.)), **ծուռ աչքով նայել** - 1. անբարյացակամ վերաբերմունք ցույց տալ, 2. հետին մտքեր ունենալ («Ես ի՛նչ գիտեմ. ելավ, ձենձնեց, թե տեգրը իրեն ծուռ աչքով կը նայե» (<.)), **կռնակը առնել**- շալակել, **հագուստը վրան լավ կենալ** - սազել, **ճամբան ափ առնել** - ճանապարհ ընկնել («Կատուկ չային ճամբան ափ առավ վստահ ազնվական ձիու նմանող վագրին ու արագության» (<.)), **մէկ աղբյուրէ ջուր խմել** - համախմբվել, **ոտքը առաջ չերթար** - 1. առաջ գնալու, քայլելու կարողություն, կամք չունենալ, 2. մի տեղ գնալու ներքին ցանկություն չունենալ («Նուրիկի ոտքը առաջ չէր երթար. կ'ուզեր տեսնել նաև Մուրատը» (<.)), **պոչ բռնել** - հերթ կանգնել և այլն:

**Դարձվածքային արտահայտությունները՝** որպես կայուն կապակցություններ, իմաստային տեսակետից ոչ միայն անբաժանելի են, այլև կազմված են ինքնուրույն իմաստ ունեցող բառերից, իսկ դարձվածքի ընդհանուր իմաստը բխում է այն կազմող բաղադրիչների ընդհանուր իմաստներից: Այդպիսիք են այն դարձվածքները, որոնք դարձել են՝

**ա)** ժողովրդախոսակցական անեծքներ, մաղթանքներ, օրհնանքներ.

արևել.՝ **աչքդ բարին տեսնի, աչքերդ բռնի, Աստված բարի վայելում տա, Աստված մեկը հազար անի, Աստված տեր անի, հեր օրհնած** և այլն,

արևմտ.՝ **աչքդ կուրնա, բերանդ թքնեմ, գետինդ փորեմ, էդ պոյդ առնես ու գետին մտնես, հողդ փորեմ, լեզուդ չորնա, լեշդ շուներուն ձգեմ, մոխիրս գլուխդ տամ, սաղ-սաղ թաղեմ քեզ, վարձքդ ի կատար ըլլա, տարի գաս և այլն,**

բ) հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտություններ՝ առած-ասացվածքի արժեքով.

արևել.՝ **Աստծու պահած գառը գայլը չի ուտի, երկաթը տաք-տաք են ծեծում, կարմիր կովը իր կաշին չի փոխի, ճիպոտը իր քուլից կտրել, ճտերը աշնան են հաշվում** և այլն,

արևմտ.՝ **բարև տաս՝ բարեկենդանի կու գայ, գայլեն վախցողը ոչխար չի պահեր, գլխուն շան քարոզ կարդալ, լայն օրդ նեղ ըրէ, որ նեղ օրդ լայն ապրիս, կարմիր ձու տուր, կարմիր օր տամ** և այլն:

Ինչպես բոլոր բառերը, դարձվածքները նույնպես ունեն և՛ արտաքին նյութական կողմ, և՛ ներքին բովանդակություն. դրանք այն իմաստներն են, որոնք պատմության ընթացքում հասարակության կողմից «ամրացվել են» տվյալ բառակապակցություններին<sup>29</sup>: Դարձվածքները բառային միավորների նման **մենիմաստ են, բազմիմաստ, հոմանիշ, հականիշ և համանուն**<sup>30</sup>: Օրինակ՝

արևել.՝ **բոլոր ծաղիկները քաղել, ձախ գնալ** - 1. ապրանքը կամ որևէ բան ոչ իր իսկական նպատակին ծառայել, 2. ճիշտ ճանապարհից շեղվել, **ուղտի ականջում քնել** - անտեղյակ լինել և այլն,

արևմտ.՝ **աչքն գոցել** - չնկատելու տալ, **ձեռքէ ելլել** - 1. ձեռքից գնալ, 2. հավել, **քիթ քիթի բարեկամ դառնալ** - շատ մտերմանալ և այլն:

Ինչպես գիտենք, դարձվածային համանունների առաջացման աղբյուրներն ու ուղիները տարբեր են: Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում դրանց առաջացման հիմնական ուղին **բազմիմաստությունն է**: Ընդ որում, չմոռանանք, որ որոշիչ հոդի առկայությունը կամ բացակայությունը դարձվածքների համակարգում նույնպես իմաստատարբերակիչ դեր ունի (աչք փակել - աչքը փակել, սիրտ առնել - սիրտը առնել, սիրտ տալ - սիրտը տալ)<sup>31</sup>: Բերենք մեկ-երկու օրինակ.

<sup>29</sup> Տե՛ս **Բաղիկյան Խ.**, Դարձվածքային ոճաբանություն, Եր., 2000, էջ 61:

<sup>30</sup> Տե՛ս **Բաղիկյան Խ.**, նշվ. աշխ., նույն տեղում: **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 334:

<sup>31</sup> Դարձվածքներում հոդառությամբ պայմանավորված իմաստային տարբերություններին չենք անդրադառնում, քանի որ առկայացման կարգը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակից:



արևել.՝ **դուրս գալ** - 1. պարզվել, 2. դառնալ, ստացվել, **ձեռք(ը) ընկնել** - 1. ձեռք բերել, գտնել, 2. բռնվել, գերվել, 3. սպառնալիք՝ որևէ մեկից վրեժ լուծելու համար և այլն,

արևմտ.՝ **ակռա սրել** - 1. զինել՝ հարձակվելու կամ պաշտպանվելու նպատակով, 2 պատրաստվել վրեժի, **ձեռքը երթալ** - 1. կամենալ, 2. կարենալ, **վեր առնել** - 1. վերցնել, 2. գնահատել, **տունը կոխել** - 1. խուզարկել, 2. տուն ընդունել, **փորը քշել** - 1. փորլուծություն ունենալ, 2. խիստ վախենալ և այլն:

Բայական դարձվածքները իբրև բայական բառակազմության ուրույն տեսակ քննելիս երկու գրականներում նկատվում են որոշակի տարբերություններ և ընդհանրություններ: Որոշ դարձվածքներում բաղադրիչները կարող են փոխարինվել իմաստային նույն դաշտում գտնվող հոմանիշ բառերով, կամ նույն իմաստը արտահայտվում է նույն բառերով, բայց քերականական տարբեր կառույցներով, ինչպես՝

արևել.՝ արև **չտեսնել** - արև **չունենալ**, մութը **կոխել** - մութը **տալ**, ձայնը **փորը գցել** - ձայնը **փորը քաշել**, **բախտին** թողնել - **ճակատագրին** թողնել, **բերան** ծռել - **վիզ** ծռել, **հոնքերը** կիտել - **նոթերը** կիտել, **կյանքը** տալ - **հոգի** տալ և այլն,

արևմտ.՝ բախտի դուռը **բաց ընել** - բախտը դուռը **բերել** - բախտը դուռի **վրա գալ**, բերնէն **բառերը արքանով** հանել - բերանէն **խօսքը չուանով** հանել, կեանքին **թելը փրթիլ** - կեանքէն **ըլլալ** և այլն:

Երկու գրականներում տարբերություններն ի հայտ են գալիս նաև՝

- նույն արմատի՝ բառակազմական տարբեր կաղապարներով կիրառվելիս, ինչպես՝ **աչքով անել** - **աչուկ ընել**,
- ոչ բայական բաղադրիչի թվային տարբերությունների դեպքում, ինչպես՝ **մատների վրա հաշվել** - **մատի վրա համրուիլ**,
- հոդով և անհոդ կազմությունների դեպքում, ինչպես՝ **ճակատագրի քմահաճույքին թողնել** - **ճակատագրին ձգել**,
- բայական նույն բաղադրիչի վերլուծական և համադրական ձևերի գործածություններով, ինչպես՝ **Աստված կյանքը երկար անի // երկարի, արյունը եռ գալ // եռալ // եփվել // եռեփել**,

- քերականական կազմությունների տարբեր դրսևորումներով, ինչպես՝ **դժվարը գալ - դժվարին գալ**,
- արտահայտությունների կրճատ կամ երկար կիրառություններով, ինչպես՝ **գետնեն դուրս ելած - գետնեն ելած** և այլն:

Նշվածները դարձվածքային տարբերակներ են:

**Չուգադրական հարադրությունները** (զուգադրական բայերը), ինչպես հայտնի է, կազմվում են երկու բայական բաղադրիչներով, որոնցից յուրաքանչյուրը պահպանում է իր հարաբերական անկախ արտասանությունը (միջնադարով, որը գրավոր խոսքում հիմնականում արտահայտվում է գծիկով) և բառային ինքնուրույն շեշտը, իսկ բովանդակային առումով արտահայտում է մեկ ընդհանուր բառիմաստ: Միայն թե բաղադրության անդամները պետք է ունենան իմաստային, այսինքն՝ հոմանշային, պատճառահետևանքային, հաջորդականության, հետևողության, մասնավորման, հարաբերակցական որոշակի առնչություն:

Երկու գրականներում էլ զուգադրական բայերի բոլոր բաղադրիչները առանձին գործածական բայեր են, օրինակ՝

արևել.՝ **աղաչել-պաղատել, առնել- փախչել, ասել-խոսել, գալ-հասնել, գնալ-գալ, հագնել-կապել, մեռնել-պրծնել, քշել-տանել** և այլն,

արևմտ.՝ **առնել-տալ** - վիճել, վիճաբանել, օր.՝ «Ես այդ մարդուն հետ **առնելիք-տալիք** մը չունիմ» (Ե.). ապառնի երկրորդ), **առնել-քալել** - նեղանալ, խռովել՝ «Ինչո՞ւ սա աղջիկը **առավ- քալեց**» (Շ. Շ.), **երթալ-գալ** - գնալ-գալ՝ «Դժվար բան մը չէր էմմային պես կնոջ մը ուր **երթալ-գալը** հասկնալ» (Գ. Զ.), **երթալ-մեռնել**՝ «Ինչո՞ւ **երթալ-մեռնել**, կ'ըսեինք» (Շ. Շ.), **մտնել-ելլել** - հաղորդակցվել, շփվել՝ «...Առիթ ունեցած է այդքան ծանոթություն հաստատելու, այդքան **մտնել-ելլելու**» (Շ. Շ.), **եփել - թափել, կտրել - անցնել, խօսիլ - խնդալ** և այլն:

Արևելահայերենում և արևմտահայերենում զուգադրական բայերը ցույց են տալիս միմյանց զուգադրվող գործողությունների միասնություն՝ իբրև ժամանակային նույն պլանում իրականացվող միասնական գործընթաց: Արևմտահայ (նաև սփյուռքահայ) գրականության մեջ (առհասարակ արևմտահայ խոսքում, որը հիմնական աղբյուր է եղել այս ուսումնասիրության համար), շատ են զուգադրական բայերի թե՛ խոնարհված,

թե՛ դերբայական ձևերը, որոնք այլևս չեն ընկալվում իբրև բայեր, հեռացել են իրենց խոսքիմասային նշանակությունից և անցում են կատարել այլ խոսքի մաս: Ընդ որում, այդ անցումները սկզբնապես կատարվում են հիմնականում խոսակցական լեզվում, ինչը պայմանավորված է հենց զուգադիր բայերի կիրառության ոլորտի յուրահատկությամբ. դրանք առավելապես գործածվում են առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերում: Այսպես, օրինակ՝ **առավ-փախավ** բայական զուգադրության անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը (հանդիպում է նաև հարակատար դերբայով՝ **առած-փախած**) ձեռք է բերել **ածականական իմաստ**. նշանակում է **խաբեքա**<sup>32</sup>, օրինակ՝ «Ան ի՞նչ հեղափոխական, **առավ-փախավին** մեկն է» (Ե. Օ.): Ավելին՝ այս բառը՝ որպես ածական, ենթարկվում է փոխանվանական հոլովման՝ «Քաղաքական ժողովը, կրոնական ժողովը, ազգը գործ չունին, **առավ-փախավներով** պիտի զբաղին» (Ռ. Զ.): **Հանած-վարած** զուգադրությունը նույնպես հանդես է գալիս որպես ածական՝ **արտակարգ ճարպիկ, անպատկառ, կապը կտրած, սրիկա** նշանակություններով, ինչպես՝ «Իրեն չափ խորամանկ ու ծածկամիտ, իրեն չափ **հանած-վարած...**» (Ե. Օ.), «Ես քեզի պես **հանած-վարածները** ճեպեն կը հանիմ» (Ե. Օ.): Իսկ **ըսի-ըսավ** բառաձևերի զույգը հանդես է գալիս որպես գոյական՝ **բամբասանք, ասեկոսե** նշանակությամբ, ինչպես՝ «Բոլոր **ըսի-ըսավներեն** հեռո՛ւ մնացեք» (Ս. Փ.): Ի տարբերություն արևմտահայերենի՝ արևելահայերենում զուգադրական բայերի խոսքիմասային անցումներ գրեթե չեն նկատվում՝ բացի թերևս **բամբասանք, ասեկոսե** բառերից: Այս անցումները, սակայն, վերը նշվածների համեմատությամբ շատ վաղուց են դարձել համադրական կազմություններ:

Բայական հարադրությունների մեջ իրենց ձևաբանական արժեքով և իմաստային երանգներով առանձին խումբ են կազմում **տալ** բաղադրիչով կազմված պատճառական իմաստ արտահայտող բաղադրությունները:

Հարադրական (վերլուծական) եղանակով պատճառական բայերը կազմվում են **անորոշ դերբայ + տալ** կաղապարով, ինչպես՝ **կազմել տալ, բերել տալ, սիրել տալ** և այլն: Արևմտահայ գրականը վերլուծական եղանակով պատճառական բայեր գրեթե չի

<sup>32</sup> Տե՛ս **Սարգսյան Ա.**, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991, էջ 34:

կազմում. առավել կիրառական է պատճառականի կազմության համադրական եղանակը, որին դեռ հանգամանորեն կանդրադառնանաք բայակազմ բայերը քննելիս:

Այսպիսով, արևելահայերենի ու արևմտահայերենի բայական համակարգում հարադրական բայերը հիմնականում համընկնում են իրենց իմաստային, քերականական և բառակազմական հատկանիշներով: Սակայն քիչ չեն նաև տարբերությունները, որոնք դրսևորվում են թե՛ բառակազմության մեջ, թե՛ ձևակազմության մեջ, հետևաբար նաև խոնարհման համակարգերում: Այդ տարբերությունները պայմանավորված են և՛ լեզվական (լեզվի զարգացման տարբեր փուլերի՝ գրաբարի, միջին հայերենի ժառանգորդությամբ, տարբեր բարբառային հիմքերերով), և՛ արտալեզվական գործոններով: Հարյուրամյակներ շարունակ շփվելով այս կամ այն օտար լեզվի հետ՝ հայերենի երկու տարբերակները բանավոր հաղորդակցության ընթացքում որոշակի ազդեցություններ են կրել, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար անցել են գրական լեզուներին՝ և՛ արևելահայերենին, և՛ արևմտահայերենին:

## 1.2. Բայակերտ ածանցներ. այլ խոսքի մասերից կազմված բայեր

Ժամանակակից հայերենի համադրական բայերի կառուցվածքային տիպերը քննվում են ըստ անորոշ դերբայի կազմության (հիմք է ընդունվում անորոշ դերբայը): Բոլոր անորոշ դերբայները արևելահայերենում պարտադիր ունենում են **-ել** կամ **-ալ** վերջավորությունը, արևմտահայերենում առկա են գրաբարյան բոլոր վերջավորությունները (լծորդությունները)՝ **-ել**, **-ալ**, **-իլ**, **-ուլ** (**-ուլ** լծորդության բայերի թիվը խիստ սահմանափակ է և վիճելի. հարցին կանդրադառնանք իր տեղում): Մասնագիտական գրականության մեջ սրանք կոչվում են և՛ **վերջավորություններ**, և՛ **ածանցներ**<sup>33</sup>:

Կարծում ենք՝ սրանք **ածանցներ են**՝ ածանցական համապատասխան իմաստներով: Անգամ **-ել**, **-ալ**, **-իլ** **-ուլ** մասնիկները վերջավորություններ համարող լեզվաբանները ոչ միայն չեն ժխտում, այլև անվերապահորեն ընդունում են սրանց առաջին և ամենաէական հատկանիշը՝ **բայական խոսքիմասային ցուցիչ լինելը**: Հենց

<sup>33</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 230: **Մարգարյան Ալ.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 290: **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 240-241:

սրանց հիման վրա է, որ խոսքի մասերը դասակարգելիս նշվում է, որ ի լրումն մյուս ընդհանրությունների՝ բայն ունի նաև ձևային միասնություն: Իհարկե, կան նաև **-ել-ով**, **-ալ-ով** վերջավորվող գոյականներ (շանթարգ**ել**, ավ**ել**, անկարգ**ել**, գդ**ալ**), ածականներ (ան**ել**, անընտ**ել**, վայ**ել**), բայց սրանք հնչունախմբերի պատահական համընկնումներ են, չեն հակասում վերոհիշյալ ձևակերպմանը և զուրկ են գործողության ու ընթացքի իմաստներից: Բացի այդ, եթե ունենք գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ ածանցներ, ինչո՞ւ չենք կարող ունենալ բայակերտ ածանցներ:

**Բայական ածանցումը** տարբերվում է մյուս բոլոր խոսքի մասերին բնորոշ ածանցումից. դիրքային տեսանկյունից՝ բայական ածանցները միշտ գտնվում են խոսքի մասային ցուցիչ-ածանցից անմիջապես առաջ, և հայերենի բոլոր բայերը (և՛ ելակետային, և՛ ոչ ելակետային), անկախ բաղադրիչների քանակից, կարելի է դիտել որպես երկանդամ կազմություններ<sup>34</sup>: Այսինքն՝ բայական յուրաքանչյուր ածանցի հավելումը բառակազմական մեկ քայլ է, ինչպես՝ **ասել+վ // ասվել**, **ըսել+ու // ըսուիլ** և այլն: Հայտնի է, որ բառակազմական քայլերի քանակը որոշվում է **բառակազմական իմաստակիր բաղադրիչների քանակից հանած 1** բանաձևով, իսկ եթե բայական յուրաքանչյուր ածանցի հավելումը մեկ քայլ է, հետևաբար գործ ունենք երկանդամ կազմությունների հետ՝ անկախ վերջնական կազմության բաղադրիչների քանակից:

Երբեմն բայաձանցները համարվում են **միջաձանցներ**՝ ըստ այն հանգամանքի, որ դրանք գտնվում են բառի «մեջ»: Սակայն, մեր կարծիքով, սա համոզիչ չէ. ինչպես հայտնի է, ածանցավոր բառի տեսակը որոշվում է՝ ըստ բառակազմական վերջին քայլում ավելացած ածանցի՝ կախված այն բանից, թե վերջին քայլում ավելացածը նախաձա՞նց է, թե՞ վերջա՞ձանց: Մինչդեռ դժվար չէ նկատել, որ գոնե բայական քերականական բոլոր ածանցները **վերջաձանցներ** են, օրինակ՝ **կտրել + տ = կտրտել**, **գրել +վ = գրվել**, **կարդալ + ացն = կարդացնել** և այլն:

Կան բայեր, որոնք, բացի խոսքիմասային **ցուցիչ-ածանցներից** (**-ել** կամ **-ալ**), ունեն նաև այլ ածանցներ, ինչպես՝ **մոտենալ, տեսնել**, **թռչել**, **կտրտել**, **գրվել**, **հեռանալ**, **փախցնել** և այլն:

<sup>34</sup> Տե՛ս **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 240:

Նույն ածանցները որոշակի փոփոխություններով առկա են նաև արևմտահայ գրականում, ինչպես՝ **կորսուիլ, հոլովուիլ, խորանալ, պահուրդիլ, ճանչցնել** և այլն:

Բերված մի քանի օրինակներում տեսնում ենք, որ արևմտահայերենում անորոշ դերբայն ունի նաև **-իլ** վերջավորությունը կամ ածանցը, որը Ա. Այտընյանը համարում է «**աներեույթ** ժամանակին չորս լծորդութիւններէն մէկը»<sup>35</sup>:

Սովորաբար բայածանց ասելիս հասկանում ենք անորոշ դերբայի հիմքի ածանցները (և ոչ թե **-ել, -իլ** կամ **-ալ-ը**): Մ. Աբեղյանը ժամանակին առաջարկել է այդ ածանցները կոչել **մինչմասնիկներ** (մինչև **-ել, -ալ, -իլ** մասնիկները) կամ **միջածանցներ**<sup>36</sup>: Վերջին անվանումը հարմար չէր այն առումով, որ ընդհանուր լեզվաբանության մեջ այդպես է կոչվում մեկ այլ ածանց, որ արդեն ձուլված է բայարմատին և գրեթե չի գիտակցվում իբրև ածանց: Միջածանցները (**-լ-, -ր-, -ո-**) հայերենում շատ քիչ են, եղածներն էլ հիմնականում ժողովրդախոսակցական ու բարբառային կազմությունների (բաղադրությունների) տարրեր են՝ գերազանցապես սաստկական-զորացման նշանակությամբ: Դրանցից են՝ **-լ- (պլուկել), -ր- (թրմփալ, թրխկալ), -ո- (շառաչել)**<sup>37</sup>:

Բայածանցներին հետագայում տրվեց **ներածանցներ** անվանումը, իսկ ավելի ուշ ներածանցավոր բայերը կոչվեցին **նշույթավոր**, իսկ աններածանցները՝ **աննշույթ**<sup>38</sup>: Մեր կարծիքով՝ բայածանցների համար նախընտրելի է Մ. Աբեղյանի առաջարկած անվանումներից մեկը՝ **ներածանցներ**<sup>39</sup>:

Մեր օրերում հարցին առավել հանգամանորեն անդրադարձել է Ս. Գալստյանը: Նա ժամանակակից հայերենում գործածական բայերը բաժանում է երեք մեծ խմբերի.

**ա)** բայեր, որոնք կազմված են ինքնուրույն բառային գործածություն չունեցող բայարմատներով,

**բ)** բայեր, որոնք կազմվել և կազմվում են բայական նախատիպերից՝ նախածանցների հավելումով,

<sup>35</sup> Այտընյան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 90:

<sup>36</sup> Տե՛ս Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 92: Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 14:

<sup>37</sup> Տե՛ս Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 14:

<sup>38</sup> Տե՛ս Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 320:

<sup>39</sup> Տե՛ս Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 92: Պետրոսյան Հ., նշվ. աշխ., նույն տեղում:

գ) բայեր, որոնք կազմվել կամ կազմվում են այլ խոսքի մասերի նախատիպերից՝ բայական վերջածանցներով<sup>40</sup>:

**Ա խմբի** բայերը արդի հայերենին են անցել լեզվի պատմության վաղ շրջաններից, ուստի դրանց քննությունը մեր խնդիրը չէ (**կարդալ** բայի **կարդ-** հիմքի խոսքիմասային պատականելությունը որոշել չենք կարող): Այստեղ մի քանի բառով անդրադառնանք միայն գրաբարյան **-ու(լ)** ածանցին, որը պահպանվում է նաև արևմտահայերենում: Նշենք, որ արդեն իսկ գրաբարում **-ու(լ)** ածանցը կենսունակ չէր, և կային նույն բային զուգահեռ այլ լծորդությամբ ձևեր (**նում>նիմ, նում>չիմ** և այլ փոխանցման բայեր)<sup>41</sup> **հեծնում || հեծնիմ, ոստնում || ոստչիմ** և այլն: Արևելահայերենում **ու** լծորդության բայեր չեն պահպանվել, իսկ արևմտահայերենում մի քանիսը ժառանգորդաբար փոխանցվել են. դրանք են՝ **առնուլ // առնել, արգելուլ // արգիլել, թողուլ, զարթնուլ//զարթնիլ, զբօսնուլ//զբօսնիլ, զեղուլ//զեղանիլ, ջեռնուլ//ջեռնիլ**: Այս բայերի թիվը սահմանափակ է: Դրանցից նույնիսկ ամենագործածական **թողուլ** բայը չունի խոնարհման բոլոր ձևերը. պակասավոր բայ է: Թերևս նաև այս պատճառով շարունակվում է դրանց կիրառության մարելու միտումը, և ավելի գործուն են դառնում այս բայերի այլ լծորդով զուգահեռները:

Այս մասին Հ. Չոլաքյանի «Համազգայինի Հայագիտական հիմնարկի հայերէնի դասընթացք»-ում կարդում ենք. «*խօսքի մէջ բազմաթիւ ձեւեր ունեցող բայը կը ծագի երեք բուն ձեւերէ, որոնք կը վերջանան ԵԼ, ԻԼ եւ ԱԼ ածանցներով, որոնք լծորդութիւններ կը կոչուին: Բային բուն ձեւերը աներելոյթ (անորոշ դերբայ) կը կոչուին՝ գրել - խօսիլ - կարդալ: Հայերէնի մէջ եղած է նաեւ ՈԻԼ ածանցով աներելոյթ բայերու շարք մը, որմէ մնացած են միայն թողուլ, երդնուլ, զեղուլ, զենուլ, հեղուլ, յենուլ բայերը, որոնք իրենց խոնարհման ձեւերով ունին ոճային սահմանափակ գործածութիւն: Թողուլ բայը առօրեայ խօսակցականին ու գրականին մէջ փոխարինուած է ձգել բայով՝ աւանդ ձգել, պատգամ ձգել, ապրանք ձգել, ձգել երթալ: Թող հրամայական ձեւի փոխարէն՝ ձգէ՛: Թող նախկին հրամայականը իբրեւ վերաբերական կը գործածուի բայի ըղծական եղա-*

<sup>40</sup> Տե՛ս **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 240:

Վերջին ժամանակներում առավել կենսունակ է դարձել բայակերտման ևս մի եղանակ, այն է՝ բառակապակցության բառայնացում՝ լրիվ կամ մասնակի, ինչպես՝ **իրագել դարձնել = իրագելել, լոյս սփռել = լուսաբանել, վատ բան ասել = վատաբանել** և այլն:

նակի երրորդ դեմքին հետ' թող երթայ, թող երթան: Երդնուլ բայը փոխարինուած է երդուիլ, բայց աւելի շատ երդում ընել դարձուածքով: Հեղուլ, յենուլ, զենուլ բայերը փոխարինուած են հեղել, յենիլ եւ զենել ձեւերով»<sup>41</sup>: Ավելին, 2010 թ. Հ. Չոլաքյանը հրատարակեց «Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնարկ»-ը, որով արւմտահայերեն են անցնում դպրոցում. «Հայերէնի բայերուն բուն ձեւերը մեծամասնութեամբ ունին երեք վերջաւորութիւններ՝ *ել, իլ, ալ*: Ասոնք լծորդութիւն կը կոչուին»<sup>42</sup>:

**Բ խմբի** մեջ են մտնում այն բայերը, որոնք հիմնականում կազմվում են բայական նախատիպից և **արտ(ա)-, ներ-, վեր(ա)-** ածանցներով, ինչպես՝

արևել.՝ **արտածել, արտաձղել, ներհակել, ներքաշել, վերագրել, վերապատմել** և այլն,

արևմտ.՝ **արտայայտել, արտայայտուիլ, արտաշնչել, ներգործիլ, ներշնչել, վերարծարծել, վերսկսիլ** և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս տիպի բայերի համար երկու գրականներում էլ գործում է բառակազմական նույն օրինաչափությունը. որպես բառակազմական հիմք հանդես է գալիս անորոշ դերբայը, իսկ բառակազմական վերջին քայլում ավելանում է նախաձանցը, ինչպես՝ **պատմել - վերապատմել, կազմել - վերակազմել: Ներ-, վեր-, արտ-** ածանցները հավասարապես կենսունակ են երկու գրականներում էլ: Դրանք Էդ. Աղայանը համարում է կերպային-բառակազմական ածանցներ<sup>43</sup>: Մեր կարծիքով՝ դրանք բայական կերպային ածանցներ անվանելը այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այս ածանցները զուտ բայական չեն. կարող են ածանցել նաև գոյականներ, ինչպես՝ **արտասահման, ներգաղթ, ներուժ, վերադաս** և այլն: Մինչդեռ կերպը սոսկ բային բնորոշ քերականական կարգ է, այն էլ ոչ բոլոր բայերին է բնորոշ. բայի ելակետային ձև համարվող անորոշ դերբայը զուրկ է քերականական այս կարգից:

**Գ խմբի** բայերի մեջ, ինչպես նշվեց, մտնում են այն բայերը, որոնք այլ խոսքի մասերից են կազմված, ինչպես՝

<sup>41</sup> **Չոլաքեան Յ.**, Համագգային հայագիտական հիմնարկ, Հայերէնի դասընթացք, Բ գիրք, Ձեաբանութիւն, Հալէպ, 2000, էջ 31:

<sup>42</sup> **Չոլաքեան Յ.**, Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնարկ, գիրք Գ., Հալէպ, 2010, էջ 7:

<sup>43</sup> Տե՛ս **Աղայան Էդ.**, Ժամանակակից հայերէնի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 332-334:



1. **Գոյականներից՝** արևելահայերենում՝ **գոյական + -անալ, գոյական + -ել** կաղապարներով, իսկ արևմտահայերենում՝ **գոյական + -անալ, գոյական + -ել, գոյական + -իլ, գոյական + -նալ** կաղապարներով, ինչպես՝

արևել.՝ **ածխանալ, ամուսնանալ, աղանձել, արյունել, բանտել, բժշկել, բուրել, մայրանալ, սիրել, քարանալ, քարել** և այլն,

արևմտ.՝ **արհինիլ, բժշկել, գամել, գողնալ, լուսնալ, ծաղկիլ, ոգիանալ, ռամկանալ, փայտանալ, քարանալ** և այլն:

Հարկ է նշել, որ **գոյական + -ել** կաղապարով բաղադրված բայերը երկու գրականներում էլ հիմնականում ներգործական սեռի են և նախատիպ գոյականով ուղիղ խնդիր են վերցնում, ինչպես՝ **երգ** երգել, **պար** պարել և այլն:

Արդեն նշեցինք, որ այլ խոսքի մասերից բաղադրված բայերը քննում ենք՝ ըստ նախատիպ բառի խոսքիմասային պատկանելության: Սակայն հարկ ենք համարում հատուկ անդրադառնալ **-(ա)վոր-ել** ածանցին (արևմտահայերենում այս բայերը հանդես են գալիս **գոյական + -աւորել, գոյական + -աւորիլ, գոյական + -աւորուիլ** կաղապարներով): Ինքնին պարզ է, որ այս ածանցը բայածանց չէ և բայական ձևակազմության վրա չի ազդում, սակայն խիստ կենսունակ է բայական բառակազմության մեջ: Այն երկու գրականներում էլ նոր բայեր է կազմում ինչպես գոյականներից, այնպես էլ ածականներից: Այս ածանցի բառակազմական դերը հատկապես ընդգծվում է այն կազմություններում, որոնցում առանց բայական ցուցիչի մասը՝ որպես ինքնուրույն բառային միավոր, գործածական չէ, կամ որոնք նորագույն փոխառյալ արմատներ են: Վերջին դեպքը արևմտահայ գրականում, կապված ընդգծված մաքրամոլության հետ, գրեթե բացակայում է (պայմանավորված արևմտահայերենի՝ այլ լեզուների հետ ունեցած ներկա ազդեցություններով՝ հնարավոր է՝ մեկ-երկու օրինակ գտնվեն, սակայն մեր քննած աղբյուրներում այսպիսի բայեր չեն հանդիպել): Այսպես, արևելահայ գրականում քիչ չեն նման օրինակները, որոնք հանդիպում են հատկապես գիտատեխնիկական ու հասարակական-քաղաքական գրականության մեջ, ինչպես՝ **ակտավորել, էկրանավորել, կոմպլեկտավորել, կոմպլեքսավորել, նորմավորել, սուբսիդավորել, ֆինանսավորել** և այլն: Բերենք

գոյական + -ավորել // -աւորել, գոյական+ -աւորիլ, գոյական + -աւորուիլ կաղապարներով մի քանի օրինակ.

արևել.՝ աստիճանավորել, դասավորել, կահավորել, պատենավորել, սարքավորել, տեղավորել և այլն,

արևմտ.՝ արժեւորել, բախտաւորուիլ, բեղմնաւորուիլ, գահաւորիլ, գոյաւորել, թեւաւորուիլ և այլն<sup>44</sup>:

**2. Ածականներից՝** արևելահայերենում **ածական + -անալ, ածական + -ել** կաղապարներով, իսկ արևմտահայերենում՝ **ածական + -անալ, ածական + -նալ, ածական+ -ել, ածական + -իլ** կաղապարներով, ինչպես՝

արևել.՝ ագահանալ, ազգայնանալ, ամայանալ, ամրանալ, անարգել, ապահովանալ, ապահովել, ապշել, թարմանալ, խորանալ, կարմրել, կոպտել, պրկել և այլն,

արևմտ.՝ արթննալ, գոնճանալ, դեղնիլ, ելեկտրականանալ, երկննալ, թեթևնալ, թուլնալ, լայննալ, խենթենալ, խոնաւնալ, կակուղնալ, նեղնալ, նժդեհիլ, նիհարնալ, քիչնալ և այլն:

**3. Դերանուններից** ու սրանցից ածանցված բառերից՝ արևելահայերենում՝ **հիմք + -անալ, հիմք + -ել** կաղապարով, իսկ արևմտահայերենում՝ նաև **հիմք + -իլ** կաղապարով: Ի տարբերություն վերը նշված խոսքի մասերի՝ դերանունը, ինչպես նշել ենք, պայմանավորված խոսքիմասային առանձնահատկությամբ, բայական բառակազմության տեսանկյունից կենսունակ չէ. դերանվանական հիմքով բայերի թիվը երկու գրականներում էլ սահմանափակ է: Օրինակ՝

արևել.՝ ամբողջանալ, այլանալ, այլայլել, բոլորել, նույնանալ, ոչնչանալ և այլն,

արևմտ.՝ ամբողջանալ, այլայլիլ, բոլորել, նոյնանալ և այլն:

**4. Թվականներից՝** արևելահայերենում՝ **թվական + -անալ, հիմք + -ել** կաղապարով, իսկ արևմտահայերենում՝ **թվական + -ել** կաղապարով, ինչպես՝

արևել.՝ երկուանալ, երկրորդել, զրոյանալ, միանալ և այլն,

արևմտ.՝ երկրորդել (կրկնել), միանալ, երրորդել:

Ուշագրավ է, որ արևմտահայերենում **թվական հիմքով** և **-իլ** լծորդով բայ մեզ չի հանդիպել: Համենայն դեպս, արևմտահայերենի բառարաններում (Ա. Սարգսյան,

<sup>44</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Աղայան Էդ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 313:

Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991, «Հայոց լեզուի նոր բառարան», Պէյրուֆ, 1992), Ռ. Սաքապետոեան, Արևմտահայերէն-արևելահայերէն նոր բառարան, Երեւան, 2011) այս կաղապարով բայեր չենք գտել:

**5. Մակբայներից**<sup>45</sup> արևելահայերենում՝ **մակբայ + -անալ, մակբայ + -ել** կաղապարով, իսկ արևմտահայերենում՝ **մակբայ + -անալ, մակբայ + -ել, մակբայ + -իլ** կաղապարով, ինչպես՝

արևել.՝ **առաջանալ, արագանալ, դանդաղանալ, դանդաղել, կանխել, հաճախանալ, հաճախել, հավերժանալ, հավերժել** և այլն,

արևմտ.՝ **երագանալ, դանդաղիլ, կանխել, յառաջել, յառաջանալ, յաւերժանալ, մօտիկնալ** և այլն:

**6. Ձայնարկություն** հիմքով կազմված բայերը արևմտահայերենում և արևելահայերենում կաղապարային որևէ տարբերություն չունեն. գործուն են **ձայնարկություն + -ել, ձայնարկություն + -ալ** կաղապարները (**ավաղել // աւաղել, ափսոսել // -ալ, հաչել // -ալ, վայել** և այլն):

Այսպիսով, արևելահայերենում և արևմտահայերենում այլ խոսքի մասերից կազմված բայերը ու ինքնուրույն գործածություն չունեցող բայարմատներից բաղադրված բոլոր բայերը ունեն հետևյալ կաղապարները՝ **1.** բայարմատ+բայակերտ ածանց, **2.** գոյական + բայակերտ ածանց, **3.** գոյական + բայաձանց + բայակերտ ածանց, **4.** ածական + բայակերտ ածանց, **5.** ածական + բայաձանց + բայակերտ ածանց, **6.** թվական + բայակերտ ածանց, **7.** թվական + բայաձանց + բայակերտ ածանց, **8.** դերանուն + բայաձանց + բայակերտ ածանց, **9.** մակբայ+ բայաձանց +բայակերտ ածանց, **10.** ձայնարկություն + բայակերտ ածանց:

---

<sup>45</sup> Հայտնի է, որ հայերենում ածական (որակական) և մակբայ խոսքի մասերը շատ դեպքերում հստակ չեն տարբերակվում: Նույն պատկերն է նաև արևելահայերենի և արևմտահայերենի բացատրական բառարաններում. բազմաթիվ ածականների կամ մակբայների դիմաց նշվում է և՛ ածական, և՛ մակբայ: Ուստի կաղապարները ներկայացնելիս հաշվի ենք առել ոչ միայն «մակբայ», այլև երկարժույթ՝ «մակբայ»//«ածական» նշումով բառերը:

### 1.3. Բայական բայեր: Սեռի և կերպի ձևավորումը բայական համակարգում

Հայ քերականագիտությունը (Մ. Աբեղյան, Հ. Բարսեղյան, Ա. Աբրահամյան և այլք) տարբեր առիթներով անդրադարձել է բայածանցների ծագմանը և դրանց բայական յուրահատկություններին: Սակայն դրանք մեծ մասամբ քննվել են միայն արևելահայերենի շրջանակում<sup>46</sup>: Արևմտահայերենի բայական ածանցների (և ընդհանրապես արևմտահայերենի բայական բայերի) առանձնահատկությունների առնչությամբ կան զուտ դասագրքային դիտարկումներ, որոնք երևույթը ներկայացնում են խիստ ընդհանուր՝ առանց բայական կաղապարների մանրամասն քննության<sup>47</sup>: Ուստի աշխատանքի այս հատվածում կփորձենք զուգադրելով ներկայացնել արևելահայերենի և արևմտահայերենի բայական բայերի կառուցվածքային յուրահատկությունները՝ շեշտը դնելով հատկապես արևմտահայերենի նշված իրողությունների վրա:

Բայական համադրական բայերը արևելահայերենում և արևմտահայերենում կազմվում են երկու եղանակով՝ **նախածանցմամբ**, երբ նոր բայը բաղադրվում է **վեր-, արտ-, բաղ-, ներ-, համ-, հակ-** նախածանց(ներ) + **բայ** կաղապարով, և **վերջածանցմամբ**<sup>48</sup>, երբ նոր բայը բաղադրվում է **բայ + -ացն-, -եցն-, -ցն-, -ուց-, -տ-, -կոտ-, -կոտ-, -ատ-, -ոտ-, -կլտ-, -վ-** վերջածանցներ<sup>49</sup> կաղապար(ներ)ով:

Այժմ առանձին-առանձին ներկայացնենք ներածանցավոր բայական բայերի կազմության յուրահատկությունները:

**Բազմապատկական բայեր:** Երկու գրական լեզուներում բազմապատկական ածանցները հիմնականում նույնն են, սակայն տարբեր են դրանց կենսունակության աստիճանը (առկա են նաև հնչյունական որոշակի տարբերություններ) և իրացման կաղա-

<sup>46</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 291: **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 132-136: **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, Եր., գիրք Ա, 1962, էջ 210-270:

<sup>47</sup> Տե՛ս **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 88-93: **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985, էջ 212: **Սարգսյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 141: **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007, էջ 125-143:

<sup>48</sup> Այս մասին խոսել ենք «Այլ խոսքի մասերից կազմված բայերը» ենթագլխում:

<sup>49</sup> Վերջածանց ասելով՝ նկատի ունենք, որ սրանք ավելանում են բառակազմական վերջին քայլում:

պարները: Ուստի աշխատանքի այս հատվածում հանգամանորեն կքննենք այդ տարբերությունները:

Գրական արևմտահայերենում անհամեմատ ավելի շատ են ոչ միայն բազմապատկական բայերը, այլև բազմապատկական ածանցների տարբերակներն ու բայերի լծորդները, որոնցով պայմանավորված՝ արևմտահայերենը մի քանի կադապար ավել ունի. մասնավորապես **-կլտ-** ածանցով բայերը փոքր-ինչ շատ են: Արևելահայերենի **բոցկլտալ, կայծկլտալ, հեծկլտալ, փայլկլտալ** բայերից բացի՝ արևմտահայերենում գործածական են նաև **հատկլտալ** (հեծկլտալ), **շարժկլտիլ, տապլտկիլ** բայերը:

Բայակազմ բոլոր բայերը արևելահայերենում **ե** լծորդության են՝ բացի **-կլտ-** ածանցով կազմվածներից (**ա** լծորդության են): Արևմտահայերենում, սակայն, հայտնի պատճառներով շատ են անմիօրինակությունները նաև բազմապատկական բայերի կազմության մեջ: Այսինքն՝ բազմապատկական բայերի համար (արևելահայերենի նման) հնարավոր չէ առանձնացնել կոնկրետ բայական մեկ լծորդություն: Այդ բայերի մի մասը **ի** լծորդության է, սակայն հանդիպում են ինչպես **-կ-, -ոտ-, -կոտ-, -կրտ-** (//**-կոտ-**), **-կտ-** ածանցներով **ա** խոնարհման բազմապատկական բայեր՝ **երեժկտալ, ծմռկտալ, ծմրկտալ, կոխկոտել, հևքոտալ, ճաքրտալ, ճեղքոտուիլ**, այնպես էլ **-կլտ-** ածանցով **ի** խոնարհման բայեր՝ **շարժկլտիլ, տապլտկիլ, փայլկլտիլ**:

Այնուամենայնիվ, բազմապատկական ածանցները երկու գրականներում էլ ունեն մի կարևոր գործառույթ ևս: Դրանք **բայի կերպի** ցուցիչներ են: (Կերպը բայական կարգ է, որն արտահայտվում է բայիմաստով՝ անկատար, կատարված, կատարելի, տևական և ոչ տևական, միակատար և բազմակատար):

Գործողության կատարումը կարող է ունենալ քանակային տեսանկյուն<sup>50</sup>: Սա կարող է բայի մեջ դրսևորվել միակատարություն-բազմակատարություն, միասուբյեկտ կատարում-բազմասուբյեկտ կատարում հակադրություններով ինչպես բայակազմական-բառակազմական պլանում, այնպես էլ ձևակազմության մեջ: Այս իմաստավորումներով սովորաբար ներկայանում է **բազմապատկական կերպը**<sup>51</sup>: Սա արտահայտվում է հայերենի բայակազմության մեջ բայահիմքի կամ բայարմատի կրկնությամբ, ինչպես՝

<sup>50</sup> Տե՛ս Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 304:

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղը:

**վազվզել, փայլփլել,** կամ ածանցմամբ<sup>52</sup>: Ածանցումը արևելահայերենում բնորոշ է խիստ սահմանափակ թվով բայերի, բայց հանդես է գալիս արդեն կերպավորված բայի ողջ հարացույցում: Այս կերպածանցները հանդես են գալիս ինչպես առանձին՝ **-կ-, -տ-**, այնպես էլ այլ ածանցների հետ բաղադրված՝ **-կլտ-, -ոտ-**: Վերջինները բարբառային-ժողովրդախոսակցական ծագում ունեն: Բուն քերականական կերպը ձևակազմական պլանի երևույթ է<sup>53</sup>:

Կերպիմաստները ձևաբանորեն արտահայտվում են հիմնականում հիմքերի հակադրություններով, որոշ տարբերակումներ կատարվում են մասնիկավորումով կամ նաև մասնիկավորումով<sup>54</sup>:

Շատ մանրամասն չներկայացնելով լեզվաբանության, հատկապես հայագիտության առավել վիճահարույց խնդիրներից մեկը՝ միայն նշենք, որ կերպերի տեսությունը անվանի հայագետներից ոչ մեկի ուսմունքում էլ ավարտուն տեսք չի ստացել:

**Պատճառական բայեր:** Բայակազմ բայեր են կազմվում **-ցն-** ածանցով և դրա դիրքային տարբերակներով՝ **-ացն-, -եցն-**, որը երկու գրականներում էլ և՛ քերականական (սեռային ցուցիչ), և՛ բառակազմական ձևույթ է (բայակերտ ածանց):

Ի տարբերություն բայակազմ մյուս բայերի՝ պատճառական և կրավորական բայերը քննելիս ուղղակի անհրաժեշտ է անդրադառնալ բայասեռի քննությանը՝ որպես նաև այդ ածանցների առկայությամբ պայմանավորված քերականական իրողության<sup>55</sup>: Բայի սեռի կարգը, կամ գոնե սեռերից երկուսի քերականական ձևավորումը պետք է քննել նաև բառակազմության մակարդակում:

---

<sup>52</sup> Նշենք, որ անկատար-կատարյալ կերպային հակադրությունը միանում է մասնակի դրսևորում ունեցող միակատար-բազմակատար (և, սրա հետ կապված, ոչ երկարատև-երկարատև) հակադրությանը, որը ինչպես ցույց է տալիս անվանումը, եղելության քանակական (երկարատևության դեպքում՝ չափական) արտահայտությունն է՝ եղելության մեկ, թե մեկից ավելի անգամ կատարվելու ձևաբանական արտահայտությունը: Հետևողականության դեպքում այստեղ պետք է ընդգրկվեն նաև այսպես կոչված բազմապատկական կերպի իմաստ արտահայտող այնպիսի միջոցներ, ինչպիսիք են արմատի կրկնությունը (**վազվզեմ, գոռգոռամ** և այլն) և հատուկ ածանցների առկայությունը (**կտրատեմ, խոցոտեմ** և այլն): Սրանք առանձնացում են միայն այն պատճառով, որ այդ միջոցները անմիջականորեն չեն կապվում խոնարհման կառույցների հետ, այլ ավելի շատ բառակազմական արժեք ունեն: Այդպես է վիճակը նաև **մի անգամ – մի քանի անգամ – շատ անգամ** արտահայտությունների գործածության դեպքում, որ առաջացնում է կերպային տարբերություն, բայց դուրս է բայի խոնարհման հարացույցից:

<sup>53</sup> Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 304:

<sup>54</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>55</sup> Կարծում ենք, որ այս ածանցների քննությունը առանց բայասեռին անդրադառնալու այնքան էլ նպատակահարմար չէ. շարադրանքը թերևս կվերաձվի բայածանցների պարզ թվարկման:

**Ա. Աբրահամյանը** ևս տարբերակում է անցողականի և անանցողականի քերականական կարգերը՝ սրանց տալով սեռադասեր անվանումը<sup>56</sup>: Լեզվաբանը սեռի համար բերում է եռաստիճան համակարգ՝ սեռադասեր, սեռեր և սեռային առումներ: Սեռերը երեքն են՝ **ներգործական, կրավորական և չեզոք**: Այս համակարգում սեռային առումները երկուսն են՝ **պատճառական սեռային առում և միջին-անդրադարձ սեռային առում**: Փաստորեն **Ա. Աբրահամյանը** պատճառական բայերը ոչ թե ընդունում է որպես ներգործականներ, այլ դիտարկում է որպես առանձին սեռային առում: Իսկ միջին-անդրադարձ սեռային առման մեջ լեզվաբանը տարբերակում է նրբերանգային հետևյալ մոտավոր խմբավորումները: **Բուն անդրադարձ նշանակություն**. այս դեպքում քերականական ենթակայի մեջ իմաստով համատեղվում են տրամաբանական սուբյեկտն ու օբյեկտը, այլ կերպ ասած՝ ենթական իր վրա է կրում իր իսկ կատարած գործողությունը: Օրինակ՝ **հանվել, լվացվել, սրբվել, սանրվել**: Սրանք կրավորաձև չեզոք չեն, քանի որ ունեն համարժեք ներգործականները, ինչպես՝ **հանել, լվանալ, սրբել, սանրել**: **Փոխադարձ նշանակություն**. բայերը, ստանալով **-վ** ածանցը, արտահայտում են կողմերի գործողություն, որը կատարվում է կողմերի փոխադարձ հարաբերության պայմաններում, օրինակ՝ **համբուրվել, գրկվել, ծեծկվել, փաթաթվել, տեսնվել**: **Համատեղ գործելու նշանակություն**. այս դեպքում ներգործական սեռի բայը, **-վ** ածանց ստանալով, արտահայտում է այնպիսի գործողության գաղափար, որի իրագործումը հնարավոր է առարկաների համատեղ գործունեությամբ, օրինակ՝ **հավաքվել, ժողովվել, կուտակվել, շարվել, խմբվել**: **Հատկանշման կամ որակման նշանակություն**. կան ներգործական բայեր, որոնք, **-վ** ածանցն ընդունելով, նշում, ընդգծում են առարկայի հիմնական հատկանիշը կամ առարկայի գործառույթը, օրինակ՝ **թափվել, պատվել, կտրվել, մակարդվել, այրվել, պտտվել**: **Ընդհանուր միջին-անդրադարձ նշանակություն**. երբ **-վ** ածանցը սահմանափակում է բայի ներգործական սեռով դրսևորվող անցման գաղափարը, գործողությունը բևեռվում է հենց կատարողի վրա, սահմանափակվում ենթակայի մեջ, օրինակ՝ **գալարվել, փոխվել, փակվել, բացվել, թեքվել, շարժվել, կախվել, այլալվել, ընկճվել, հուզվել, շփոթվել, նեղվել, լարվել, գրգռվել, վրդովվել, ճնշվել**<sup>57</sup>:

<sup>56</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 515:

<sup>57</sup> Տե՛ս նույն տեղը:

Ըստ Էդ. Աղայանի՝ **-ցն/ցր-** և **-վ-** մասնիկները սեռային-քերականական ածանցներ են: Առաջինը կազմում է պատճառական բայեր և կարող է հանդես գալ **ա**, **ե** ձայնավորների հետ կամ առանց դրանց. **ա** ձայնավոր է լինում **-ալ** վերջավորությամբ և **-ան-** ածանցով բայերի հետ (կարդալ-կարդացնել, մոռանալ-մոռացնել), **ե** ձայնավորով՝ **ել** վերջավորությամբ և **-են-** ածանցով բայերի հետ (վազել-վազեցնել, մոտենալ-մոտեցնել), իսկ առանց ձայնավորի՝ **-ն-**, **-չ-** ածանցներով բաղադրյալ, ինչպես և մի քանի անկանոն ու պակասավոր բայերի հետ (**բուսնել - բուսցնել, թռչել - թռցնել, ուտել - կերցնել, իջնել-իջեցնել, զբոսցնել - զբոսեցնել, սառել - սառեցնել, դառնալ - դարձնել**): Սեռային – քերականական **-վ-** ածանցը ներգործական ու պատճառական բայերից կազմում է կրավորական սեռի, ինչպես նաև անդրադարձ կամ չեզոք բայեր: Այդ ածանցով բայեր կազմվում են **ե** խոնարհան բայերի բացարձակ հիմքից, ինչպես՝ **սիր-վ-ել, կտրտ-վ-ել, մոտեց-վ-ել** և այլն. **ա** խոնարհման բայերից, անկախ կազմությունից, կրավորաձև բայեր են կազմվում անցյալի հիմքից՝ **կարդալ-կարդաց-վ-ել, մոռանալ-մոռաց-վ-ել** և այլն: **-Ն-** ածանցով բայերը կրավորական կազմում են ներկայի հիմքից, ինչպես՝ **գտնել - գտնվել, թողնել - թողնվել, առնել - առնվել** և այլն, իսկ կրկնահիմք բայերը՝ անցյալի հիմքից, ինչպես՝ **դնել - դրեցի - դրվել, տանել - տարա - տարվել, ուտել - կերա - կերվել** և այլն<sup>58</sup>:

Արևմտահայ քերականներից **Հ. Գազանճյանը, Ջ. Մելքոնյանը, Հ. Քյուրքճյանը** ևս բայերի համար ընդունում են երեք սեռ: (Վերջինս մանրամասնորեն ներկայացնում է անցողական (պատճառական) և կրավորական բայերի կազմությունը, դրանց խոնարհման տիպերը արևմտահայերենում)<sup>59</sup>: **Եդ. Տասնապետյանը** նշում է երեք սեռ (նբ, կբ, չբ), հպանցիկ անդրադառնում է նաև անդրադարձ և փոխադարձ բայերին, ապա ավելի մանրամասն խոսում է պատճառական բայերի մասին՝ մասնավորապես ընդգծելով, որ սխալ է անցողական կոչել միայն պատճառական բայերը (նա օգտագործում է **պատճառական բայ** տերմինը), քանի որ անցողական են բոլոր այն

<sup>58</sup> Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 332-334:  
<sup>59</sup> Տե՛ս **Գազանճեան Յ.**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1929, էջ 62-63: **Գազանճեան Յ.**, Նոր քերականութիւն, Կ. Պոլիս, «Պալենց» տպարան, 1910: **Գազանճեան Յ.**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Ա եւ Բ մաս, Հնչաբանութիւն: Բառագիտութիւն: Բարձրագոյն եւ լրացուցիչ դասընթացք, Կ. Պոլիս, Գրատուն Ս. Յակոբեան, 1924: **Քյուրքճեան Յ.**, Նոր քերականութիւն հայերէն լեզուի (Արեւմտահայերէն), Միջնակարգ Ա տարի, Աթէնք, 1989, էջ 86-89, 92-94:



բայերը, որոնց ենթակայի գործողությունը անցնում է խնդրին, այսինքն՝ անցողական են նաև բոլոր ներգործականները<sup>60</sup>: **Կ. Առաքելյանն** ընդունում է չորս սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք և պատճառական<sup>61</sup>:

Բայի սեռի շուրջ եղած վիճահարույց խնդիրներից հիմնականն այն է, թե քերականական ո՞ր մակարդակում պետք է քննել այն՝ **ձևաբանական, շարահյուսական, թե՞ բառագիտական** (բառակազմական):

Լեզվաբանների մի մասը (**Մ. Ասատրյան, Ա. Աբրահամյան, Ն. Պառնասյան**) հակված է կարծելու, որ բայի սեռը ձևաբանական կարգ է. **Ն. Պառնասյանը** մասնավորապես նշում է. «Բայի սեռային տարբերությունները ժամանակակից հայերենում ձևաբանորեն դրսևորվում են ածանցման միջոցով, ինչպես նաև սկզբնաձևի (ածանցազուրկ ձևի) և ածանցված ձևի հակադրությամբ (**գրել - գրվել, բարձրանալ - բարձրացնել**)»<sup>62</sup>:

**Մ. Ասատրյանը** նույնպես բայի սեռը ներկայացնում է դրանց կազմած հակադրություններով, որոնք դրսևորվում են քերականական ձևույթների միջոցով. ինչպես՝ **գրել - գրվել, ասել - ասվել, կարդալ - կարդացվել, հասկանալ - հասկացվել**, կամ՝ **կանգնել - կանգնեցնել**, նաև՝ **կանգնեցվել, խաղալ - խաղացնել**, նաև՝ **խաղացվել**<sup>63</sup>:

Այս տեսակետն է հայտնում նաև **Գ. Զահուկյանը**: Խոսելով բայի սեռի կարգի մասին՝ նա մասնավորապես նշում է, որ լեզվաբանները սեռի խնդրառությունը հաճախ նույնացնում են խնդրառության հետ ընդհանրապես, որը ճիշտ չէ, քանի որ խնդրառությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան սեռի խնդիրը (խնդրառություն կարող են ունենալ նաև գոյականները, ածականները, կապերը, իհարկե, այն ամենից առաջ բնորոշ է բային): Պաշտպանելով բայի սեռի **ձևաբանական կարգ լինելը՝ Գ. Զահուկյանը** անդրադառնում է **սեռանիշ մասնիկներին...**<sup>64</sup>: Կառուցվածքային **d** բաղադրիչի (-վ-, -ացն-, -եցն-, -ցն-) իրացումները իրենց առկայությամբ և բացակայությամբ արտահայտում են պատճառականության կարգի տարբեր եզրեր, ընդ

<sup>60</sup> Տե՛ս **Տասնապետեան Ե.**, Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 55-58:

<sup>61</sup> Տե՛ս **Առաքելեան Կ.**, Արդի հայերէնի քերականութիւն, Գիրք Բ, Պէյրուֆ, 1998, էջ 175-195:

<sup>62</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, հ. 2, Եր., 1974, էջ 277-308:

<sup>63</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, էջ 5-204:

<sup>64</sup> Տե՛ս **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 264-272:

որում, ըստ բայարմատի բնույթի՝ երկու իրացումներից յուրաքանչյուրը կարող է մեկից ավելի իմաստ արտահայտել: **-վ-**ն հիմնականում արտահայտում է կրավորականություն (հմմտ. **սպան-վ-ել** է), բայց ըստ բայարմատի (բայահիմքի) բնույթի և կապակցելիության (դիրքային տարբերակների ձևով)՝ կարող է արտահայտել նաև անդրադարձելիություն (**համ-բուր-վ-ում** ենք). **-վ-** ստացող բայերը ներգործական բնույթի են, և, հետևաբար, **-վ-**ն արտահայտում է ներգործականություն: **-(Ա,Ե)գ(ն/ր)-** մասնիկը **-վ-**ով բնութագրվող (ներգործական) բայերի դեպքում արտահայտում է կրկնակի ներգործականություն կամ, ինչպես ասում են, պատճառականություն. ընդ որում, սա հնարավոր է ոչ բոլոր բայարմատների դեպքում (հմմտ. **հագ-ցն-ում** է, բայց չկա **սպան-եցն-ում** է): Այս բայերի դեպքում սպասարկու գործառությամբ հանդես է գալիս **տալ** բայը (հմմտ. **սպանել է տալիս**): **-(Ա,Ե)գ(ն/ր)-** մասնիկը ոչ ներգործական բայերից համապատասխանաբար կարող է կերտել ներգործականներ (հմմտ. **նստ-եմ** և **նստ-եցն-եմ**): Վերջապես, կա բայերի մի մեծ խումբ, որ կարող է **-(ա,ե)գ(ն/ր)-** մասնիկն ստանալ, բայց **-վ-** սովորաբար չի ստանում՝ բացի ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ կրավորակերպ բայերի դարձվածային գործածությունից՝ **չի քն-վ-ում** (=չեմ կարողանում քնել): Այսպիսով՝ ժամանակակից հայերենում պատճառականության կարգի եզրերը ներկայացված են հետևյալ կերպ. **ալ** (ներգործականություն)՝ **-վ-**, **-(ա,ե)գ(ն/ր)-** (չեզոք բայահիմքերին հարելու դեպքում). **ալ** (կրավորականություն)՝ **-վ-**. **ալ** (բուն պատճառականություն կամ կրկնակի անցողականություն)՝ **-(ա,ե)գ-ն/ր** - (անցողական բայահիմքերի դեպքում). **ալ** (փոխադարձություն)՝ **-վ-** (որոշ բայահիմքերի դեպքում). **ալ** (անդրադարձություն)՝ **-վ-** (որոշ բայահիմքերի դեպքում). **ալ** (չեզոքություն)՝ **-(ա,ե)գ-ն/ր-ն -վ-** չստանալու պայման<sup>65</sup>:

Վերը շարադրվածից պարզ երևում է մի բան. ժամանակակից հայերենի գրեթե բոլոր բայերը կազմում են հակադրություններ. այսինքն՝ յուրաքանչյուր ներգործական բայ ունի համապատասխան կրավորական ձև (կրավորական բայ), և յուրաքանչյուր կրավորականի համապատասխանում է մի ներգործական, ինչպես նաև յուրաքանչյուր չեզոք բայ ունի իրեն համապատասխան պատճառական ձև, որոնք էլ ունեն կրավորական ձևեր (քանի որ պատճառական կազմելիս բայը անանցողականից դառնում է

<sup>65</sup> Տե՛ս **Ջահուկեան Գ.**, Հայոց լեզուի տեսութեան եւ պատմութեան հիմնահարցեր, Պէրյուֆ, 2002, էջ 45:

անցողական, իսկ **ու>վ** ածանց ստանալով՝ անցողականից (այս դեպքում՝ պատճառականից) դառնում է անանցողական):

Հարցի այսպիսի ընթացումը առավել հեշտացնում է ուսուցումը, նաև հիմնավորում բայի սեռի ձևաբանական կարգ լինելը: Թե՛ գրական արևելահայերենում և թե՛ գրական արևմտահայերենում գրեթե բոլոր բայերը սեռային հակադրություններ են կազմում: Սեռային հակադրությունների և դրանք արտահայտող սեռանիշ մասնիկների քննության տեսակետից առավել հետաքրքրական է արևմտահայերենի բայական համակարգը: Արևելահայ գրական լեզվում մեզ հանդիպում են առավելագույնը եռաստիճան հակադրություններ (**խաղալ - խաղացնել - խաղացվել**), արևմտահայերենում՝ նաև քառաստիճան հակադրություններ. օրինակ՝ **լայնել (նբ) - լայննալ (չբ) - լայնցնել (պբ) - լայնցուիլ (կբ), թափել (նբ) - թափիլ (չբ) - թափուիլ (կբ) - թափեցնել (պբ)**:

Ներգործական սեռի բայերը պահանջում են այնպիսի լրացում, որը պատասխանում է **ի՞նչ, ո՞ւմ // որո՞ւ** հարցերին, ինչպես՝ «Էդ պիչիմ զալըմ **կնիկ** տեսած չէի» (Հ.): «Կը սիրեր **գրագիտությունը**, կը սիրեր **գեղարվեստները**, կը սիրեր **ընկերները**, կը սիրեր **ուսուցիչները**» (Ա. Ա.): «Բժիշկը քննեց **տղան, լեզուն** նայեցավ և վճռաբար ըսավ հորը. «Սա տղան միշտ պիտի խոսե» (Ե. Օ.): «Էդ կավոռշը դուշին **խասնատները** կը ներկե» (Հ.): Ներգործական բայերի համար սեռի խնդիր է ուղիղ խնդիրը: Ուղիղ խնդիրը արևմտահայերենում միշտ դրվում է ուղիղ ձևով, արևելահայերենում՝ ուղղական (իրի առման դեպքում) և տրական (անձի առման դեպքում): Միայն մեկ բայ ունենք արևելահայերենում, որի սեռի խնդիրը թե՛ իրի և թե՛ անձի առման դեպքում դրվում է ուղղական հոլովով՝ **ունեմ // ունենալ**, ինչպես՝ «Ես **գիրք** ունեմ»: «Ես **քույր** ունեմ»:

Արևմտահայերենի հոլովման հարացույցում ուղղական և հայցական հոլովները ձևականորեն չեն տարբերվում (իհարկե, չհաշված դերանվանական հոլովումը), որի պատճառով էլ հաճախ շփոթվում են ենթական և ուղիղ խնդիրը: Այստեղ էլ իմաստատարբերակիչ դեր ունի շարահասությունը. ենթական նախորդում է ստորոգյալին, ուղիղ խնդիրը՝ հաջորդում, կամ ուղիղ ձևով դրված առաջին գոյականը ենթական է. փոխենք շարահասությունը, կփոխվի իմաստը. ինչպես՝ «Տղան կսիրե **հայրը**»: Եվ՝ «Հայրը

կսիրե **տղան**»: «Մահեն ետքը, չարաշուք անձանորթներ բացած են Հայրիկին **գերեզմանը...**» (Ա. Ծ.): «Մայրիկին արշավանքը պահ մը կցնցեր **թմրածները**» (Ա. Ծ.): «Հնդիկները բռնեցին **աղջիկը**, կապեցին ու դրին երկաթուղիի գիծերուն վրա» (Ա. Ծ.):

Ինչպես արդեն նշել ենք, խոսքը վերաբերում է գոյականներին. արևմտահայերենում ևս դերանվանական հոլովումը տարբերվում է անվանականից, ուստի եթե ուղիղ խնդիրն արտահայտվում է դերանունով, ապա շարադասությունը դեր չի խաղում. տրամաբանորեն ինքնին հասկանալի կառույցն ունենում է նաև ձևաբանական արտահայտություն, ինչպես՝ «Ինչո՞ւ, ինչո՞ւ սիրեցիր **գիս...**» (Ռ. Ս.), «Վարդան սանտր ծախող փերեզակեն հազիվ **ինքզինքը** ազատեց» (Հ.):

Սակայն վերջերս արևելահայերենի համաբանությամբ կամ ազդեցությամբ<sup>66</sup> արևմտահայերենում մի քանի բայեր սկսել են ուղիղ խնդիր ընդունել անձի առումով, օր.՝ **խնայել հացը** և **խնայել մեղավորին, զարնել թռչուն** և **զարնել Աշոտին, ներել արարքը** և **ներել աշակերտին**: Այս երևույթը արևմտահայ քերականներին հիմք է տվել անելու հետևյալ դիտարկումը. «**Ազդել** եւ **յաղթել** բայերով ցոյց տուած գործողութիւնները կ'անցնին առարկաներու վրայ, բայց ոչ անմիջականօրէն, այլ հոլովակերտ մասնիկներու միջոցով, որովհետեւ գործողութիւններ կրող առարկաները կը դրուին տրական և ոչ թե հայցական հոլովով»<sup>67</sup>:

Ակնհայտ է, որ այստեղ առկա է ոչ միայն արևելահայերենի ազդեցությունը, և ասել, որ այս բայերը, թեև ունենում են կրավորական ձևեր, այնուամենայնիվ ներգործական չեն, այլ չեզոք, այնքան էլ համոզիչ չէ: Խոսքն այստեղ բազմիմաստության հիման վրա առաջացած կրկնասեռության մասին է: Այսպես՝ **խնայել** բայը **տնտեսել** իմաստով ներգործական սեռի է և պահանջում է ուղղական կամ հայցական հոլովով ուղիղ խնդիր, իսկ **խղճալ** իմաստով՝ չեզոք սեռի է և պահանջում է տրականով խնդիր: **Չարնել** բայը **սպանել** իմաստով ներգործական բայ է և պահանջում է ուղղականով կամ հայցականով ուղիղ խնդիր, իսկ **հարվածել** իմաստով չեզոք սեռի է և պահանջում է տրականով խնդիր: Նույնը վերաբերում է նաև վերոնշյալ մյուս բայերին:

Ներգործական սեռի բայերը երբեմն գործածվում են առանց ուղիղ խնդրի. սա հանդիպում է բանավոր խոսքում և այն դեպքում, երբ խոսվում է սովորության մասին,

<sup>66</sup> Տե՛ս **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 145:

<sup>67</sup> **Առաքելեան Կ.**, Արդի հայերենի քերականություն, գիրք Բ, Պէյրոս, 1998, էջ 177:

ինչպես՝ «**Ես թախտին պառկած եմ կարդում**»: «**Շատ ես խոսում**»: Այսպիսի դեպքերում բայը հանդես է գալիս ընդհանրական իմաստով:

Նույնպիսի օրինակների հանդիպում ենք նաև արևմտահայերենում, ինչպես՝ «**Մեր դրացուհին աղեկ կը պատմե**»:

Արևմտահայ քերականները (մասնավորապես Հ. Քյուրքճյանը) ուղիղ խնդիր չունեցող ներգործականները դիտում են իբրև չեզոքներ<sup>68</sup>: Այստեղ խոսքը կրկնաստեղծության մասին է:

Սեռային հակադրությունների մասին խոսելիս արդեն նշել ենք, որ արևմտահայերենում շատ են ներգործական-չեզոք հակադրություն կազմող ձևերը, որոնք, սակայն, ձևականորեն անպայման տարբերվում են իրարից. դրանց չեզոքները գրեթե միշտ **ի** լծորդության են, որոնք իրենց կազմում երբեմն ունենում են նաև կրավորականի **ու > վ** ածանցը: **Ռ. Սաքապետոյանի** բառարանում այս խմբի բայերից մեզ հանդիպել է ընդամենը երեք բայ, որ **ի** լծորդության չեն. դրանք են՝ **անձկանալ, գասրել**<sup>69</sup> և **հղանալ**: Այս երեք բայերն էլ կրկնաստեղծություն են առաջացնում իմաստափոխության հիման վրա: **Անձկանալ-ը կարոտել, նեղ դառնալ** իմաստներով չեզոք սեռի բայ է, իսկ **խիստ ցանկանալ, մաղթել** իմաստներով՝ ներգործական: **Գասրել-ը անհագորեն ուտել** իմաստով ներգործական է, իսկ **շատ ուտելուց ստամոքսը ցավել** իմաստով՝ չեզոք:

Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում ասացական ներգործական բայերը որպես սեռի խնդիր կարող են վերցնել **մասին** կապով կամ բացառականով դրված վերաբերության խնդիր, օր.՝

արևել.՝ «խոսում են Լոռու հին-հին **քաջերից**» (Հ. Թ.) կամ՝ «խոսում են Լոռու հին-հին **քաջերի մասին**»:

արևմտ.՝ «Կռո՛նկ, մեր **աշխարհեն** խապրիկ մը չունի՞ս» կամ՝ «Կռո՛նկ, մեր **աշխարհին մասին** խապրիկ մը չունի՞ս»:

Շատ հաճախ ներգործական բայերի հետ կարող է գործածվել մասնական ուղիղ խնդիր, օրինակ՝ **բաժակի ջուրը խմել և բաժակի ջրից խմել**:

<sup>68</sup> Քիւրքճեան 3., Նոր քերականութիւն հայերէն լեզուի (Արեւմտահայերէն), Միջնակարգ Ա տարի, էջ 93:  
<sup>69</sup> Նշենք, որ այս բայը գրեթե չի գործածվում, սակայն ունի բառարանային գրանցում, ուստի ներկայացրել ենք աշխատանքում:

Պատճառականությունը քերականակա՞ն իմաստ է, թե՞ սեռային առում: Ա. Աբրահամյանը ընդունում է որպես սեռային առում<sup>70</sup>: Մ. Ասատրյանը ներկայացնում է որպես քերականական իմաստ՝ ներգործական սեռի կազմում, և, բնականաբար, բերում է այնպիսի օրինակներ, որոնք հաստատում են իր ասածը, ինչպես՝ «Տնօրենը **ուսուցչին հեռացրեց** աշխատանքից» // «Տնօրենը **ուսուցչին ազատեց** աշխատանքից»<sup>71</sup>: Այսպիսի օրինակներ հանդիպում են նաև արևմտահայերենում, ինչպես՝ «Այս հաջորդական զուգադիպությունները ինձի հիշեցուցին այն **վեպերը**» (Շ. Շ.): «Շաշ Գեղամը **ամեն ինչ** կ'իմացներ անոր» (Ա. Ծ.):

Այլ է պատկերը արևմտահայերենում. արևմտահայ գրեթե բոլոր քերականները, հետևելով Ա. Այտընյանին, պատճառական բայերին տալիս են անցողական անունը, դրանք դիտում որպես առանձին սեռի բայեր: Նորօրյա քերականները (մասնավորապես Կարո Առաքելյանը), հետևելով արևելահայերենին, օգտագործում են պատճառական անվանումը, բայց նրանք նույնպես պատճառականները դիտում են որպես առանձին սեռ: Արևմտահայերենի բայական համակարգում չեզոք սեռի բայերը հիմնականում **ի** լծորդության են (և որոնք հակադրություններ կազմելու ամենաշատ հնարավորություններ ունեն (**նբ-չբ, կբ-չբ, չբ-պբ**)). օրինակ՝ **ալեծփիլ, աշխատիլ, ապաստանիլ, ապշիլ, բազմիլ, բախտավորվիլ, բաղդատվիլ, բարբառիլ, գազազիլ, գալարիլ, գայթիլ, գիտակցիլ, դարմանիլ** և այլն: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե չկան այլ լծորդության չեզոքներ. օրինակ, **ա** լծորդության բայերից են՝ **աղեկնալ, աղոտնալ, ամչնալ, բոբիկնալ** և այլն:

Հակադրությունների առաջին խումբը բնականաբար կազմում են ներգործական և կրավորական բայերը, օրինակ՝ **ազատել - ազատիլ - ազատուիլ, բարեշրջել - բարեշրջուիլ, գալարել - գալարուիլ, կարդալ - կարդացուիլ, մարել - մարիլ, վառել - վառիլ** և այլն:

Ինչպես տեսնում ենք, արևմտահայերենում բոլոր կրավորականներն **ի** լծորդության են. այս դեպքում **ի** լծորդը սեռային ցուցիչ է: Բացի լծորդությունից՝ այստեղ առկա է նաև **-վ(-ու-)** սեռային ածանցը, որը սակավ դեպքերում բացակայում է, օրինակ՝ **այրել-այրիլ, վառել - վառիլ**:

<sup>70</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Եր., 1962, էջ 525:

<sup>71</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, էջ 100-110:

Ներգործական բայերը ձևաբանորեն դրսևորված հակադրություններ են կազմում **չեզոք**, ինչպես նաև **կրավորաձև չեզոք** բայերի հետ. օրինակ՝ **նբ-չբ՝ զգեստաւորել - զգեստաւորուիլ, զարնել - զարնուիլ, զգլխել - զգլխիլ, զեղծել - զեղծուիլ, զտել - զտիլ, զուգել - զուգուիլ, ըսել - ըսուիլ, թաթաւել - թաթաւուիլ, թաթխել - թաթխուիլ, թոթափել - թոթափիլ, թեւարկել - թեւարկուիլ, խոստովանիլ - խոստովանուիլ, խոկել - խոկուիլ** և այլն:

Չեզոք բայերը ձևաբանորեն արտահայտված հակադրություններ են կազմում նաև **կրավորականների, պատճառականների**, ինչպես նաև **կրավորաձև չեզոքների** հետ. ինչպես՝ **չբ-կբ՝** ընկճիլ - ընկճուիլ, թափիլ - թափուիլ, թովիլ - թովուիլ, խեղիլ - խեղուիլ, **չբ-պբ՝** ընտելանալ - ընտելացնել, թոռմիլ - թոռմեցել, թուլնալ - թուլցնել, լմննալ - լմնցնել, խենդենալ - խենդեցնել, խոնաիլ - խոնացնել, խուլնալ - խուլցնել, **պբ-կբ՝** խաղցնել - խաղցուիլ, թուլցնել - թուլցուիլ, խոնացնել - խոնացուիլ, լայնցնել - լայնցուիլ և այլն:

Եվ այսպես, այս բոլոր օրինակները գալիս են հաստատելու, որ բայի սեռը ձևաբանորեն դրսևորվում է (սեռանիշ մասնիկներով՝ **-ցն-**, **-վ(-ու-)**, և լծորդով), հետևաբար և ձևաբանական կարգ է:

Սակայն այլ կարծիքի են այն լեզվաբանները, որոնք սեռը քննելիս շեշտը դնում են բայիմաստի վրա, քանի որ ըստ նրանց՝ բայի սեռը ոչ այլ ինչ է, եթե ոչ գործողություն կատարողի և գործողության օբյեկտի հարաբերությունը՝ արտահայտված բայի մեջ, ասել է թե՛ ենթակայի և խնդրի հարաբերությունը՝ արտահայտված բայի մեջ: Այս տեսակետն է պաշտպանում **Մ. Աբեղյանը**: Նա հիմք է ընդունում անցողականության (երբ գործողությունը ենթակայից խնդրին է անցնում) և անանցողականության (երբ գործողությունը խնդրին չի անցնում) քերականական կարգերը, և ըստ այդմ՝ տարբեր սեռերի բայերը համարում է ոչ թե նույն բայի քերականական ձևեր, այլ տարբեր բառեր (առանձին բայեր): Սա նշանակում է, որ սեռային փոփոխությունները (նրանց կազմած հակադրությունների շարքերը) դիտվում են որպես բառակազմական փոփոխություններ, **-վ-** և **-ցն-** ածանցները՝ **բառակազմական ածանցներ**, իսկ բայի սեռը՝ բառաքերականական (շարահյուսական) կարգ:

Այս տեսակետն է պաշտպանում նաև **Հ. Հարությունյանը**: Հետևելով Աբեղյանին՝ նա միաժամանակ քննում է բառային զույգերը, ինչպես՝ **սիրել** և **սիրվել**, **մոտենալ** - **մոտեցնել** - **մոտեցվել**, և փորձում է պարզել՝ դրանք լրիվ առանձին բառեր են, թե՞ ոչ: Այստեղ էլ բախվում ենք լեզվաբանության մեջ առավել վիճելի մեկ ուրիշ խնդրի՝ «**բառի պրոբլեմին**»: Հ. Հարությունյանը վկայակոչում է Գևորգ Զահուկյանի տեսակետը, նշում, որ **-վ-** և **-ցն-** ածանցները ժամանակակից հայերենում իմաստահավելական են, այսինքն՝ բայը պահպանում է իր արմատական իմաստով պայմանավորված գործողության ընթացքը, իսկ ածանցներով կատարվում է իմաստի հավելում՝ **կրավորականության, չեզոքության, պատճառականության**, որն էլ առաջացնում է ոչ միայն ձևաբանական հարացույցում անդամների կազմության փոփոխություն, այլև շարահյուսական կապակցելիության փոփոխություն («**Աշակերտը հասկացավ դասը**»: «**Դասը հասկացրին աշակերտին**»: «**Դասը հասկացվեց աշակերտին ուսուցչի կողմից**»): Այլ խոսքով՝ Հ. Հարությունյանը բայի սեռը համարում է շարահյուսական կարգ, որը պայմանավորված է բայ խոսքի մասի ներխոսքիմասային իմաստով<sup>72</sup>: Եվ քանի որ սեռը առհասարակ բայ խոսքի մասին բնորոշ հասկացություն է, անմիջականորեն վերաբերում է բային և բայակազմությանը, այսինքն՝ սեռը որոշ իմաստով նաև ձևաբանություն է (ձևակազմություն), ուստի սեռը քննվում է (և պետք է քննվի) նաև ձևաբանության մեջ՝ բայի բաժնում<sup>73</sup>:

Մեր կարծիքով՝ բայի սեռի կարգը կամ գոնե սեռերից երկուսի քերականական ձևավորումը պետք է քննել նաև բառակազմության մակարդակում: Պատճառական բայերը և կրավորական բայերը ունեն **ցուցիչ-ածանցներ**՝ արևելահայերենում միշտ, իսկ արևմտահայերենում՝ չնչին բացառություններով: Օրինակ՝ **այրել**, **բաշխել**, **մարել**, **վառել** և այլ ներգործական բայերի կրավորականները, ինչպես արդեն նշեցինք, կազմվում են ոչ թե **-վ(-ու-)** ածանցով և լծորդի փոփոխությամբ, այլ միայն լծորդի փոփոխությամբ՝ **այրել - այրիլ**, **բաշխել - բաշխիլ**, **մարել - մարիլ**, **վառել - վառիլ** և այլն:

Կրավորական սեռը երկու գրականներում էլ բայի քերականական ձևափոխությամբ առաջացած սեռ է: Կրավորական սեռի բայաձևերը ստացվում են ներգործական

<sup>72</sup> Տե՛ս **Հարությունյան Հ.**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 128-180:

<sup>73</sup> Տե՛ս **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985, էջ 219-223:



սեռի բայերից՝ **-վ(-ու-)** ածանցի միջոցով. օրինակ՝ **գրել - գրվել, սիրել - սիրվել, կարդալ - կարդացվել**: **-վ(-ու-)** ածանցը գալիս է հին հայերենից (գրաբարի **-ուած** մասնիկով բառերը, օրինակ՝ **անկուած, ասացուած, ստեղծուած. ուած = ու+ած**): Գրաբարը կրավորականության նշանակության արտահայտման համար հատուկ ածանց չուներ: Այդ նշանակությունն արտահայտվում էր բայերի վերջավորությունների կամ խոնարհիչի փոփոխությամբ:

Թե՛ արևելահայերենում և թե՛ արևմտահայերենում **-վ(-ու-)** ածանցը դրվում է **ե** լծորդությամբ բայերի անորոշ դերբայի հիմքի վրա՝ խոնարհիչից առաջ (**գրել-գրվել // գրուիլ**), **ա** լծորդության բայերի դեպքում **-վ(-ու-)** ածանցը դրվում է կատարյալի հիմքի վրա (օրինակ՝ **զգալ - զգացվել // զգացուիլ, հասկանալ // հասկնալ - հասկացվել // հասկցուիլ**):

Գրական արևելահայերենում բոլոր կրավորականները **ե** լծորդության են, իսկ գրական արևմտահայերենում՝ **ի** լծորդության: Այս դեպքում էլ լծորդները դառնում են սեռանիշ, մանավանդ արևմտահայերենում, որտեղ պատահում են նաև կրավորականներ, որոնք, ինչպես արդեն նշեցինք, իրենց հիմքում չունեն **-վ(-ու)** ածանց, օրինակ՝ **ամբոխիլ = ամբոխուիլ, այլասերել - այլասերիլ, այրել - այրիլ, զգլխել - զգլխիլ, զրկել - զրկիլ, ընդդիմահարել - ընդդիմահարիլ, ընկղմել - ընկղմիլ, թոթափել - թոթափիլ** և այլն:

Եթե ներգործական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ ենթակայից անցնում է խնդրին, ապա կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ խնդրից անցնում է ենթակային:

Կրավորական **-վ(-ու-)** ածանցը միշտ դրվում է լծորդից առաջ՝ անկախ այն բանից, թե ինչպիսի ածանցներ կան հիմքի կազմում: Միայն պատճառական բայերի մեջ պատճառական ածանցը որոշակի փոփոխության է ենթարկվում՝ **ացն>ացվ, եցն>եցվ, ցն>ցվ՝ կարդացվել, հասկացվել, զգացվել** (արևելահայերեն), **խաղցուիլ** (արևմտահայերեն):

**-վ(-ու-)**-ն կրավորականության ցուցիչն է, բայց բուն կրավորականությունը տարբերելու համար միայն **-վ(-ու-)**-ն բավական չէ, մանավանդ որ ժամանակակից հայերենի կառուցվածքում համարյա բոլոր կրավորական բայերը կարող են գործածվել նաև որ-

պես չեզոքներ, քանի որ պարզ հիմքով աններածանց ներգործականների համար լեզուն կարիք ունի չեզոք սեռի, ինչպես՝ «Երկիրը **պատսվում** է արևի շուրջը»: «Անիվը **պատսվում** է երեխայի կողմից»:

Ինչպե՞ս տարբերել: Երկու գրականներում էլ տարբերակման սկզբունքները նույնն են: Ինչպես հայտնի է, բայը կրավորական է, եթե տվյալ նախադասության ներգործականը կարելի է կազմել: Ապա՝ կրավորական սեռի դիմավոր բայերով արտահայտված ստորոգյալները պատասխանում են **ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց...** հարցերին: Եվ կրավորական կառուցվածքի նախադասության բայը պահանջում է **ումի՞ց, ո՞ւմ կողմից, ինչո՞վ, ինչի՞ց** հարցերին պատասխանող ներգործող անուղղակի խնդիր, օրինակ՝

արևել.՝ Ապակին ջարդվեց **քամուց**: Նա հալածվել էր իր **ծնողների, ընկերոջ**, հիմա էլ **կնոջ կողմից**:

արևմտ.՝ «Իմ սիրտն ավելի ու ավելի գրավվեցավ **Նարոյեն**» (Հ. Մ.), «Դեռ բոլորովին պաշարված չէր **բացերեն**» (Ե.), «Ինք խաբվեցավ **անկե**» (Ա. Ծ.):

**Ներգործող** խնդիրը կրավորական սեռի բայերի սեռի խնդիրն է, որը արևելահայերենում ձևավորվում է **գործիական** կամ **բացառական** հոլովներով (խոսակցական լեզվում՝ նաև **տրական-ով**) և **սեռական հոլով + կողմից** կառույցով:

Արևմտահայերենում ներգործող խնդիրը դրվում է **բացառական** հոլովով, ինչպես նաև **սեռական հոլով + կողմե** կառույցով: Ընդ որում, ինչպես նկատեցինք օրինակները քննելիս, արևմտահայերենում անձի առումով հանդես եկող ներգործող խնդիրը կարող է կիրառվել բացառական հոլովով, առանց **կողմե** կապի՝ գրաուլեցաւ **Նարոյեն**, խաբուլեցաւ **անկե** և այլն: Ինչպես տեսնում ենք, ասվածը հավասարապես վերաբերում է և՛ գոյականով, և՛ դերանվամբ արտահայտված ներգործող խնդիրներին:

**-Վ(-ու-)** ածանց ունեցող բայերը երկու գրականներում էլ ունեն մի շարք առանձնահատկություններ:

ա) **-Վ(-ու-)** ածանցով մի շարք բայեր արտահայտում են այնպիսի գործողություն, որ կատարում է ենթական, բայց և միաժամանակ ուղղված է հենց իրեն՝ ենթակային: Ենթական այդ բայերի դեպքում հանդես է գալիս իր կատարած գործողությունը իր վրա կրողի դերում: Այսպիսի բայերը կոչվում են **անդրադարձ** բայեր, օրինակ՝ **լվացվել**,

**հագնվել, հանվել, մաքրվել, յուղվել, շպարվել, շփվել, պաշտպանվել, պատրաստվել, տեղավորվել, սափրվել, փաթաթվել, քսվել, օծվել** և այլն<sup>74</sup>:

բ) **-վ(-ու-)** ածանցով մի քանի բայեր ցույց են տալիս երկու կամ մի քանի առարկաների այնպիսի գործողություն, որը կատարում է այդ առարկաներից յուրաքանչյուրը, բայց և միաժամանակ այդ առարկաներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես մյուս առարկայի կատարած գործողության օբյեկտ: Այսպիսի բայերը կոչվում են **փոխադարձ** բայեր, օրինակ՝ **բախվել, ծեծկվել, համբուրվել, տեսնվել, ողջագուրվել** և այլն:

գ) Հայերենում կան մի խումբ բայեր, որոնց մեջ կա **-վ(-ու-)** ածանցը, բայց լեզվում առկա չեն դրանց՝ առանց **-վ(-ու-)**-ի (պարզ ներգործականի) ձևերը: Սրանց առաջացման պատճառները տարբեր են, և հիմնականում գրաբարի կրավորաձև խոնարհման չեզոք սեռի բայեր են: Որոշ քերականներ այս բայերը կոչում են «**կրավորակերպ**» չեզոք ոչ այնքան հաջող բնորոշմամբ: Առավել հարմար է **կրավորաձև չեզոք** անվանումը (քանի որ հայտնի է, որ կերպը բայի մեկ այլ քերականական կարգ է): Դրանք են՝ **բնակվել, գանգատվել, գժվել, գունատվել, զգաղվել, զմայլվել, ընդհատվել, թաքնվել, լքվել, խաղաղվել, խելագարվել, խղճահարվել, համարձակվել, հուսահատվել, հպատակվել, հրաժարվել, ճարահատվել, մոլորվել, մոայլվել, պապանձվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, վախճանվել, վիատվել, ցնորվել, ուշաթափվել, փշաքաղվել**: Փաստորեն այս դեպքում **-վ(-ու-)** ածանցը միայն բառակազմական է, քանի որ վաղուց արդեն մթագնել է նրա քերականական իմաստը:

Կրավորաձև չեզոքները ավելի քիչ են արևմտահայերենում. ինչպես՝ **առնչուիլ, գժուիլ** և այլն:

Արևմտահայերենում և արևելահայերենում չեզոք սեռի այն բայերը, որոնք իրենց կազմում ունեն **-վ(-ու-)** ածանց և առանց դրա հանդես չեն գալիս, ներգործական (պատճառական) են կազմում **-եցն-** ածանցով, ընդ որում՝ բոլոր բայերը, **-եցն-** ածանց ստանալով, դուրս են գցում **-վ(-ու-)**-ն (բացի **գժվել** բայից, ինչպես՝ **գժվել - գժվեցնել**), ինչպես՝

<sup>74</sup> Հմմտ. **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 610-630:

արևել.՝ **գժտվել - գժտեցնել, զբաղվել - զբաղեցնել, հաշտվել - հաշտեցնել, հուսահատվել - հուսահատեցնել, մոլորվել - մոլորեցնել, սթափվել - սթափեցնել, սիրահարվել- սիրահարեցնել** և այլն,

արևմտ.՝ **յուսահատուիլ - յուսահատեցնել, զբաղիլ // զբաղուիլ - զբաղեցնել, սթափուիլ - սթափեցնել** և այլն:

Փաստորեն այսպիսի բայերը արտահայտության պլանում ունեն կրավորական բայի ձև, բայց բովանդակության պլանում չեզոք բայեր են: Այս բայերից մի քանիսը ունեն համապատասխան ներգործականներ (ինչպես՝ **լվացվել (լուացուիլ - արևմտ.) - լվանալ**), իսկ մյուսները, որոնք չունեն համապատասխան ներգործականներ, անցողական են կազմում, ինչպես արդեն նշել ենք, **-ցն-** ածանցով (**զբաղվել-զբաղեցնել**): Այս բայերը տարբեր կերպ են **-վ(-ու-)** ածանց «ձեռք բերել»: Դրանք առաջացել են՝ **ա** քերականական փոփոխությունների հետևանքով, ինչպես՝ **գանգատիմ > գանգատվել, գմայլիմ > գմայլվել, խելագարիմ > խելագարվել, բ**) զուգահեռ հանդես եկող ձևերի ձևափոխությամբ, ինչպես՝ **բնակել // բնակիմ > բնակվել, դիահարել // դիահարիմ > դիվահարվել, նմանել // նմանիմ > նմանվել, գ**) ներգործական սեռի բայերի միջին-անդրադարձ իմաստով գործածվելուց, ինչպես՝ **գժտել // գժտիմ > գժտվել, գունատեմ // գունատիմ > գունատվել, համաձայնեմ // համաձայնիմ > համաձայնվել, համարձակեմ // համարձակիմ > համարձակվել, հաջողեմ // հաջողիմ > հաջողվել, նաև՝ համարվել, պապանձվել, սթափվել, վախճանվել, վարժվել, դ**) նմանակային կազմություններ են, ինչպես՝ **գժվել, խղճահարվել, հիասթափվել, ճարահատվել, սիրահարվել, սկսվել**<sup>75</sup>:

Բացի արդեն նշվածներից (**-վ-** ածանցով չեզոքներից)՝ չեզոք բայերը սերող բայեր են: Այսինքն՝ **յուրաքանչյուր չեզոք բայ սերող հիմք է համապատասխան անցողական (պատճառական) բայի համար**:

Ե՛վ ներգործական, և՛ չեզոք բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որ կատարում է քերականական ենթական: Ներգործականները և չեզոքները իրարից տարբերվում են շարահյուսական հատկությամբ. առաջինները ուղիղ խնդիր են պահանջում, երկրորդները՝ ոչ: Հաճախ ներգործականներն ու չեզոքները իրարից միայն

<sup>75</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 646-649:

քերականորեն են տարբերվում և ոչ թե իմաստով, օրինակ՝ **ծեծել** և **ծեծ տալ**, **սրտապանդել** և **սիրտ տալ** զույգերը գրեթե նույն իմաստն են արտահայտում, բայց **ծեծել**-ը և **սրտապանդել**-ը ներգործական են, իսկ **ծեծ տալ**-ն ու **սիրտ տալ**-ը՝ չեզոք: Շատ հաճախ մենք երկու գրականներում ունենում ենք միևնույն բայի համար սեռային տարբերություններ, ինչպես՝ **հավանել** բայը: Այս մասին Հ. Աճառյանը գրում է. «Սեռի գաղափարը չափազանց պարզ է ու հասկանալի, բայց քննելով մի քիչ ավելի մանրակրկիտ կերպով, տեսնում ենք, որ նա դառնում է բավականին խառնակ և շփոթ: Օրինակ՝ **սպանվելը** կրավորական բայ է, և **ընկնել ու մեռնել**՝ չեզոք, բայց իմաստի ի՞նչ տարբերություն կա, երբ ասենք, թե »նա մարդասպանի դանակով սպանվեց, նա մարդասպանի դանակով ընկավ, նա բժշկի դեղից մեռավ»: Այդ բոլորը միևնույն գաղափարներն են և քերականական ձևեր են, որ զանազան են. մեկը կոչվում է կրավորական և մյուսը՝ չեզոք... այս պատճառով ահա շատ անգամ բայի սեռը որոշել չափազանց դժվար է լինում, որովհետև զանազան ազգեր տարբեր հայացքով են նայում խնդրին. օրինակ՝ **հավանել** բայը արևմտյան հայոց մեջ **չեզոք** է, իսկ արևելյան հայոց մեջ՝ **ներգործական** (կարագն կը հավնի՞ք – կարագը հավանո՞ւմ եք), որովհետև արևմտահայերը **հավանել** ըմբռնում են իբրև թե «**համաձայնել, հաճել**», իսկ արևելահայերը՝ «**լավ գտնել, լավ համարել, ընտրել**» նույնպես **տիրել**-ը թե՛ գրաբարի, թե՛ արևմտահայ բարբառի մեջ չեզոք է, իսկ արևելահայ բարբառի մեջ՝ **ներգործական (տիրեաց քաղաքին-քաղաքին տիրեց-քաղաքը տիրեց)**. առաջինները մտածում են իբր «**տիրանալը տեր դառնալ**», մյուսները՝ «**գրավել, նվաճել**»: Նմանապես **նայել** գաղափարը հայերենում չեզոք է, իսկ ֆրանսերենում՝ **ներգործական**»<sup>76</sup>:

Ներգործական և կրավորական բայերը ունեն խնդրառական միասնություն. առաջինները կապակցվում են ուղիղ խնդրի ուղղական-տրականի (կամ հայցականի, ընդ որում, արևմտահայերենում՝ միայն ուղղականի), իսկ երկրորդները ներգործող խնդրի բացառականի (նաև գործիականի) հետ: Չեզոք սեռի բայերը խնդրառական միասնություն չունեն. սրանք միավորվում են մի կարգի տակ այն հիմունքով, որ չեն կարող ցույց տալ ո՛չ գործողության անցում ենթակայից ուղիղ խնդրին, ո՛չ ներգործող խնդրից ենթակային:

<sup>76</sup> Տե՛ս **Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հտ. IV, Ա գիրք, Եր., 1959, էջ 72:

Երկու գրականներում էլ չեզոք սեռի մեջ մտնում են՝

- **պարզ հիմքով** բայեր, ինչպես՝

արևել.՝ **գնալ, գալ, վազել, քայլել** և այլն,

արևմտ.՝ **ակնածիլ, աճիլ, աչառել, ապշիլ** և այլն,

- **-են-, -ան-, -ն-, -չ-** ածանցներով բայեր, ինչպես՝

արևել.՝ **մոտենալ, հեռանալ, թռչել, հագնել** և այլն,

արևմտ.՝ **աղեկնալ, աղոտնալ, ամչնալ, անհուննալ, անուշնալ, թռչիլ** և այլն,

- **-ացն-, եցն-, -ցն-**ով կազմված բնածայնական բայեր (**խոռացնել, ֆշացնել**) և այլն,
- բոլոր **կրավորականները** (եթե չի գիտակցվում ներգործող խնդիրը) և առանց **-վ- (-ու)-**ի ձև չունեցող բայերը (**գլորվել // գլորուիլ, գրկախառնվել // գրկախառնուիլ**) և այլն:

Այսպես, պատճառական և կրավորական բայերը արևելահայերենում միշտ ունեն **ցուցիչ-ածանցներ**, իսկ արևմտահայերենում, ինչպես արդեն ասվել է, միշտ չէ, որ ունեն:

Պատճառական և կրավորական բայերի բառակազմական կաղապարները Գ. Զահուկյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «Ժամանակակից հայերենի սեռանիշ վերջնամասնիկները երկուսն են՝ **(ա, ե)ց(ն/ր)և վ: (Ա, Ե)ց(ն/ր)** մասնիկը փաստորեն եռաբաղադրիչ է՝ բաղկացած հետևյալ տարրերից. 1) **ց**, որ մասնիկի իմաստի բուն կրողն է և ծագմամբ նույնը կատարյալի **ց**-ի հետ, 2) **ա, ե** ձայնավորներ, որոնք նույնն են կատարյալի հիմքի **ա, ե** ձայնավորների հետ: ...Այսպիսով՝ այս մասնիկը հանդես է գալիս **դիրքային 9 տարբերակով (փոփոխակով)՝ ացն, եցն, ցն, ացր, եցր, ցր, աց, եց, ց: Վ** մասնիկը դիրքային տարբերակներ չունի, բայց նրա առկայությունը մի շարք դիրքերում կապված է հիմքային և մասնակաղապարային փոփոխությունների հետ. 1) **վ**-ն կարող է հանդիպել ինչպես նախորդ **(ա, ե)ց(ն/ր)** մասնիկի ուղեկցությամբ, այնպես էլ առանց նրա, 2) **վ**-ն դրվում է պարզ հիմքի վրա: Սեռանիշ մասնիկները ծառայում են հաղորդակցման պլանին և արտահայտում են եղելության (գործողության) հեղինակի օտարումը եղելությունից (գործողությունից)»<sup>77</sup>:

<sup>77</sup> Տե՛ս **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 265, ինչպես նաև **նույնի՝** Հայոց լեզուի տեսութան և պատմութան հիմնահարցեր, Պէյրուֆ, 2002, էջ 45:

Արևելահայերենում և արևմտահայերենում պատճառական ածանցն է **-ցն-**ը (այս ածանցը արևմտահայերենում հաճախ հանդես է գալիս **ը-**ով՝ **-ցըն-**), որը ծագում է հին հայերենի **-ուցան** ածանցից: **-Յն-** պատճառական ածանցը դրվում է կատարյալի հիմքի վրա, այստեղից էլ՝ այս ածանցի **-ացն-**, **-եցն-** տարբերակները, որոնցում **ա-**ն և **ե-**ն կատարյալի հիմքի ձայնավորներն են: Կատարյալի ցոյական հիմքում այն այսպիսի պատկեր ունի. պատճառականի **ց-**ն ավելանում է կատարյալի հիմքի **ց-**ին. մեկը դուրս է մղվում, ինչպես՝ **կարդաց+ցն+ել = կարդացցնել = կարդացնել**<sup>78</sup>: Երկու գրականներում թեև նույն ածանցն է (դիրքային տարբերակներով), սակայն բայակազմության և հատկապես ձևակազմության մեջ կան էական տարբերություններ (պայմանավորված հիմնականում հիմքակազմությամբ), որոնց կանդրադառնանք համապատասխանաբար: Որպես ընդհանուր օրինաչափություն՝ ածանցման եղանակով կազմված պատճառականները երկու գրականներում էլ առանց բացառության ունեն **հիմք+(ա/ե)ցն+ել** կաղապարը: Այլ կերպ ասած՝ բոլոր բայերը դառնում են **ե** լծորդության (**ե** լծորդն այս դեպքում նաև սեռանիշ է. բոլոր պատճառականները ներգործական սեռի են):

Երկու գրականներում էլ պատճառական բայաձևերը կազմվում են երկու եղանակով՝ **ածանցական (համադրական)** և **վերլուծական (հարադրական)**:

**Ածանցման** եղանակով արևելահայերենում և արևմտահայերենում պատճառական բայեր կազմվում են.

1. **Ներգործական բայերից**, որոնք կոչվում են բուն պատճառականներ, ինչպես՝ արևել.՝ **զգալ - զգացնել, խմել - խմեցնել, հասկանալ - հասկացնել, հիշել - հիշեցնել, ճանաչել - ճանաչեցնել, ուտել - կերցնել // ուտեցնել**<sup>79</sup> և այլն, արևմտ.՝ **խմել - խմցնել, կարդալ - կարդացնել, ճանչնալ - ճանչցնել, մոռնալ - մոռցնել, սորվիլ - սորվեցնել** և այլն:

Արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, **-ցն-** ածանցը առավել գործուն է. սա է պատճառը, որ շատ բայերի դեպքում **ա//ե-ցն-**ով կանոնավոր կազմու-

<sup>78</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 576:

<sup>79</sup> **Ա** խոնարհման աններածանց և **-ան-** սուկածանցով ներգործական բայերի **կրավորականները** և նույն բայերից սերված պատճառական բայերի **կրավորականները** երկու գրականներում էլ ձևով համընկնում են: Տարբեր են լծորդները՝ **-ել, -իլ**, ինչպես՝ արևել.՝ **խաղալ+վ→խաղացվել, խաղալ+ ացն→ խաղացնել+վ→խաղացվել** և այլն, արևմտ.՝ **ճանչնալ+ու→ճանչցուիլ, ճանչնալ+ցն→ճանչցնել+ ու→ճանչցուիլ**: Այսինքն՝ առաջանում է քերականական համանունություն, և դրանք տարբերակվում են միայն համատեքստում:

թյուններին զուգահեռ հանդիպում են նաև նույն բայերի **-ցն-**ով ձևեր՝ **խօսիլ - խօսեց- նել // խօսցնել**:

## 2. Չեզոք բայերից, ինչպես՝

արևել.՝ **աճել - աճեցնել, առողջանալ - առողջացնել, խնդալ - խնդացնել, հասնել - հասցնել, վազել - վազեցնել** և այլն,

արևմտ.՝ **թռչիլ - թռցնել, թուլնալ - թուլցնել, լմննալ - լմնցնել, հոգնիլ - հոգնեցնել, կպչիլ - կպցնել** և այլն:

Այս մասին Ա. Այտընյանը գրում է. «Չեզոք բայերէն գրեթէ ամէնքն ալ այս կերպով ներգործական կ'ըլլան. մեծցնել, չորցնել, տաքցնել, պաղեցնել, գինովցնել, ծերացնել, ծաղկեցնել»<sup>80</sup>: Այտընյանը նույնպես նշում է, որ պատճառական ածանցումը փոխում է նաև բայի սեռը՝ բոլոր բայերը ներգործական դարձնելով. «Այս **ցնել** մասնիկն որ ներգործական կ'ընէ, չեզոքն ալ ներգործական կը դարձնէ (**մեռնիլ - մեռ-ցնել**)»<sup>81</sup>: Սա գալիս է մի անգամ ևս ապացուցելու, որ բոլոր պատճառականները (բացի բնածայնական հիմք ունեցող որոշ բայերից) ներգործական սեռի են, ինչպես՝ «Շուրջը հավաքված ընկերության ցավակից արտահայտությունները ավելի **կխորացնէին** տղուն վախը» (Ա. Ծ.), «Հատկապես տարբեր անուն մը տվի իրեն, որպեսզի չարամիտ մեկը, այս էջերը կարդալով, **չհիշեցներ** իրեն իր անխղճությունները» (Ա. Ծ.), «Կեղտոտ ու պատռած շապիկին հետ այդ օրը վզին **անցուցած էր** շատ նոր ու ճերմակ օձիք մը» (Հ.):

Երկու գրականներն էլ գրաբարից ժառանգել են **-ուց-** ածանցով մի քանի բայեր, որոնք նախկինում պատճառական են եղել, իսկ հիմա ներգործական են, քանի որ չունեն համապատասխան չեզոք սեռի ձևը: Դրանք են՝ **հարուցել, հատուցել, մատուցել, ջեռուցել, սնուցել, վերցնել** և այլն: Գրաբարում այս ածանցը հանդես է եկել **-ան-** մասնիկի հետ, հետևաբար և եղել է՝ **յարուցանել, ջեռուցանել, հատուցանել, մատուցանել, վերցուցանել**:

Արևելահայերենում և արևմտահայերենում **-ցն(ցուց)-** բայաձևանցը, որպես կանոն, դրվում է բայերի անցյալի հիմքերի վրա: Եթե բայի անցյալի հիմքը **արմատական** է, պատճառական բայաձևանցը հանդես է գալիս առանց **ա** և **ե** ձայնավորների, ինչպես՝

<sup>80</sup> **Այտընեան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 90:

<sup>81</sup> Նույն տեղում:



արևել.՝ **թռչել - թռ+ցն+ել, հազնել - հազ+ցն+ել, հասնել - հաս+ցն+ել, փախչել - փախ+ցն+ել** և այլն,

արևմտ.՝ **հազնել - հազ+ցուց+ել, հանգչել - հանգ+ցուց+ել, հասնել - հաս+ցուց+ել, փախչիլ - փախ+ցուց+ել, մեռնիլ - մեռ+ցն+ել, մտնել - մտ+ցն+ել** և այլն:

Արևելահայերենի **դիպչել** բայի դիմաց արևմտահայերենն ունի զուգահեռ տարբերակներ՝ **դպչել // դպիլ // դիպիլ // դպնալ** ձևերը, որոնց պատճառականը, ըստ արևմտահայերենի բառարանների, ունիմեկ ձև՝ **դպցնել - դպ+ցն+ել**<sup>82</sup>:

Արևելահայերենում բացառություն են **իջնել** և **սառչել** սոսկաձանցավոր բայերը, որոնց անցյալի հիմքերը թեև արմատական են, սակայն պատճառական են կազմում - **եցն-ով՝ իջ+եցն+ել, սառ+եցն+ել**: Արևմտահայերենում **իջնել** բայը չի շեղվում ընդհանուր օրինաչափությունից, իսկ **սառչել** բայը հանդես է գալիս **սառիլ** աններածանց տարբերակով, պատճառականն էլ համապատասխանաբար կազմում են՝ **իջեցնել, սառեցնել**: Արևմտահայերենում **փրթիլ** բայի պատճառականը անկանոն է՝ **փր+ցն+ել**:

Այն բայերը, որոնք **ե, ա** լծորդության զուգահեռ ձևեր ունեն, և որոնցում **-ան-, -են-** սոսկաձանցները այնքան էլ ձևական չեն և տևական կերպի<sup>83</sup> իմաստ են արտահայտում<sup>84</sup>, համապատասխանաբար զուգահեռ ձևեր ունեն նաև պատճառական կազմելիս. այսպես՝ **դալարել // դալարանալ - դալարեցնել // դալարացնել, դանդաղել // դանդաղանալ - դանդաղեցնել // դանդաղացնել, կանաչել // կանաչանալ - կանաչեցնել // կանաչացնել, ցամաքել // ցամաքանալ -ցամաքեցնել // ցամաքացնել** և այլն:

<sup>82</sup> Տե՛ս **Սարգսյան Ա.**, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991, էջ 79: **Սաքապետոեան Ռ.**, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Եր., 2011, էջ 85:

<sup>83</sup> Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Եր., 2004, էջ 367:

<sup>84</sup> Հայտնի է, որ **-ան-, -են-** մասնիկների իմաստային-ձևակազմական ուսումնասիրությունը արևելահայերենում և արևմտահայերենում բացահայտում է մի շարք բայերի դեպքում **-ան-ով, -են-ով** և առանց դրանց արտահայտված ձևերի տարբերություն՝ **1) լող-(ամ) / լող-ան-(ամ), ցոլ-(ամ) / ցոլ-ան-(ամ), այլև ծխ-(ամ) / ծխ-ան-(ամ), կաղ-(ամ) / կաղ-ան-(ամ), 2) ուզ-(եմ) / ուզ-են-(ամ), արժ-(եմ) / արժ-են-(ամ), գիտ-(եմ) / գիտ-են-(ամ), ուն-(եմ) / ուն-են-(ամ)**: Նկատելի է, որ **-ան** տարբերիչ ունեցող բոլոր բայերի և **ուզ-(եմ) / ուզ-են-(ամ)** բայի դեպքում զույգ ձևերի առաջին և երկրորդ խմբերի տարբերությունն առաջ է բերում նաև խոնարհման մասնակաղապարային տարբերություններ, ինչպես՝ **լողամ - լողացի և լողանամ - լողացա, ուզեմ - ուզեցի և ուզենամ - ուզեցա, բայց արժեմ - արժենամ - արժեցա (չկա արժեցի), գիտեմ - գիտենամ - գիտեցա (չկա գիտեցի), ունեմ - ունենամ - ունեցա (չկա ունեցի)**:

-Ացն- ածանցը բայական փոխառությունների ու կիսապատճենումների մեջ ունի **բառակազմական** արժեք, քանի որ այդ բայերը առանց **-ացն-** ածանցի չեն գործածվում, հետևաբար և **բայակազմ** համարվել չեն կարող: Դրանցից են՝ **էվակուացնել, լիկվիդացնել, կոմբինացնել, մոբիլիզացնել, օկուպացնել** և այլն: Այս կազմությունները, ինչպես արդեն նշել ենք, բնորոշ են միայն արևելահայերենին:

Գրաբարից փոխանցված մի շարք բայերում պատճառական բայաձևանցը քարացել է, և այդ բայերը արդեն չեն գիտակցվում իբրև պատճառականներ. դրանցից են՝ **զեկուցել, ծանուցել, կառուցել, հատուցել, հարուցել, մատուցել** և այլն: Այս շարքի մեջ է մտնում նաև **փլուզել** բայը: Արևմտահայերենում, բացի վերը նշվածներից, կան նաև **ընկլուզանել, ապացուցանել** բայերը: Վերջիններս հնացած են, և առավել հաճախ կիրառվում են սրանց պարզ ձևերը՝ **ապացուցել, ընկլուզիլ**:

Ածանցման համեմատությամբ հակառակ պատկեր է ներկայացնում պատճառականների կազմության **վերլուծական եղանակը**: Այս դեպքում պատճառականը կազմվում է **տալ** բայի զուգակցությամբ: Եթե ածանցական եղանակի համար մեծ մասամբ սկզբնատիպ են լինում չեզոք բայերը, ապա վերլուծական եղանակով պատճառականներ են կազմվում հիմնականում ներգործական բայերից (ներգործական նախատիպ ունեցողները համարվում են **բուն պատճառականներ**), այսինքն՝ **անորոշ դերբայ (նբ) + տալ, անորոշ դերբայ (չբ) + տալ, անորոշ դերբայ (պբ) + տալ**, ինչպես՝ **արևել.՝ աղալ տալ, բերել տալ, գրել տալ, խնդալ տալ, միացնել տալ, քայլել տալ**<sup>85</sup> և այլն,

**արևմտ.՝ ընել տալ, դնել տալ, իջնել (իջնալ) տալ** և այլն:

Արևմտահայերենում **-իլ** լծորդով բայերի պատճառականները հավասարապես կազմվում են թե՛ վերլուծական և թե՛ համադրական եղանակով, ինչպես՝ **սորվիլ - սորվիլ տալ // սորվեցընել, տրտմիլ - տրտմիլ տալ // տրտմեցնել (տրտմեցընել), խօսիլ - խօսիլ տալ // խօսեցնել (խօսցընել)** և այլն:

Ընդգծենք նաև, որ վերլուծական եղանակով պատճառական կազմելիս **ի** լծորդության բայերը **չեն փոխում լծորդը**:

<sup>85</sup> Ի տարբերություն արևմտահայերենի՝ արևելահայերենում **չեզոք բայ + տալ** կաղապարով պատճառականները առավելապես բնորոշ են խոսակցական լեզվին. գրականում հանձնարարելի են սրանց համադրական (ածանցական) կազմությունները:

Արևելահայերենում և արևմտահայերենում հանդիպում են միաժամանակ **համադրական** և **հարադրական** եղանակներով կազմված ձևեր՝ **պբ+տալ**, ինչպես՝ **հասկացնել տալ, հիշեցնել տալ, կուրացնել տալ, միացնել տալ, մոռացնել տալ** և այլն, որոնք երբեմն թյուրիմացաբար կարող են ընկալվել որպես սխալակազմություններ: Մինչդեռ նշվածները երկու գրականներում էլ բնավ սխալ ձևեր չեն. արտահայտում են կրկնակի պատճառականության իմաստ: Ինչպես գրում է Ա. Աբրահամյանը, այս ձևերը ցույց են տալիս չորս առարկաների (ենթակայի և երեք խնդիրների) հարաբերություն<sup>86</sup>: Պարզապես սրանք պիտի գործածվեն ճիշտ նշանակությամբ և համապատասխան համատեքստում: Օր.՝ «Ինչո՞ւ **կուրացնել տվիր** իմ որդուն», «...ով **մոռացնել կտար** ինձ իմ անցյալը» (Մ.), «Ինչո՞ւ զիս **հիշեցնել կու տաս** իմ հին վերքերս» (Ա. Ծ.), «Այդ կերպ անոր **հասկցնել տվի** իմ կողմնորոշումս» (Ե. Օ.): Համեմատելով արևելահայերեն և արևմտահայերեն բնագրերը՝ նկատել ենք, որ այս ձևերի գործածությունները արևմտահայերենում ավելի սակավադեպ են, քան արևելահայերենում (չնայած ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ ընդհանուր առմամբ երկու գրականներում էլ քիչ են գործածվում):

Այսպիսով, **ա//ե-ցն-ել** ածանցը երկու գրականներում էլ պատճառականի սեռային ցուցիչ է, սեռային ածանց: Բացի այդ՝ այն նաև բառակազմական ածանց է, որովհետև իմաստային առումով այս ածանցը նոր բառեր է կազմում:

Պատճառականի կազմության մեջ արևելահայերենում և արևմտահայերենում տարբերություններ գրեթե չկան. կազմվում են նույն ածանցով և կաղապարներով, համադրական բոլոր պատճառականներն էլ ունեն նույն՝ **ե** լծորդ ձայնավորը:

**Կրավորական բայեր:** Ի տարբերություն վերը քննված ներածանցավոր բայերի՝ կրավորական բայերը արևելահայերենում և արևմտահայերենում կազմության էական տարբերություններ չեն դրսևորում: Հայերենում կրավորական սեռի **ցուցիչ-ածանցը -վ-(-ու-)** ածանցն է, որը դիրքային տարբերակներ չունի: Այն դրվում է խոսքիմասային ցուցիչ-ածանցից անմիջապես առաջ: Կրավորական բայերը կազմվում են **ներգործական բայ + -վ-// -ու-** ածանց կաղապարով: Նշենք, որ կազմության թերևս ակնառու

<sup>86</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 599: **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Եր., 2004, էջ 210: **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահրակա պերականություն, Եր., 2007, էջ 133:

տարբերությունն այն է, որ գրական արևելահայերենում բոլոր կրավորականները **ե** լծորդության են, իսկ արևմտահայերենում՝ **ի** լծորդության: Արևելահայերենում ածանցի առկայությունը պարտադիր է կրավորական բայի (սեռի) համար, արևմտահայերենում այն երբեմն բացակայում է: Այսպիսի դեպքերում որպես սեռի ցուցիչ հանդես է գալիս լծորդը, ինչը արևմտահայերենի քերականության ձեռնարկներում չի բացատրվում: Հավանաբար պատճառն այն է, որ արևմտահայերենի ձևավորումը ներկայացնելիս միշտ նշվում է այն հանգամանքը, որ արևմտահայերենը քերականական շատ ձևեր ժառանգել է գրաբարից: Նորօրյա քերականներից Հ. Չոլաքյանը գրում է, որ **-ու->-ուիլ** անցումը արևմտահայերենում դեռ վերջնականապես չի ավարտվել<sup>87</sup>: Ընդգծենք, որ այս դեպքում՝ լծորդի փոփոխությամբ բայասեռ արտահայտելիս իրոք գործ ունենք մաքուր գրաբարյան իրողության հետ:

Ամփոփելով նշենք, որ արևմտահայերենը պահել է գրաբարյան չորս լծորդությունները: Ավելին, պարզորոշ երևում է, որ այսօր էլ շատ կենսունակ է **-իլ** լծորդությունը: Եվ եթե այլ խոսքի մասերից բայեր բաղադրելիս արևելահայերենում առավել կենսունակ է **-ել-**ը, ապա արևմտահայերենում խիստ կենսունակ է **-իլ-**ը, ինչպես՝ **ընդլայնիլ, ընդդիմահարիլ, ընկերակցիլ, թառիլ, թեքիլ**: Այս լծորդը ազատորեն հանդես է գալիս այլ ածանցների հետ՝ դառնալով մեկ բաղադրյալ ածանց՝ **-անիլ**, ինչպես՝ **բեկանիլ**: **-Անել // -անիլ** երևույթը նկատելի էր նաև **-աւորել** ածանցով բաղադրված բայերի դեպքում՝ **-աւորել // -աւորիլ**, ինչպես՝ **բախտաւորել, գահաւորիլ**:

**-Անալ// -անել// -անիլ** և **-ենալ** ածանցներով բաղադրված բառերը այժմ մեծ մասամբ հանդիպում են առանց **-են-// -ան-** ածանցների ձայնավորների, որի հետևանքով էլ արևմտահայերենում ունենում ենք **-նալ// -նել// -նիլ** բաղադրությամբ բայեր, ինչպես՝ **հագնիլ, հասկնալ, մեռնիլ, մոռնալ, նեղնալ, նիհարնալ, պագնել, պզտիկնալ, սպաննել, ցածնալ, քիչնալ** և այլն: Հիշենք, որ եթե բայի մեջ առկա են բայական բոլոր կարգի ածանցները, ապա արևելահայերենում բայը **ե** լծորդության է, իսկ ածանցներից յուրաքանչյուրն իր կայուն դիրքն ունի. **-ել-**ից անմիջապես առաջ դրվում է **-վ(-ու-)** ածանցը, նրանից առաջ՝ պատճառական ածանցը, որից առաջ՝ բազմապատկականը, սրանից առաջ՝ սոսկածանցը: Ունենում ենք այսպիսի բաղադրություն՝ **հիմք +**

<sup>87</sup> Տե՛ս **Չոլաքեան 3.**, Հայերէնի Դասագիրք, գ. Գ., Հալէպ, 1991, էջ 44:

**սոսկածանց + բազմ. ածանց + պատճ. ածանց + կրավ. ածանց + խոսքիմասային ածանց (ցուցիչ):** Այս կաղապարին համապատասխանում է ոչ այնքան սովորական մեկ բայ՝ **թռ+չ+ կոտ+եց+վ+ել:**

Արևելահայերենի կառուցվածքային **11** կամ **5** տիպարների<sup>88</sup> դիմաց արևմտահայերենն ունի կառուցվածքային **15** կամ **8** տիպար, այսինքն՝ արևմտահայերենում ավելանում են նաև **-իլ, -ու, -անիլ, -նալ**-ով վերջավորվող բայերը:

Ինչ վերաբերում է բայերի կազմությանը, ապա մենք նույնպես այն տեսակետին ենք, որ չկան պարզ բայեր. սխալ է ընդհանրապես «**պարզ բայ**» հասկացությունը, հետևաբար և բայերի ավանդական բաժանումը, ըստ որի՝ վերջիններս լինում են պարզ և ածանցավոր: Եվ քննությունն էլ կատարել ենք հենց այս մոտեցմամբ: Ինչպես տեսանք, երկու գրականների բայերի ելակետային ձևերը ունեն նվազագույնը բառակազմական **երկու** միավոր՝ **բառակազմական հիմք + խոսքիմասային ցուցիչ-ածանց(-ել//ալ//իլ//ու):** Ըստ այդմ էլ բայերը լինում են **աններածանց** կամ **աննշույթ** և **ներածանցավոր** կամ **նշույթավոր**:

---

<sup>88</sup> Տե՛ս **Գալստյան Ա.**, Բայական բառակազմության և դերբայական կառուցվածքները արդի հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», Եր., 2007: Տե՛ս **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007, էջ 136-137:

## ԳԼՈՒԽ 2. ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Դեռևս Դիոնիսոս Թրակացու մեկնիչները բայ են համարել միայն բայի խոնարհված ձևերը, իսկ դերբայները դիտել են առանձին խոսքի մաս և կոչել **ընդունելություն**<sup>89</sup>: Եվ սա հիմնավորվել է նրանով, որ ընդունելություն ասվածը սերտորեն կապված է թե՛ բայի և թե՛ անվան հետ. «Բառ ընդունական բայից և անուանց յատկութեան և յանուանէ և ի բայէ ունի գիրն էութիւն և լիցի մասն յութիցն»<sup>90</sup>:

Հետագա շրջանի քերականները ևս կատարում են այսպիսի դասակարգումներ: Այսպես, օրինակ՝ Վարդան Արևելցին, քննելով բայի և անվան հատկությունները դերբայական համակարգում, գրում է. «Նախ՝ զանունն ասաց, և ապա՝ զբայն, զի անունն էութիւնն է, իսկ բայ՝ պատահումն»<sup>91</sup>: Նա բերում է երեք պատճառ-հիմնավորում. «Նախ՝ անուն զբնութիւն իրին ցուցանէ, իսկ բայն զազդումն միայն, այսինքն՝ անուն որպէս գործ ի նմանէ, և պարտ է նախ մարդոյն լինել և ապա յետո գործ ինչ: Երկրորդ՝ զի անուն պարունակող է, իսկ բայն պարունակեալ ընդ անուամբ. պարունակողն յառաջ է, քան զպարունակեալն, որպէս երկինք, քան զերկիր: Երրորդ՝ զի անուն էութիւն է, իսկ բայն պատահումն, այսինքն՝ անունն որպէս Պետրոս, իսկ բայն, որպէս գնալ կամ գալ»<sup>92</sup>:

Հայերենագիտության մեջ առհասարակ անկախ դերբայների, դրանց դասակարգման, շարահյուսական կիրառությունների մասին շատ է խոսվել համեմատաբար նոր ժամանակներում: Մ. Աբեղյանը, Գ. Սևակը, Ա. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը, Ս. Աբրահամյանը, Գ. Զահուկյանը, Էդ. Աղայանը, Մ. Ասատրյանը և այլք խնդրին անդրադարձել են տարբեր տեսանկյուններից՝ շատ դրույթների վերաբերյալ տալով հիմնավոր և գիտական մեկնաբանություններ<sup>93</sup>:

<sup>89</sup> Տե՛ս **Адонц Н.**, Дионисий Фракиский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 146:

<sup>90</sup> Նույն տեղում:

<sup>91</sup> Տե՛ս **Արևելցի Վ.**, Մեկնութիւն քերականի, Եր., 1972, էջ 143:

<sup>92</sup> Նույն տեղը, էջ 317:

<sup>93</sup> Տե՛ս **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006: **Ղազարյան Ս.**, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. 1, Եր., 1964: **Ղարիբյան Ա.**, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Եր., 1950: **Պալասանեան Ա.**, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1894: **Սևակ Գ.**, Հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009 և այլք:

## 2.1. Անկախ դերբայների ընդհանուր բնութագիրը հայերենում (համառոտ ակնարկ)

Բայը խոսքի մեջ դրսևորվում է երկու ձևով՝ դիմավոր և անդեմ: Ուրեմն դերբայը բայի՝ խոսքի մեջ դրսևորման մի ձև է: Հարցին այս կամ այն չափով անդրադարձել են դեռևս հին շրջանի քերականները (13 - 17-րդ դդ.): Օրինակ՝ Հ. Քոնեցին անորոշը (աներևույթը) եղանակ է համարում՝ նշելով. «Եւ արդ հինգ են կերպք՝ ցուցական, հրամայական, ըղձական, ստորադասական, աներեւոյթ»<sup>94</sup>: Կամ՝ Ոսկան Երևանցին, խոսելով անորոշ դերբայի մասին, այն նույնպես եղանակ է համարում. «Ի նմանէ ելանեն ամենայն բայք ամանականք և ընդունելութիւնք և անուանք ստորականք և ոչ իսկականք»<sup>95</sup>: Բացի այդ՝ Ոսկան Երևանցին նշում է նաև դերբայակերտ 6 մասնիկներ՝ **-օղ, -իչ, -եալ, -եցեալ, -ելի, -ոց**:

Ընդունելությունը (անորոշ դերբայը) առանձին խոսքի մաս համարելով՝ հունաբան քերականները գրում են. «Բայց զդէմս ոչ յայտնէ եւ ոչ խոնարհմունս, զի շինելն ոչ յայտնէ զդէմս: Իսկ այլք ի բայէն նոյնք են ի նմա: Եւ զհոլովս ըստ անուան, որպես արարելոյ, արարելով եւ որ ի կարգին»<sup>96</sup>:

Հայ քերականագիտության սկզբնավորումից մինչև Ա. Բագրատունին այս դերբայը ներկայացվել է որպես եղանակ: Պետք է նկատել, որ արևմտահայ գրական լեզվում անորոշ դերբայի տարբերակումը տեսնում ենք արևմտահայերենի քերականության առաջին գրքերում<sup>97</sup>: Ա. Այտընյանը, դերբայը դիտելով իբրև բայական եղանակներից մեկը, ընդունում է անորոշ դերբայը որպես աներևույթ «ժամանակ»: «Դերբայ, չորրորդ փոփոխական մասն-բանի, թէ անուան եւ թէ բայի պաշտօնը միանգամայն կը կատարէ,- գրում է Ա. Այտընյանը,- զորօրինակ եթե ըսեմ՝ Աշխատելէն ետքը, աշխատիլ բայ է՝ վասնզի գործողութիւն կը ցուցնէ, եւ միանգամայն անուն է հոլովուած, որ նոյն էր թէ ըսէի Աշխատանքէն ետքը: Թէպէտ Դերբայը բային մէկ եղանակն ըլլալով՝ **բայէն զատ մասն-բանի համարուելու չէ**, բայց որովհետեւ միանգամայն անուն ալ է, հարկ է, որ քերականք առանձին ճառեն Դերբայի վրայ»<sup>98</sup>:

<sup>94</sup> Քոնեցի Յ., Յամառօտ հաւաքական յաղագս քերականին, Եր., 1977, էջ 177:

<sup>95</sup> Ոսկան Երևանցի, Քերականութեան գիրք, Ամստերդամ, 1668, էջ 25:

<sup>96</sup> Նույն տեղում:

<sup>97</sup> Քիրէճճեան Մ., Հայերէն քերականութիւն աշխարհաբար լեզուի նախակրթական դպրոցաց համար, Կ. Պօլիս, 1864, էջ 46:

<sup>98</sup> Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 100:

Արևմտահայ քերականներից Հ. Գազանճյանը ևս նույն կարծիքին է: «Անորոշ եղանակը,- կարդում ենք գրքում,- կը ներկայացնէ բային այն ձեւերը, որոնք գործողութիւնը կամ վիճակը կը յայտնեն անորոշ եղանակով մը, առանց դէմքի եւ թիւի»<sup>99</sup>: Լեզվաբանը տարբերակում է անորոշ եղանակի չորս ձև՝ աներևույթ, ներկա ընդունելություն, անցյալ ընդունելություն, ապառնի ընդունելություն:

Այսպես է հարցը ներկայացնում նաև Ս. Պալասանյանը. «Անորոշ դերբայը բայի անորոշ եղանակն է»<sup>100</sup>: Նա առանձնացնում է բայի հինգ եղանակ՝ անորոշ, սահմանափակ, հրամայական, պայմանական և ստորադասական:

Հ. Աճառյանի աշխատություններում կրկին հանդիպում է «աներևույթ» տերմինը: Լեզվաբանը էապես նույնացնում է դերբայն ու աներևույթը: «Այն բայերը, որոնք ձևով անուն և իմաստով բայ են, կոչվում են դերբայ կամ աներևույթ: Այս երկուսը էապես նույն են, բայց համաձայն հին հունարենի քերականության՝ զանազանություն է դրվել երկուսի միջև: Երբ բայը կատարում է գոյականի դեր, կոչվում է դերբայ: Հայերենի մեջ մենք դերբայ բառին տալիս ենք ընդհանուր գործածություն, և **անորոշ դերբայ** ասելով՝ հասկանում ենք **աներևույթ**»<sup>101</sup>: Հ. Աճառյանը, անդրադառնալով այն հարցին, թե ինչ ըմբռնում ունի դերբայը հնդեվրոպական նախալեզվում, գրում է. «Հնդեվրոպական նախալեզվի մեջ, քերականական լեզվով խոսելով, դերբայ են կոչվում այն անվանական բուները, որոնք թեև կազմված են բայական ձևերից և ունեն բայի զանազան հատկությունները, այն է ժամանակ, երևույթ (aspect), սեռ (voix), բայց բայ չեն, որովհետև զուրկ են բայական վերջավորությունից, որոնք արտահայտում են դեմքը»<sup>102</sup>:

Հ. Աճառյանը որոշակի ձևով առանձնացնում է դերբայների երկու խմբեր՝ «կախյալ» և «անկախ» դերբայներ՝ նշելով, որ լեզվի կառուցվածքում դրանք նույն դերը, կշիռն ու գործառույթը չունեն:

<sup>99</sup> Գազանճեան Յ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պոլիս, 1907, էջ 112:

<sup>100</sup> Պալասանեան Ս., Քերականութիւն մայրէնի լեզուի, Թիֆլիս, 1874, էջ 71:

<sup>101</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, Եր. 1965, էջ 5:

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 12:



Անկախ դերբայները քերականական տարաբնույթ առանձնահատկություններ են դրսևորում, ահա թե ինչու Մ. Աբեղյանը դրանք տեղաբաշխում է տարբեր խոսքի մասերի մեջ<sup>103</sup>:

Հետագայում հայ քերականագիտության մեջ է՛լ ավելի հիմնավոր ու գիտական անդրադարձներ եղան այս հարցին: Ա. Ղարիբյանն ու Գ. Սևակը ընդարձակում են բայի ընդգրկման սահմանները՝ դրա մեջ ներառելով նաև դերբայական ձևերը: Քանի որ բայի՝ որպես խոսքի մասի հիմնական հատկանիշները համարվեցին բայիմաստը, սեռը և խնդրառությունը<sup>104</sup>, այդ իսկ պատճառով դերբայները մեծ մասամբ սկսեցին քննվել բայական համակարգի մեջ: «Դերբայները՝ իբրև խոսքի մաս, բայ են, նրանք ունեն բայի երեք հիմնական հատկանիշները (բայիմաստ, սեռ, խնդրառություն): Դերբայները բայի մյուս ձևերից, իհարկե, զգալիորեն տարբերվում են. այդ տարբերությունն այն է, որ դերբայները չեն արտահայտում ժամանակ, եղանակ, դեմք, թիվ և կերպ. մի բան, որ հատկանշական է միայն եղանակային ձևերին»<sup>105</sup>: Լեզվաբանը միաժամանակ ուշադրություն է դարձնում նաև այն հանգամանքին, որ ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի համար դերբայների առանձնացումը բայական համակարգից հանգեցնում է բայի խոնարհման ձևերի մի զգալի մասի «լուծարմանը»: «Դերբայները բայ չհամարելը միայն դերբայների՝ իբրև խոսքի մասի հիմնական իմաստն է անտեսում ու սքողում, այլև բայն իբրև խոսքի մասի լուծարքի ենթարկում, եթե ոչ ամբողջապես, գոնե զգալի մասով»<sup>106</sup>, քանի որ ինը ժամանակներից ութը կազմվում են դերբայով ու օժանդակ բայով, ուրեմն և դրանք բայի խոնարհման ձևեր չեն: Այսպիսով, դերբայները բայ չհամարել չի կարելի. չպետք է անտեսել դրանց թե՛ ընդհանուր (հիմնական) իմաստը (նրա հետ կապված սեռն ու խնդրառությունը), թե՛ այն, որ բայական ժամանակաձևերի մեծ մասը կազմվում է դերբայների միջոցով:

<sup>103</sup> Մ.Աբեղյանի այս դիտարկումներին ըստ անհրաժեշտության առավել մանրամասն անդրադառնում ենք շարադրանքի տարբեր հատվածներում:

<sup>104</sup> Այս խնդրի վերաբերյալ յուրօրինակ տեսակետ է հայտնում Ռ. Իշխանյանը (տե՛ս **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1971, էջ 135-143):

<sup>105</sup> **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 280:

<sup>106</sup> Նույն տեղում, էջ 282:

Ուսումնական դասագրքերում նոր քերականությունն այս հարցին տվել է միանշանակ պատասխան. բայը՝ իբրև խոսքի մաս, առանձնացվել է թե՛ ստորոգյալից, թե՛ մանավանդ նախադասությունից: Բայի մեջ առանձնացվում է երկու դրսևորում, արտահայտություն կամ ձև, այն է՝ **եղանակային** կամ **դիմավոր բայեր** և **անդեմ բայեր** կամ **դերբայներ**<sup>107</sup>: Այս դրույթները, ընդունվելով հետագա շրջանի քերականների կողմից, մտան հայերենի քերականագիտության մեջ:

Գ. Սևակի՝ բայի և մասնավորապես դերբայական ձևերի մասին տեսակետները ընդունում և զարգացնում է Ա. Աբրահամյանը: Շեշտելով այն միտքը, որ բայը խոսքի մեջ դրսևորվում է երկու ձևով՝ դիմավոր-եղանակային և անդեմ-բայական, Ա. Աբրահամյանը նշում է, որ բայի դիմավոր և անդեմ ձևերը սերտորեն կապված են իրար հետ: «Անալիտիկ կազմություն ունեցող դիմավոր ձևերն առանց դերբայների գոյություն չունեն և պատկերացնելի չեն: Ուսումնասիրելով հայերենի բայն իր զարգացման ընթացքի մեջ գրավոր լեզվի բոլոր շրջաններում և բարբառներում՝ տեսնում ենք, որ դերբայական ձևերի ճնշող մեծամասնությունը (նույնիսկ անորոշն ու ենթակայականը) հանդես են գալիս դիմավոր ձևերի կազմության մեջ»<sup>108</sup>:

Ելնելով այսպիսի ըմբռնումից՝ Ա. Աբրահամյանը տալիս է դերբայների հետևյալ բնորոշումը. «Բայի դերբայական ձևեր կամ դերբայներ են կոչվում բայի անդեմ ձևերը, որոնք բայական մի շարք հատկանիշների հետ գործողությունը կամ եղելությունը դրսևորում են տարբեր վիճակներում: Այս ոգով էլ ճանաչվում և արժևորվում են առանձին դերբայական ձևերը»<sup>109</sup>: Լեզվաբանը ժամանակակից հայերենում ընդունում է հետևյալ դերբայները՝ **անորոշ** (երգել), անկատար՝ **-ում** և **-իս** տարբերակներով (երգում, երգելիս), **վաղակատար** (երգել), **հարակատար** (երգած), **ենթակայական** (երգող), **ժխտական** (երգի) և վերապահությամբ՝ **ընթացակցական** (երգելէն):

Դերբայական ձևերի մեջ տեսնելով գործողության վիճակի արտահայտություն՝ Ա. Աբրահամյանը փորձում է դերբայները դասակարգել ըստ գործողության վիճակի արտահայտության յուրահատկությունների: Ըստ այդմ՝ նա ժամանակակից հայերենի դերբայները բաժանում է երեք խմբի՝ ա) տարտամ, անորոշ, հետևաբար թույլ

<sup>107</sup> Տե՛ս **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 282:

<sup>108</sup> **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 42:

<sup>109</sup> Նույն տեղում, էջ 44:

դրսևորում ունեցող վիճակ արտահայտող դերբայներ՝ **անորոշ, ժխտական, ք)** ցայտուն, բայց ոչ ժամանակային վիճակ արտահայտող դերբայներ՝ **անկատար, ենթակայական, գ)** ժամանակային ընդհանուր վիճակ արտահայտող դերբայներ՝ **ապառնի, վաղակատար, հարակատար**<sup>110</sup>:

Էդ. Աղայանը նախորդ քերականների նման ժամանակակից հայերենի բայաձևերի մեջ որոշակիորեն տեսնում է երկու կարգ՝ «դերբայներ կամ ոչ եղանակային ձևեր և դիմավոր կամ եղանակային ձևեր»<sup>111</sup>: Նա քննադատում է Ա. Աբրահամյանի՝ դերբայների խմբավորման փորձը: «Այս խմբավորումները տարտամ են, ոչինչ չասող և, մանավանդ, արհեստական ու մտացածին: Չանազան կարգի դերբայները խառնված են իրար, որից և շփոթ է ստեղծվել, ժամանակային հատկանիշ է վերագրվել ապառնիին ու վաղակատարին, որոնք քերականական կարգից զուրկ են, ժամանակ չի վերագրված ենթակայականին, որ ունի ժամանակ»<sup>112</sup>: Եթե Ա. Աբրահամյանը դերբայների մեջ տեսնում էր **վիճակի** գաղափար, ապա Էդ. Աղայանը տեսնում է **կերպի** և **վիճակի** գաղափարներ: «Դերբայ ասելով՝ մենք հասկանում ենք այն անդեմ բայաձևերը, որոնք արտահայտում են կերպային կամ վիճակային իմաստներ»<sup>113</sup>: Ըստ այդմ՝ Էդ. Աղայանը դերբայները բաժանում է երկու խմբի՝ **կերպային դերբայներ** (շարունակական կամ անկատար, ավարտված (կատարված), կատարելի և ժխտման կամ բացասման), **վիճակային դերբայներ** (անկատար երկրորդ, հարակատար, ենթակայական, ապառնի երկրորդ), նաև՝ **ձևի**: Այս խմբավորումից դուրս է մնում անորոշը, որի կերպային-վիճակային իմաստը բնորոշվում է որպես անորոշ իմաստ: «Նա ո՛չ գործողության կերպ է արտահայտում, ո՛չ էլ առարկայի վիճակ, այլ պարզապես անվանում է գործողությունը»<sup>114</sup>:

Ժամանակակից հայերենի խոնարհման քննություն կատարելիս Գ. Ջահուկյանը նույնպես անդրադառնում է դերբայներին: Լեզվաբանը գրում է, որ համադրական բնույթի դիմավոր բայաձևերին հատուկ կարգերից և ենթակարգերից դերբայներին

<sup>110</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 363:

<sup>111</sup> **Աղայան Էդ.**, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 343:

<sup>112</sup> Նույն տեղում, էջ 344:

<sup>113</sup> Նույն տեղում, էջ 345Է

<sup>114</sup> Նույն տեղում, էջ 347Է

հատուկ են գրեթե այն բոլոր կարգերն ու ենթակարգերը, որոնք արտահայտվում են վերջավորությունների միջոցով<sup>115</sup>:

Գ. Ջահուկյանը հետևյալ ընդհանրություններն է տեսնում «դերբայների» և համադրական դիմավոր բայաձևերի միջև՝ **ա)** հաստատականություն-ժխտականություն, **բ)** անկատարություն ու տևականություն, **գ)** անցողականություն-անանցողականություն (խնդրառության մնացած դրսևորումները ընդհանուր են բայաձանց գոյականների և որոշ ածականների համար ևս), **դ)** ածականներից ածանցված բայաձևերի համար փոխարկայնություն, **ե)** անցողականների համար սեռը (կրավորական - ոչ կրավորական և պատճառական-ոչ պատճառական հակադրություններով): Վերլուծական բայաձևերի և «դերբայների» համար ընդհանուր է հաջորդականության կարգը:

Դերբայների տարբերակման հարցում գրեթե նույն դրույթներն ենք տեսնում արևմտահայ քերականագիտության մեջ: Արևմտահայերենում բայը նույնպես խոսքի մեջ հանդես է գալիս երկու ձևով՝ դիմավոր և անդեմ: Առաջիններին հատուկ են եղանակի, ժամանակի, դեմքի և թվի քերականական կարգերը, երկրորդները զուրկ են նշված քերականական կարգերից: Ինչպես արդեն նշել ենք, դրանց հատուկ են բայական հիմնական հատկանիշները՝ բայիմաստ, սեռ, խնդրառություն:

Գրական արևելահայերենի **ուրթ** դերբայների դիմաց գրական արևմտահայերենն ունի **յուրթ** դերբայ: Արևմտահայերենում չկան **անկատար** և **համակատար** դերբայները, իսկ արևելահայերենում չկա **ընթացակցական** դերբայը: Ապա՝ երկու գրականների համար ընդհանուր դերբայները ի հայտ են բերում դերբայակերտ մասնիկների տարբերություններ. **ա)** անորոշ դերբայն արևմտահայերենում պահպանել է չորս լծորդները՝ **-ալ, -ել, -իլ, -ուլ** (ինչպես նշել ենք, որոշ վերապահությամբ), **բ)** վաղակատար դերբայը երկու գրականներում հանդես է գալիս **լ>ր** հերթագայությամբ, իսկ **ի** խոնարհման բայերը արևմտահայերենում փոխում են նաև լծորդը՝ **ի>ե, գ)** ժխտական դերբայը արևելահայերենում կազմվում է ներկայի հիմքից՝ **ե** խոնարհման բայերի դեպքում **ի**, իսկ **ա** խոնարհման բայերի դեպքում **ա** մասնիկներով. արևմտահայերենում կազմվում է դարձյալ ներկայի հիմքից՝ **ա** խոնարհման բայերի

<sup>115</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 273, **նույնի՛** ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 287:

համար **-ար**, իսկ մյուս բայերի համար **-եր** մասնիկներով, ընդ որում՝ **ի** խոնարհման բայերը դարձյալ փոխում են լծորդը՝ **ի>ե**:

Ամփոփելով նշենք, որ իմաստային և քերականական ընդհանուր հատկանիշներով համընկնող դերբայները երկու գրականներում տարբերություններ չեն դրսևորում: Ցույց են տալիս գործողության ընդհանուր գաղափար, ունեն սեռի, իսկ անկախ դերբայները՝ նաև ժխտման քերականական կարգեր: Դրանց հատուկ է խնդրառությունը: Կան նաև կազմության և կիրառության մասնակի տարբերություններ, որոնք կներկայացնենք դերբայների առանձին քննության ժամանակ<sup>116</sup>:

## 2.2. Անորոշ դերբայի<sup>117</sup> իմաստային-քերականական հատկանիշները

Վերը նշված քերականների աշխատություններում քննության առանձին նյութ է դարձել հատկապես բայի ելակետային ձևը՝ անորոշ դերբայը: Կան իրարամերժ տեսակետներ և հիմնավորումներ, որոնց հարկ ենք համարում նույնպես անդրադառնալ: Այսպես, անորոշ դերբայի ըմբռնումը երկու գրականներում նույնն է: Այն իր մեջ համատեղում է բայի ու գոյական անվան հատկանիշները և յուրահատուկ տեղ ունի հայերենի դերբայների մեջ: Քերականների մեծ մասը անորոշ դերբայը դիտարկում է որպես առանձին եղանակ: Մինչդեռ Մ. Աբեղյանը այն հանում է եղանակների շարքից և քննում դերբայների մեջ: Բայց միաժամանակ հակադրում է դրանց՝ անորոշը կոչելով **բայանուն**, իսկ մյուս դերբայները՝ **բայածականներ**. «Դերբայները լինում են բայանուն կամ անորոշ դերբայ և բայածականներ: Բայածականներն իրենց կողմից լինում են՝ անկատար, ապառնի, անցյալ և ենթակայական դերբայներ»<sup>118</sup>:

<sup>116</sup> Մեր աշխատանքում կախյալ դերբայներին չենք անդրադառնում, քանի որ դրանք զուգադրաբար ու մանրամասն քննված և ներկայացված են դասագրքերում, առանձին մենագրություններում (տե՛ս **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985: **Սարգսյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006: **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007 և այլն): Անկախ դերբայները նույնպես ուսումնասիրված են, սակայն հարկ ենք համարում դրանց անդրադառնալ, քանի որ բայակազմական, ձևակազմական և իմաստային-գործառական առումներով ինչ-ինչ հարցեր դուրս են մնացել ընդհանուր քննության շրջանակներից:

<sup>117</sup> Անորոշ դերբայի իմաստային-քերականական հատկանիշների քննությունը ներկայացնում ենք մյուս անկախ դերբայներից առանձին՝ հիմք ընդունելով դրա ելակետային ձև լինելը:

<sup>118</sup> **Աբեղյան Մ.**, Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 100:

Մ. Աբեղյանի այս տեսակետը չընդունեցին հետագա շրջանի քերականները և դերբայը համարելով բայի դրսևորման ձևերից մեկը՝ ուսումնասիրեցին հենց բայի բաժնում: «Անորոշ դերբայը ցույց է տալիս առարկայի գործողությունը իբրև երևույթ և հանդիսանում է առարկայի գործողության անունը»<sup>119</sup>:

Ա. Աբրահամյանը գրում է. «Անորոշ դերբայը բայի այն անդեմ ձևն է, որը գործողության, եղելության կամ դրության բայական գաղափարը արտահայտում է անորոշ վիճակում»<sup>120</sup>:

Էդ. Աղայանը նշում է, որ դերբայների մեջ առանձին դիրք է գրավում անորոշ դերբայը: Այն ո՛չ գործողության կերպ է արտահայտում, ո՛չ առարկայի վիճակ, այլ պարզապես անվանում է գործողություն: Այստեղ էլ գոյականների ուղղական հոլովի նման այն հանդես է գալիս որպես գործողության բացարձակ անվանում: Իբրև այդպիսին՝ այն ոչ միայն բայաձևերի ելակետային ձևն է, այլև անկախ բառ, որով էլ պայմանավորված՝ հիմույթ<sup>121</sup>:

Ինչպես տեսնում ենք, գրեթե բոլոր քերականները նշում են այս դերբայի անորոշ արտահայտությունը, այսինքն՝ արտահայտած գործողությունը անորոշ վիճակ է: Այս դրույթին հակադրվում է Մ. Ասատրյանը: Նա այն կարծիքին է, որ եթե անորոշ դերբայը արտահայտեր «անորոշ» վիճակ, ապա իմաստային ու բառային որոշակիություն ունենալ չէր կարող, այնինչ այն անկախ ու ինքնուրույն բառային միավոր է և որպես բայական ձևերի ելակետ՝ հավասարվում է գոյականների ուղղական հոլովաձևերին<sup>122</sup>:

Արևմտահայ գրական լեզվում անորոշ դերբայի տարբերակումը տեսնում ենք դեռևս Ն. Մելիք-Թանգյանի «Աշխարհաբարի քերականությունը» աշխատությունում: «Անորոշութիւն ցուցնող բայերի սկզբնական ձեւերը կոչւում են անորոշ դերբայներ»<sup>123</sup>: Սակայն այս հարցը առավել ամբողջական քննում է Ե. Տասնապետյանը: Նա անորոշ

<sup>119</sup> **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 283:

<sup>120</sup> **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 363:

<sup>121</sup> **Աղայան Էդ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 345-347:

<sup>122</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գ. Բ, Եր., 1973, էջ 224-235:

<sup>123</sup> **Մելիք-Թանգեան Ն.**, Աշխարհաբարի քերականութիւն, Նոր Ջուղայ, 1900, էջ 47:

Ի դեպ, Մ. Ասատրյանը նշում է, որ այս լեզվաբանը տարբերակում է նույն եղանակները, ինչ Ս. Պալասանյանը, սակայն համեմատելով նկատել ենք, որ Ն. Մելիք-Թանգյանը ընդունում է բոլորովին այլ դրույթներ: Հմնտ. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գ. Բ, Եր., 1973, էջ 224:

դերբայը համարում է բայի սկզբնական անփոփոխ ձև, «որ նշուած եղելութեան անունն իսկ է, ուրիշ խոսքով՝ անորոշ դերբայը համարժեք է բայանունի: Այսպես՝ մտնելը ազատ է = մուտքը ազատ է»<sup>124</sup>:

Արևելահայերենում և արևմտահայերենում մյուս դերբայների համեմատությամբ անորոշ դերբայի իմաստային յուրահատկությունը բայական իմաստի խիստ ընդհանուր, անորոշ, վիճակային արտահայտությունն է: Լինելով որևէ բայի դերբայական ձևերից մեկը՝ անորոշ դերբայը, սակայն, բայական հիմնական ձև է, դերբայական **ելակետային ձև**: Այս տեսակետից այն բոլորովին էլ անորոշ դերբայ չէ. այն **անվանողական** արժեք ունի: Քերականական փոփոխության ենթարկված բայական յուրաքանչյուր ձևի համար անորոշ դերբայը բայի ուղիղ սկզբնական ձևն է: Այն կարող է զուգահրվել ուղղական հոլովի՝ որպես անվան սկզբնաձևի հետ: Անորոշ դերբայը արևելահայերենում ձևավորվում է **-ել** և **-ալ** մասնիկներով, օրինակ՝ **վազել, կարդալ**: Անորոշ դերբայի **-ել, -ալ** մասնիկներից առաջ հաճախ հանդես են գալիս սոսկական, պատճառական, կրավորական ու բազմապատկական ածանցներ, և այսպիսով ստացվում են անորոշ դերբայի **-նել, -չել, -անալ, -ենալ, -ցնել, -վել, -ատել, -ուտել** և այլ ածանցավոր ձևերը: Անորոշ դերբայի դերբայական մասնիկները քերականական արժեքի տեսակետից երկբնույթ են. այլ խոսքի մասերից բայեր կազմելիս դրանք նույն արժեքն ունեն, ինչ բառակազմական ածանցները՝ նոր բառեր կազմելու իրենց բնորոշ նշանակությամբ, ինչպես՝ **ջուր - ջրել**: Այս դեպքում փոխվում են ածանցավոր բառերի բառիմաստները և խոսքիմասային նշանակությունը: Մյուս կողմից անորոշի դերբայական մասնիկները բայական համակարգի ներսում բայական բազմազան ձևերի զուգահրությամբ քերականական մասնիկների արժեք ունեն:

Լեզվաբանների մեծ մասը նշում է, որ անորոշ դերբայը ոչ այնքան բայական, որքան փոխանվանական (գոյականական) նշանակությամբ է գործածվում: Այդ լեզվաբաններից է, օրինակ, Ա. Աբրահամյանը: Նա նշում է, որ թեև անորոշ դերբայի հոլովումը փոխանվանական է, սակայն այն տարբերվում է հայերենին բնորոշ փոխանվանական հիմնական հոլովումից, որը ընդհանրապես կատարվում է որոշյալ առումով

<sup>124</sup> **Տասնապետեան եդ.**, Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 105:

և **-ի** հոլովմամբ, ինչպես՝ **մեծը - մեծի** և այլն: Սակայն անորոշ դերբայը հոլովվում է **-ու** հոլովմամբ, որոշյալի հետ՝ նաև անորոշ առումով<sup>125</sup>:

Այս առիթով Ալ. Մարգարյանը գրում է. «Փոխանուն անորոշի դեպքում, կարելի է ասել, գործողությունը պարզապես գոյականացվում է և այն ըստ էության բայանվան նշանակությամբ է գործածվում և իբրև այդպիսին էլ հոլովվում է՝ կիրառվելով յուրաքանչյուր հոլովի իմաստով պայմանավորվող և, բնականաբար, գոյականին հատուկ մի շարք շարահյուսական պաշտոններով»<sup>126</sup>:

Մինչդեռ Մ. Ասատրյանը կարծում է, որ այս դերբայը հոլովվում է հենց ինքնին և ոչ թե փոխանվանական կիրառությամբ, որովհետև այն իր մեջ համատեղում է բայի և գոյական անվան հատկանիշները: Անորոշ դերբայը բայ է այնքանով, որ արտահայտում է գործողության, ընթացքի գաղափար, որն իր քերականական-նյութական դրսևորումն է ստանում բայասեռի և դրանից բխող խնդրառության կարգերում: Անորոշ դերբայը միաժամանակ գոյական է այնքանով, որ որպես գործողության անուն իր իմաստով հավասարվում է բայանուններին՝ արտահայտելով նաև առարկայական գաղափար, որն իր քերականական - նյութական դրսևորումն է ստանում հոլովի կարգում<sup>127</sup>: Մենք առավել հակված ենք այս տեսակետին. իրոք անորոշ դերբայի հոլովումը որպես փոխանվանական հոլովում դիտարկելը այնքան էլ տեղին չէ: Հայերենում բոլոր բառերը, որոնք ենթարկվում են փոխանվանական հոլովման, հոլովվում են **ի-ով**, իսկ անորոշ դերբայը հոլովվում է **ու-ով**: Ավելին՝ գոյականի հոլովումները ներկայացնելիս նշվում է, որ **ու** հոլովումը ձևային հոլովում է, այս հոլովման ենթարկվում է ուղղականում **ի** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը, ինչպես նաև **անկողին, ամուսին, Աստված, մարդ** (իհարկե, արևելահայերենում. այս գոյականներն արևմտահայերենում այլ հոլովման են պատկանում) գոյականներն ու **անորոշ դերբայը**:

Արևելահայերենում **անորոշ դերբայը** ներգոյական հոլով չունի, իսկ արևմտահայերենում, ինչպես նշել ենք, ընդհանրապես ներգոյական հոլով չկա: Երբեմն արևելահայ

<sup>125</sup> Տե՛ս Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Եր., 1962, էջ 369:

<sup>126</sup> Մարգարյան Ա., Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 396:

<sup>127</sup> Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գ. Բ, Եր., 1973, էջ 229-230:



բանավոր խոսքում և առանձին դեպքերում գրականության մեջ հանդիպում են այդ դերբայի՝ ներգոյական հոլովի կազմություններ («**Ուտելում՝** ճարտար, **գործելում՝** տկար»): «**Բամբասելում** մրցակից չունի» և այլն), որոնք, սակայն, լայն տարածում չունեն և կանոնավոր կիրառություններ չեն: Երկու գրականներում էլ անորոշ դերբայի հոգնակի թվով գործածությունը սովորական չէ. անորոշի հոգնակիի ձևերը ցույց են տալիս ոչ թե դերբայի իմաստի, այլ գործողություն կատարողների հոգնակիություն՝ **գնալներս** - մեր գնալը, ինչպես՝ «**Գնալների լինի, գալների չլինի**»:

Անորոշ դերբայի բայական և գոյականական հատկանիշները ոչ միայն դրսևորվում են նույն ձևի մեջ սեռի, խնդրառության ու հոլովման համատեղությամբ, այլև բացահայտվում են անորոշ դերբային տրվող հարցերով: Օրինակ՝ **սիրում է գրել // կը սիրէ գրել** կապակցության մեջ անորոշ դերբայը հավասարապես կարող է պատասխանել **ի՞նչ անել // ընել և ի՞նչ** հարցերին:

Հայտնի է, որ անորոշ դերբայը բայ է այնքանով, որ արտահայտում է գործողության, ընթացքի գաղափար, միաժամանակ գոյական է այնքանով, որ որպես գործողության անուն իր իմաստով հավասարվում է բայանուններին՝ արտահայտելով նաև առարկայական գաղափար, որն իր քերականական նյութական դրսևորումն է ստանում հոլովի կարգում:

Արևմտահայերենում անորոշ դերբայի հոլովման ժամանակ **ի** և **ու** լծորդները փոխվում են **ե**-ի, ինչպես՝ **խօսիլ – խօսելու, խօսելէն, խօսելով, թողուլ – թողելու, թողելէն, թողելով** և այլն:

Ըստ էության, անորոշ դերբայի իմաստային–ձևաբանական հիմնական հատկանիշները սրանք էին:

Արևմտահայերենում և արևելահայերենում անորոշ դերբայի շարահյուսական կիրառությունները գրեթե նույնն են, սակայն տարբեր են իրացման կաղապարները (պայմանավորված են լեզվի տարբերակների կառուցվածքային ու ձևակազմական տարբերություններով): Գործողության, ընթացքի նշանակությունը համատեղելով առարկայական նշանակության հետ՝ անորոշ դերբայը, իր առարկայական, բայանվանական էությանը համապատասխան, խոսքի մեջ հանդես է գալիս նաև գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով: Բայց նախ և առաջ, արտահայտելով գործողության

կամ եղելության ընդհանուր գաղափար, անորոշ դերբայը գործածվում է զուտ բայական կամ դերբայական նշանակությամբ: Այս առիթով Վ. Քոսյանը գրում է, որ ժամանակակից հայերենում բայը կարող է լրացումներ ստանալ գոյականով, մակբայով, ածականով, դերբայներով: Ընդ որում՝ գոյական լրացումով բառակապակցություններում նա առանձնացնում է երկու խումբ. **ա)** բայի լրացումն արտահայտվում է որևէ հոլովաձևով առանց կապերի, **բ)** բայի լրացումն արտահայտվում է հոլովաձևերով և կապերով<sup>128</sup>: Այս երկու ելակետերը հաշվի առնելով՝ լեզվաբանը դրանք քննել է առանձին-առանձին: Բայի լրացման դերում հանդես եկող դերանունները դրսևորում են այն խոսքի մասերի առանձնահատկությունները, որոնց հարաբերակից են դրանք (գոյական, ածական, մակբայ, թվական և այլն):

Փոքր-ինչ այլ է **բայ-դերբայ** բառակապակցությունների հարցը: Անորոշ դերբայի թեք հոլովաձևերը բայի լրացման դերում հանդես են գալիս գոյականի հատկանիշերով և իմաստային նույնպիսի հարաբերությամբ: Սակայն չենք կարող առանձնացնել անորոշ դերբայի թեք հոլովաձևերի քննությունը **բայ-գոյական** բառակապակցությունների ուսումնասիրությունից: Անորոշ դերբայի արտահայտած իմաստները հիմնականում խնդրային են: Այն, իր առարկայական, բայանվանական էությանը համապատասխան, խոսքի մեջ կիրառվում է գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով: Անորոշի ուղղական հոլովաձևը նախադասության մեջ հանդես է գալիս ենթակայի և ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոններով: Անորոշ դերբայի ուղղական հոլովաձևը հաճախ գործածվում է տրականի և բացառականի փոխարեն: Ուղիղ ձևով գործածված այսպիսի անորոշը, որի ուղիղ ձևը պայմանավորված չէ խնդրառու բայի հոլովառությամբ, կոչվում է բացարձակ անորոշ<sup>129</sup>: Այդ մասին կխոսվի իր տեղում:

Ստորև ներկայացնում ենք անորոշ դերբայի՝ սկզնաղբյուրներում առավել տարածված կիրառություններից հիմնականները:

Այսպես, արևելահայերենում և արևմտահայերենում **ուղղական հոլովով** դրված անորոշ դերբայը նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես.

- **Ենթակա.**

<sup>128</sup> Տե՛ս **Քոսյան Վ.**, ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 199:

<sup>129</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Եր., 1973, էջ 230:

արևել.՝ «Զգույշ է միրհավը, դժվար է նրան **խփել**» (Ա. Բ.): «Պահի՛ր հիշատակը բույրի, և դյուրին կլինի **մոռանալը**, որ վարդը թառամած է վաղուց» (Ավ. Իս.): «Կարո՞ղ է սակայն **պատահել**, որ Որքան էլ լինի ապագան մութ, Մնա անժառանգ ու անսերունդ...» (Ե. Չ.): «Կարող է **լինել**, որ երկրում լուրթ, Որքան էլ խավարն իջնի տխուր, Չբացվի հանկարծ հրաշքով հուր Գալիքի համար փրկության դուռ» (ն. տ.):

արևմտ.՝ «Անկարելի էր **քաշել** ու **հանել** թևերուս մեջ պահվող պատկերը» (Զ. Ո.): «Անոր տրամադրությունը **հասկնալը** շուներու համար շատ դժվար ու իմաստուն աշխատանք էր» (Հ.): «Կ'ըմբռնեմ թե տարիք մը կայ ուրկէ անդին **ապրիլը** ամենէն մեծ յանդգնութիւնն է» (Ն. Ս.): «Շոգենավով **ճամբորդելը** հաճելի է» (Ե. Օ.): «Օրական չորս ժամ **աշխատիլը** շատ աղէկ է» («Ազատ խօսք»): «Ներկայ օրերիս երեխաներուն հետ խստութեամբ **վարուիլը** հակամանկավարժական կյ՞րլլայ» («Ազդակ»):

▪ **Ստորոգելիական վերադիր.**

արևել.՝ «Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը **ջրելն** էր» (Ա. Բ.): «Ամենադժվար բանը **սիրելն** է» (Պ. Ս): «Պետության խնդիրը նաև ժողովրդի համար բարեկեցիկ կյանք **ապահովելն** է» («168 ժամ»):

արևմտ.՝ «Ու մեր երջանկության համար՝ կարևորը **հավատալն** է ու **սպասելը** բանի մը որ պիտի չգայ» (Ն. Ս.), «Սուրիոյ հայութեան համար այսօր ինքնզինք Հայրենիքին մէջ **համարկելն** է» («Ազդակ»), «Մեզի համար ամենէն կարեւոր բանը հոս հայ **մնալն** է, հայուն տեսակը **պահելն** է» («Ժամանակ»):

▪ **Ուղիղ խնդիր** (արտահայտված և՛ հոդով, և՛ առանց հոդի).

արևել.՝ «Զիավորն իզուր էր փորձում շներին **հեռացնել**» (Ա. Բ.): «Փոթորկաշունչ բունն հորձանքով ճգնում ես **փշրել** զայրույթդ պատող ափերդ հսկա» (Ավ. Իս.): «Չանցավ մի պահ, նորից սկսեց **երգել** սոխակը» (Ավ. Իս.): «ԵՄ պատվիրակը բարձր գնահատեց լրագրողի ազատ **արտահայտվելը**» («Առավոտ»):

արևմտ.՝ «Ուղեղիս մեջ մեղուները կսկսեին **բզզալ**» (Զ. Ո.): «Կը սիրէի **տառապիլ**» (ն. տ.): «Հուզումիս ամբողջ ողնաշարիս երկայնքն ի վեր **խուժելը** զգացի» (ն. տ.): «Զուգելով **վրդովել** այդ երևույթը, հազիվ կարողացա **բարև մը տալ**» (ն. տ.): «Կար իր մեջ լրություն մը՝ զոր ան չէր կրցած **արտահայտել**» (Ն. Ս.): «Զէի գիտեր քու քաջ

**ըլլալը»** (ն. տ.): «Եղբայրս կփափաքի բժիշկ **ըլլալ»** (ն. տ.): «Աշտուր որոշեց Փարիզ **մեկնիլ»** (ն. տ.):

▪ **Անդեմ նախադասության** գլխավոր անդամ (կարող է արտահայտվել հնչերանգային տարբեր դրսևորումներով).

արևել.՝ «Դժոխք **իջնել**, դրախտ **գնալ**, Անհուն **զգալ**, թովիչ **երգել»** (Հ. Թ.): «**Խանգարե՛լ**, ինչի համար» (Պ. Ս.): «**Շարունակե՛լ** պիեսը» Օ՛, ինչե՛ր, Ինչե՛ր եք դուք ասում» - Ձեռագիրը **ջնջե՛լ» Դու՛րս շարտել**, դու՛րս»» (Ե. Չ.)

արևմտ.՝ «**Հերոսանալ** խանդավառությամբ ու **սրբանալ** հավատքով» (Ն. Ս.): «**Հաւատալ** եւ **չկորսնցնել** յոյսը»... («Ժամանակ»): «Երբէք **չմոռնալ** պատմութեան դասերը եւ **ճանչցնել** Հայ դատը»... («Մարմարա»):

Բացի վերը նշված կիրառություններից՝ արևելահայերենում և արևմտահայերենում հատկանշական են անորոշ դերբայի հետադաս գործածությունները այնպիսի կապակցությունների հետ, ինչպիսիք են՝ **պետք է // անհրաժեշտ է // հարկավոր է // հնարավոր է // հարկ է // կարելի է // հաճելի է + ուղղական անորոշ դերբայ** կառույցները: Այսպիսի նախադասություններում ստորոգյալները մեծ մասամբ կազմված են **ածական վերադրի** և **է** բայի բաղադրությամբ: Օրինակ՝

արևել.՝ «Օ՛, բառացի անգամ **կարելի է ասել»**» (Ե. Չ.): «Նրանք **պատրաստ են ձեռքից բաց թողնել** այդ հնարավորությունը...» («Գրական սփյուռք»): «...Ինչպես **սովոր էիասել** նախկինում...» (ն. տ.):

արևմտ.՝ «**Հարկ է ըսել**, որ ՀՀ - Սփիւռք հարաբերութիւնները նոր զարգացումի ընթացք բռնած են» («Ազդակ»): «Արդեօք **կարելի է ըսել** թէ սա զարգացումները յաջող բանի մը կը տանին» («Ժամանակ»): «Խօսնական ըսաւ, որ **հարկ է բանակցիլ** միա կողմին հետ նոյնպէս» («Ազդակ»):

Արևմտահայերենում ևս շատ տարածված են **միադիմի կառույց + անորոշ դերբայ** կաղապարով նախադասությունները: (Այս կապակցությունների վերաբերյալ միասնական կարծիք չկա. լեզվաբանների մի մասը նման կառույցներում անորոշ դերբայը համարում է ենթակա, իսկ միադիմի կառույցը՝ ստորոգյալ, մյուսների կարծիքով՝ կառույցն ամբողջությամբ բաղադրյալ ստորոգյալ է, հետևաբար անորոշ դերբայն էլ ստորոգելիական վերադիր է, ինչպես՝ «Եթե մեռնել, բայց առայժմ **ապրել է**

**պետք»** (Պ. Ս.): Նշված կառույցը արևմտահայերենում այլ համարժեք ունի. նույն նշանակությունը արտահայտվում է **ապակատար դերբայ + է** կառույցով: Ընդ որում, ուզում ենք հատուկ ընդգծել, որ հանգույցը արտահայտվում է միայն էական (օժանդակ) բայի եզակի երրորդ դեմքով: Մյուս դեպքերում (օրինակ՝ **առնելու եմ, առնելու էի** և այլն) այսպիսի կառույցները հարկադրական եղանակի ժամանակաձևեր են: Օրինակ՝ «Սա խնդիրը լուծելուն համար վիճակահանութիւն **ընելու է**» (Ե. Օ.), «Բարոյականութիւնը կարեւորութիւն չունի, աղէկ ախորժակ **ունենալու է**» (ն. տ.), «Աբխտղոմ աղան կմտմտար, որ շուտով կին **առնելու է, շոգենավ նստելու է** և Տրապիզոն **փախչելու է**» (Հ. Պ.): Սրանից բացի՝ **ապակատար դերբայ + է** կաղապարի՝ որպես միադիմի կառույցի կամ որպես ժամանակաձևի ընկալման համար էական դեր է կատարում նախ և առաջ ենթակայի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև խոսքային միջավայրը (համատեքստը): Օրինակ՝ «Հոս երկար մնալու պարագային **խենթենալու է**»: Այս նախադասության մեջ ընդգծված կառույցը կարելի է երկու իմաստով հասկանալ՝ և՛ որպես բաղադրյալ ստորոգյալ՝ **կարելի է խենթանալ**, և՛ որպես պարզ ստորոգյալ՝ **խենթանալու է (կխենթանա)** իմաստներով: Սակայն եթե այս նախադասությունն ունենա ենթակա, ապա այն կունենա միայն պարզ ստորոգյալի արժեք: Հմմտ. «Հոս երկար մնալու պարագային *տղան խենթենալու է*»:

Կան մի քանի բայեր, որոնք երկու գրական լեզուներում էլ սովորաբար գործածվում են միայն անորոշ դերբայի հետ, ինչպես՝ **կարողանալ - կրնալ, ձգտել - ձգտիլ, ճգնել - ճգնիլ, համարձակվել - համարձակիլ, հանդգնել - յանդգնիլ** և այլն, ինչպես՝ «Երգեցի Կարմիր Ավարայրը, Մասիսը՝ **Ձգտելով** հին փառքը հայոց սրտերում անմար միշտ **պահել**», «Կոչեցի **ելնել** վերստին, **թոթափել** փոշին բարբարոս» (Ե. Չ.):

Արևելահայերենում և արևմտահայերենում հաճախ անորոշ դերբայը (գոնե իր ձևով) որպես խնդիր պայմանավորված չէ խնդրառու բայի պահանջով: Սեռական-տրական կամ բացառական հոլովով դրված գոյական-խնդիր պահանջող մի քանի բայեր գործածվում են ուղղական հոլովով դրված անորոշի հետ, ինչպես՝ **վախենում է ընդունվել** (փոխ.՝ վախենում եմ ընդունվելուց), **խուսափում է ասել** և այլն: Կան այնպիսի բայեր, որոնց **անորոշ դերբայ-խնդիրը** կարող է դրվել **ուղղական հոլովով**:

Այս ձևը, ինչպես նշեցինք, կոչվում է **բացարձակ անորոշ** կամ **բացարձակ աներևույթ**, որը, իր բայական էությանը պայմանավորված, պատասխանում է միայն **ի՞նչ անել** հարցին: Վերը նշված կապակցություններում անորոշ դերբայը զուրկ է հոլովի քերականական կարգից և դիմավոր բայի հետ կազմում է մի միասնական բաղադրյալ ստորոգյալ: Օրինակ՝ «Նա **պատրաստվում էր ձգանը քաշել...**» («Գրական սփյուռք»), «Եվրահանձնաժողովը **հրաժարվել է խոչընդոտել** ռուսական «Հարավային հոսք» գազատարի կառուցմանը» («168 ժամ»): «Հալեպի հայութիւնը **յոյս ունի անպայման վերադառնալ** իր տունը» («Ազդակ») և այլն:

Անորոշի **սեռական-տրական հոլովաձևը** կիրառվում է այնպես, ինչպես գոյականի սեռական-տրական հոլովաձևը, այն է՝ որպես գոյականից կախված ձև հանդես է գալիս գոյականական անդամի լրացումների, իսկ որպես բայից կախված ձև՝ խնդրի կամ պարագայի պաշտոններով: Սկզնադրյուրներում **սեռական-տրական հոլովով** դրված անորոշ դերբայի ամենից տարածված կիրառություններից են՝

- **Որոշիչ.**

արևել.՝ «Էլ **համբերելու** սիրտ ու տեղ չկա» (Հ. Թ.): «Այս տարի դարձյալ չլուծվեց **ռոզգելու** ջրի խնդիրը» («Հայկական ժամանակ»): «**Բուժելու** պահը ծանր է» («Առավոտ»):

արևմտ.՝ «Հայաստան-Սփիուք գործակցութեան համար **ընելու** բաներ իրաւ շատ կան» («Ժամանակ»): «Պէյրութ տեղի ունեցաւ Ռուսիոյ հայերէն Եոլեա Դալլաքեանի **հագնելու** եւ արդուզարդի պարագաներու նոր հաւաքածուին ցուցադրութիւնը» («Ազդակ»): «Հակառակ երկարամեայ խարդախ ու կեղծաւոր կեանքին՝ աս հրէշը երջանկութիւն ունեցած էր բարի, անկեղծ, անխարդախ մարդու անուն մը **ապահովելու**» (Ե. Օ.):

- **Հատկացուցիչ.**

արևել.՝ «...Մյուսը **խոսելու** իրավունք չունի» (Հ. Թ.): «Կարիք չկա **աղմկելու**» (Ե. Զ.): «Այդ վկայականով նրանք ստացել են **դասավանդելու** իրավունք» («Ազգ»):

արևմտ.՝ «...Մէկ քանի ժամուան մէջ **կատարելու** ուժը կը զգամ» (Ա. Զ.): «**Աշխատելու** համարձակությունը կը պակսեր ինձի» (Զ. Ո.): «Զարնված հոգին **փախչելու** պետք ունի» (Զ. Ո.): «Բնաւ յոյս չունէի զինք **տեսնելու**» (Գ. Զ.): «Նույն գետը անձայր ցանկության վայրկանի մը մեջ կամուրջն ալ առեր, վար էր իջել անոր վրա քանի մը

մարդեր **գտնելու** հույսով... քանի մը շափրակ **խլելու** իղձով» (Մ. Մ.): «Հոգնած մարմիններին գետին մեջ երթալ **թաղելու**, ջուրը **ծծելու**, **զովանալու**, **ապրելու** անընկճելի պետք մը կզգային» (Մ. Մ.):

▪ **Ժամանակի պարագա.**

Արևմտահայերենում սեռական - տրական հոլովով հանդես եկող անորոշ դերբայը կատարում է նաև **ժամանակի պարագայի** պաշտոն: Օրինակ՝ «Չիս **տեսնելուն** կցատկեր տեղեն ավելի ուժգին և ավելի անզուսպ հեկեկալով» (Զ. Ո.): Ինչպես նկատում ենք, այս դեպքում անորոշի տրականը շարահյուսական այս գործառույթով համարժեք է դառնում արևելահայերենի համակատար դերբայի նույն գործառույթին: Արևելահայերենում ևս անորոշի սեռական-տրականը դառնում է ժամանակի պարագա, բայց միայն կապերի միջոցով (**ընթացքում**, **ժամանակ**, **պահին** և այլն). հմմտ. «Ինձ **տեսնելուն պես** ցատկում էր տեղից՝ ավելի ուժգին և ավելի անզուսպ հեկեկալով»:

▪ **Նպատակի պարագա.**

արևել.՝ «Առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշից, համարյա թե կոացել՝ հավասարակշիռ **մնալու**» (Ա. Բ.): «Գյուղ էին իջել հովիվ պատանիք՝ աղջիկ **տեսնելու**, պարի ու կոխի» (Հ. Թ.):

արևմտ.՝ «Մայրս ու քույրս փողոց նետվեր էին զիս **փնտրելու**» (Զ. Ո.): «Ճիգ մը կյրնէի իւրաքանչիւր տող վերջնական ձեւով **յղանալու** եւ թուղթին **յանձնելու**» (Ա. Չ.): «Առավ, տարավ այն տղեկները, որոնք իր կարմրորակ ջուրին մեջ ձեռքերնին **լվալու** և իր վայրի գեղեցկությունը **ըմպելու** եկեր էին» (Մ. Մ.): «Օր մը քամի մը մարդեր գացին ծառին տակ **լոգնալու**» (Մ. Մ.):

▪ **Պատճառի պարագա** (անորոշի սեռական-տրական + **պատճառով**, **հետևանքով** և այլն):

արևել.՝ «Քեզնից **հեռու գտնվելու պատճառով** Մոսկվան ինձ լրիվ դատարկ է թվում» (Պ. Ս.): «Հայտը ժամանակին **չներկայացնելու պատճառով** դուրս է մնացել ընդունելության քննությունների մրցույթից»:

արևմտ.՝ «Պատերազմ **ծագելուն** պատճառով մենք դեռ ուշքի եկած չենք»: «Տարածքները **բաժնելուն հետևանքով** զատուեցան անոնց ճամբաներն ալ» (Ն. Ս.):

«Հարցն անլուծելի **թողելուն պատճառով** ներկայիս հոն առաւել լուրջ խնդիրներ ծագած են»... (հեռ.):

▪ **Վերաբերության անուղղակի խնդիր** (անորոշի սեռական-տրական հոլով + մասին // վերաբերյալ).

արևել.՝ «Մի՛ մտածիր **աշխարհից** շուտ **հեռանալու մասին**. ամեն մարդ ունի իր ժամանակը» (Գ. Խ.): «...Սակայն ավանդները **փոխհատուցելու մասին** վարչապետը այդպես էլ կոներտ բան չասաց» («Հայկական ժամանակ»):

արևմտ.՝ «Կը խորհիմ վերջին գիրքս ֆրանսերէն **տպելուն մասին**» (հեռ.): «Կը մտածէի ազգին **տկարանալու մասին**»... (Շ. Շ.): «Քեզի կը խօսէի, արժանաւոր զաւակ **ըլլալուդ վրայ** կը խօսէի» (Ե. Օ.):

Նկատենք, որ արևմտահայերենում վերաբերության նշանակություն ունի նաև **վրայ** կապը (տե՛ս Ա. Կռանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրուֆ, 1998, Հայոց լեզուի նոր բառարան, աշխատասիրութեամբ՝ Ա. Տէր-Խաչատրեան և այլք, Պէյրուֆ, 1992), ինչպես՝ **խոկալ բանի մը վրայ**: Ինչպես՝ «Ամեն օր հոն կհաճախեմ՝ գիտնական վարդապետե մը դաս առնելու, կստանամ նաև շահեկան տեղեկություններ ու կխոկամ այս արևելյան ժողովուրդներուն **գրականության ու բարքերուն վրա**» (Զորջ Բայրոն):

Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում անորոշի սեռական-տրականի ձևը կարող է դառնալ վերաբերության խնդիր նաև առանց կապի, օրինակ՝ «Ան իր կյանքը **ապահովելու** մտահոգած էր» (Զ. Ո.): Անորոշի այսպիսի գործածությունները այնքան էլ տարածված չեն:

▪ **Սահմանափակման անուղղակի խնդիր** (անորոշի սեռական-տրական հոլով + մեջ).

արևել.՝ «...Նա մեծ հմտություն ունի Միամիտ մարդկանց **համոզելու մեջ**»» (Ե. Զ.): «Պարզվեց, որ ռեկորդակիր Ռոջեր Թոմսոնը պաղպաղակ **ուտելու մեջ** հավասարը չունի» (հեռ.):

արևմտ.՝ «Սա պարոնը, որ ինքզինքը Ծերենց կկոչէ, կերպարներ **կերտելուն մեջ** Մանուկենց է» (Հ. Պ.): «**Խոսելու մեջ** շատ ճարտար է հեղափոխականը» (Ե. Օ.): «Յակոբ Պարոնեան երգիծական կերպարներ **կերտելուն մեջ** գերազանցած է իր ուսուցիչները» (Հ. Օ.):



Անորոշ դերբայի **բացառական հոլովը**, պայմանավորված իր արտահայտած հոլովական տարբեր իմաստներով, նախադասության մեջ կատարում է շարահյուսական զանազան պաշտոններ, որոնցից ստորև ներկայացնում ենք հաճախադեպ գործածությունները:

- **Պատճառի պարագա.**

արևել.՝ «**Շտապելուց** թև են առել, դարձել թեթև թիթեռներ» (Հ. Թ.): «Ունանի աչքին ընկավ Անտոնի ճակատի սպին, որ **կռանալուց** ուռել էր» (Ա. Բ.): «Հոգնել եմ արդեն հանդարտ **հոսելուց**»... (Հ. Ս.):

արևմտ.՝ «**Խնդալէն** շունչս կտրեցաւ»: «Ալ յոգնած եմ **ըսպասելէն** տենչանքներուս մեղրին անուշ» (Մ. Մ.): «Կնոջ աչքերը ուռած ու կարմրած էին **լալէն**» (Գ. Զ.):

- **Ժամանակի պարագա** (կապական կառույցների հետ)՝

արևմտ.՝ «Տուն վերադարձայ անձրեւը **դադարելէն ետք**» (Զ. Ո.): «Ինը տարի **ուսանելէ ետք** եղբայրս մասնագէտ բժիշկ դարձաւ» (Տ. Կ.): «Ինքնաբերաբար մակոյկը **վեր քաշելէն ետք** նորէն Սարգիսին խուցը ելան» (Ն. տ.): «Երեսուն տարի **աշխատել է ետք** ուսուցիչը հանգստեան կոչուեցաւ» (Ն. տ.):

Արևմտահայ գրական լեզվում ուշադրության է արժանի բացառական հոլովով դրված անորոշ դերբայը. այն կառուցվածքային առումով համընկնում է ընթացակցական դերբային, սակայն սրանք ունեն իմաստային տարբեր կողմեր: Այսպես՝ 1. **անորոշի բացառական հոլով**՝ «Շահ ունինք մենք աս մարդը մեր տուն **առնելէն**» (Շ. Շ.): Այս դեպքում անջատման խնդիր է: 2. **ընթացակցական դերբայ**՝ «Զիս կը հրմշտեր, արմունկով կզարներ, կանցներ ոտքերուս վրա **կոխոտելէն**» (Զ. Ո.): Ինչպես նկատում ենք, այստեղ ձևի պարագա է, և գործ ունենք քերականական համանունության հետ:

- **Անջատման անուղղակի խնդիր.**

արևել.՝ «Պետությունն իրեն ազատել է իր քաղաքացիների մասին **հոգալուց**» («Հայկական ժամանակ»):

արևմտ.՝ «Շահ ունինք մենք աս մարդը մեր տուն **առնելէն**» (Շ. Շ.): «Շագիկ հանըմ կ'օգտվեր ամուսնու **լռելէն**»... (Ե. Օ.):

Երկու գրականներում անորոշ դերբայի **գործիական հոլովի** շարահյուսական հիմնական կիրառություններն են.

▪ **Ձևի պարագա.**

արևել.՝ «Շները **հաչելով** ուղեկից եղան ձիավորին, հետո իրար հետ **խաղալով** վերադարձան» (Ա. Բ.): «Ազատության վեհ գործի համար դու մաքառեցիր՝ միշտ **մագլցելով** դեպի անհունը» (Ա. Ի.): «Եվ ազգեր եկան ոստերով դալար՝ **ճախրելով** դեպի արևը պայծառ» (Ա. Ի.): «Եվ արմավենին **արհամարհելով** լուռ էր» (Ա. Ի.):

արևմտ.՝ «Կը քալէի **գուշակելով** անճանաչելի դարձած ճամփաները» (Ն. Ս.): «Չորս կողմես իմիններուս թառամած նայվածքները ատեն-ատեն ինձ **ուղղվելով** զիս իմ հայրիկի պաշտոնիս գիտակցության կիրավիրեի» (Զ. Ո.): «Ես երգելով կ'յուզիմ մեռնիլ» (Ս.): «Մենք **քալելով** վերադարձանք ձեր քով»: «Մայրը քնացուց իր փոքրիկը՝ մեղմորեն **շոյելով** անոր գլուխը» (Ն. Ս.):

Օրինակներից ակնհայտ է այն իրողությունը, որ գործիականով դրված անորոշը **ձևի պարագա** է դառնում մեծ մասամբ որպես դերբայական դարձվածի գերադաս անդամ գործածվելիս: Քանի որ անորոշի գործիական հոլովին բնորոշ չէ առարկայական նշանակությունը, այն նախադասության մեջ խնդրի պաշտոնով գրեթե հանդես չի գալիս:

▪ **Ժամանակի պարագա.**

արևել.՝ «**Լսելով** ձայնը շեփորի՝ վեր թռավ տեղից հոլաձև»... (Ե. Չ.): «Եվ **տիրանալով** երկրին այսպես՝ Ձենով Օհանին բերին հանդես» (Ն. տ.): «...Եվ հանկարծ **թռչելով** տեղից՝ սկսեց թպրտալ օդում»» (Ն. տ.):

արևմտ.՝ «Սա լուրն **առնելով**՝ վերադարձավ»:

▪ **Պատճառի պարագա.**

արևել.՝ «**Սարսելով** ահից իր խելագար՝ Քաշեց մի հսկա, վիթխարի քար» (Ե. Չ.): «Մի ինչ-որ միջակական հերոսի **Չլինելով**՝ դառնում է անիմաստ ու չնչին»... (Ն. տ.):

▪ **Հիմունքի (հակառակ հիմունքի) պարագա.**

արևել.՝ «Այս անձն էր, որ պիտի, Իր **ասելով**, այսօր թատերգության մեջ Մի կենտրոնական հերոս լիներ» (Ե. Չ.): «Մնում է ուստի մեզ, հեղինակի Կյանքի բովանդակ գործից **ելնելով**, Փորձել համոզել ու ապացուցել»» (Ն. տ.):

արևմտ.՝ «Քնարերգակ **չըլլալով**՝ Վարուժանը սիրող սիրտ մ'ունի» (Ա. Չ.):

Ամփոփելով ենթագլուխները՝ նշենք, որ անորոշը հայերենում մասնակցում է **բառակազմական** գործընթացին, մասնավորապես անորոշ դերբայի զուգորդումով են կազմվում զուգաբայերը, պատճառականի վերլուծական ձևերը, առհասարակ բայական բոլոր հարադրությունները: Այն նաև մասնակցում է բայի **ձևակազմական** գործընթացին, որին կանդրադառնանք աշխատանքի հետագա շարադրանքում:

Արևելահայերենում և արևմտահայերենում անորոշի յուրահատուկ դրսևորումներից է այսպես կոչված մակբայացումը՝ պարագայական կիրառությունը՝ թեքված բոլոր հոլովներով:

Երկու գրականներում բայական բառակազմական-իմաստային նմանություններն ու տարբերություններն ի հայտ են գալիս անորոշ դերբայով կազմված բառակապակցություններում, հատկապես հարադրավորների ու դարձվածքների կազմություններում:

Ինչպես տեսանք, անորոշը արևելահայերենում և արևմտահայերենում հաճախակի է հանդես գալիս միադիմի կառույցների, նաև էական բայի հետ: **Իմաստային-քերականական** տեսանկյունից բայն արտահայտում է գործողության քերականական նշանակություն (այլ կերպ ասած՝ ժամանակի մեջ իրականացվող շարժման հատկանիշ) և բնորոշվում է նախադասության մեջ ստորոգյալ դառնալու կարևորագույն հատկությամբ: Ընդհանուր տիպաբանության տեսանկյունից այս երկու բնորոշումները քննարկելիս կարելի է նկատել, որ գործողության նշանակությունը և որպես ստորոգյալ նրա գործառույթը միմյանց հետ սերտորեն կապված տրամաբանական հասկացություններ չեն: Ըստ էության, բայի որոշ դրսևորումներ կարող են հանդես գալ նաև ոչ որպես ստորոգյալ (անկախ դերբայները):

**Ձևաբանական** և **շարահյուսական** առումներով բայը հայերենում առավել բարդ քերականական կառուցվածք ունեցող խոսքի մաս է: Այդ համակարգի դժվարությունն այն է, որ նախ և առաջ հենց բայական ձևերում են արտահայտվում այսպես կոչված ստորոգումային կարգերը, ինչպես նաև այն կարգերը, որոնք կապված են ամբողջական նախադասության հետ՝ ժամանակ, խոնարհում, դեմք:

Արևելահայերենում և արևմտահայերենում համապատասխանաբար բայական բառույթի շրջանակներում միավորվում են ոչ միայն ստորոգումային ձևերը՝ ձևա-

բայերը: Այդ շրջանակներում դիտարկվում են նաև ոչ ստորոգումային ձևերը՝ անկախ դերբայները:

Զուգադրելիս պարզ է դառնում, որ երկու գրականներում էլ բայը, ընդհանուր հատկանիշներով հանդերձ, դրսևորում է նաև մի շարք տարբերություններ, որոնք արտահայտվում են հիմնականում կառուցվածքային-ձևակազմական համակարգում, մասամբ նաև շարահյուսական կիրառություններում: Այս ձևերի զարգացումը արևելահայերենում և արևմտահայերենում տարբեր է:

Երկու գրականներում անորոշ դերբայը բառակապակցությունից դուրս անվանում է գործողությունն առանց խոնարհման, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերի: Այն ունի բայասեռ, նաև հոլովվում է՝ հանդես գալով գոյականական բոլոր պաշտոններով: Անորոշի ձևն ինքնին ժամանակի նշանակություն չի արտահայտում, սակայն դառնում է բայական անդեմ նախադասություն: Ու թեև այս դերբայը չունի կերպի քերականական կարգ, սակայն անորոշին խորթ չեն կերպաժամանակային որոշ նշանակություններ, որոնք դրսևորվում են, օրինակ, բայական անդեմ նախադասություններում՝ **Լռե՛լ**: Բայական շարահյուսական բոլոր կարգերից առավել արտահայտված է կառավարումը:

Ըստ էության տարբերակվում են անորոշի առարկայական որոշ կիրառություններ: Սակայն հետազոտողների մեծ մասը անորոշի առարկայացումը խոսքիմասային փոխանցում չի համարում: Մենք հակված ենք այն տեսակետին, որ անորոշ դերբայը երկխոսքիմասային արժեք ունի (երկարժույթ է), ինչն էլ փորձեցինք ներկայացնել այս ենթագլուխներում:

### **2.3. Անկախ դերբայների հիմքակազմության յուրահատկությունները արևմտահայերենում**

Մինչ մյուս դերբայների քննությանն անցնելը հարկ ենք համարում անդրադառնալ հատկապես արևմտահայերենի բայական հիմքակազմությանը, քանի որ արևելահայերենի համեմատությամբ դերբայական և կատարյալի հիմքերում նկատվում են որոշակի տարբերություններ:

Ինչպես հայտնի է, բայական հիմքերը լինում են երեք տեսակ՝ ներկայի (անորոշի, անկատարի), կատարյալի և դերբայական հիմք:

**Ներկայի** հիմքը, ինչպես և ընդհանրապես հիմքերը լինում են առաջնային - երկրորդական - երրորդային (**սովոր-** //**սովորեց-**//**սովորել-**): Հիմքերի աստիճանականությունը հանդես է գալիս նաև բայական ձևակազմության մեջ: Ներկայի հիմքը բառակազմական-ձևակազմական տեսանկյունից իր ներսում նույնպես կարող է լինել եռաստիճան՝ **սովոր+ել, սովոր+եցն+ել, սովոր+եց+վ+ել**: Ի տարբերություն ներկայի հիմքի՝ կատարյալի և դերբայական հիմքերը չունեն այս աստիճանականությունը: Ասվածը հավասարապես վերաբերում է երկու գրականներին:

Հայերենի բայական հիմքերն ունեն կառուցվածքային ու իմաստաբանական այլ յուրահատկություններ նույնպես: Հիմքն արտահայտում է բառիմաստի գաղափար, իսկ բայական հիմքը բայիմաստի կրողն է:

Հայերենում որոշ բայահիմքեր կերպային իմաստավորումներ են ստացել: Սովորաբար անցյալ կատարյալի հիմքը ավարտված կերպիմաստի կրողն է, անորոշ դերբայի հիմքը՝ անկատար կերպի: Սակայն հայերենի բայը դրսևորում է եռակերպության միտում՝ **կատարված, կատարվող, կատարելի**, և բայական համակարգում երեք կերպերի արտահայտման համար դեր են կատարում դերբայական վերջավորությունները ևս, իսկ դիմավոր բայերի համար՝ նաև **կ** եղանակիչը:

Պատահում է, որ հիմքը միաժամանակ և՛ բառակազմական, և՛ ձևակազմական արժեք է ունենում, ինչպես՝ **քայլ-**ել բառաձևի հիմքն է: Սա լինում է այն դեպքում, երբ հիմքին ավելացող մասնիկը երկբնույթ է. գործում է և՛ իբրև ածանցական տարր, և՛ իբրև ձևակազմիչ տարր: Այսպիսի հիմքերը էդ. Աղայանը անվանում է **բառակազմական-ձևակազմական հիմքեր**<sup>130</sup>:

**Ներկայի** կամ **անկատարի** հիմքի կազմությունը նույնպես երկու գրականներում էլ նույնն է. անորոշ դերբայից հանում ենք խոսքիմասային ցուցիչ-ածանցը. ընդ որում, աններածանց բայերը ունենում են **պարզ** հիմք, իսկ ածանցավոր բայերը՝ **ածանցավոր**

<sup>130</sup> Տե՛ս **Աղայան** **Էդ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967: **Աճառյան** **Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Եր., 1961: **Զահուկյան** **Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974:

հիմք, ինչպես՝ արևմտահայերենում **խօսիլ – խօս-, խօսեցնել – խօսեցն-, երգել – երգ-, հագնել – հագն-, թռչիլ – թռչ-, մոռնալ – մոռն-:**

Արևմտահայերենում ներկայի հիմքից են կազմվում **ե** խոնարհման պարզ (նաև կրավորական ու բազմապատկական) բայերի ենթակայական, հարակատար, վաղակատար դերբայները, **-ն-, -չ-, -ցն-** ածանցներով բայերի ենթակայական դերբայը, բոլոր բայերի ժխտման դերբայները:

**Դերբայական հիմքը** երկու գրականներում գրեթե տարբերություններ չի դրսևորում: Արևելահայերենում որպես դերբայական հիմք հանդես է գալիս անորոշ դերբայը՝ **-ալ, -ել** մասնիկներով՝ **գրել-, կարդալ-:** Արևմտահայերենում նույնպես **ա** և **ե** լծորդության բայերի համար դերբայական հիմքը համընկնում է անորոշ դերբային, բայց **ի** և **ու** լծորդության բայերը փոխում են իրենց լծորդները՝ հանդես գալով **ե** լծորդությամբ, ինչպես, օրինակ՝ **խօսիլ – խօսել-էն, թողուլ – թողել-էն:** Արևելահայերենում դերբայական հիմքից կազմվում են **համակատար, ապակատար** (ապառնի առաջին) և **ապառնի երկրորդ**<sup>131</sup> դերբայները՝ **կարդալ – կարդալիս – կարդալու – կարդալիք:** Արևմտահայերենում դերբայական հիմքից կազմվում են **ընթացակցական** և **ապակատար** դերբայները՝ համապատասխանաբար **-էն** և **-ու** մասնիկներով՝ **սորվիլ – սորվել+էն, սորվիլ –սորվել+ու:** Երկու գրականներում այս կանոնից շեղումներ չկան:

Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ անցյալի հիմքը լինում է երեք տեսակ **արմատական, ռեական, ցոյական,** արևմտահայերենում անցյալի հիմքը երկու տեսակ է՝ **արմատական** և **ցոյական,** ընդ որում՝ ցոյական հիմքն ունի չորս ցուցիչ՝ **-աց-, -եց-, -**

<sup>131</sup> Ապառնի դերբայն առաջին անգամ որպես անկախ դերբայ առանձնացրել է Ա. Բագրատունին՝ **ընդունելութեան ապառնի** անունով, որն արտահայտում է առարկան, օբյեկտը բնութագրող կատարելի կերպավիճակային հատկանիշով գործողություն (տե՛ս **Պետրոսյան Հ.,** Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 299): Այն առկա էր նաև լեզվի զարգացման նախորդ փուլերում. մասնավորապես գրաբարում այն կազմվում էր **անորոշ դերբայ + ոց** կաղապարով: Գրական արևելահայերենում և արևմտահայերենում էլ այն կազմվում է դերբայական հիմքից, բայց **-իք (ի)** վերջավորություններով: Հայ քերականագիտության մեջ ապառնի երկրորդ դերբայի վերաբերյալ միասնական կարծիք չկա. ոմանք այն դիտում են դերբայական հարացույցի մեջ, ոմանք՝ ոչ (**Աբրահամյան Ա.,** Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 382: **Աղայան Էդ.,** ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 346 և այլն): Մենք նույնպես այն կարծիքին ենք, որ **-իք**-ով կազմությունները (**խոսելիք, գրելիք**) դերբայներ չեն, քանի որ չունեն բայական ընդհանուր կարգերից սեռի, ինչպես նաև քերականական ժխտման կարգերը (մյուս բոլոր դերբայներն ունեն նշված կարգերը):

**g-**, **-ուց-**: Արևմտահայերենում **-ցն-** ածանցի **ն-**ն փոխվում է **ուց-** հիմքակազմիչ մասնիկի, ինչպես՝ **փախցնել – փախց+ուց-**, **կորսնցնել – կորսնց+ուց-**<sup>132</sup>:

Սա էր արևմտահայերենի անկախ դերբայների բայահիմքերի ընդհանուր պատկերը:

#### 2.4. Բայի և անվան (գոյական, ածական) քերականական-իմաստային հատկանիշները անկախ դերբայների համակարգում

Ինչպես գիտենք, բայական համակարգում ածականի և գոյականի հետ քերականական-իմաստային առնչություններ դրսևորում են **հարակատար, ենթակայական** դերբայները: Հայտնի է, որ հայերենում բոլոր խոսքի մասերը հնարավորություն ունեն հանդես գալու գոյականաբար (գործածվում են փոխանվանաբար կամ անվանողական արժեքով) և դրևորում են գոյականին բնորոշ քերականական հատկանիշներ: Ավելին, փոխանվանական կիրառությունը հիմք է դառնում խոսքիմասային անցման. տեղի է ունենում դերբայների գոյականացում:

**Ենթակայական դերբայ:** Ենթակայական դերբայը, որն իր հիմքերն ունի գրաբարում, հայ քերականության մեջ նախ երկար ժամանակ «ընդունելութեան ներկայ», իսկ հետո պարզապես ներկա դերբայ է կոչվել:

Արևմտահայ քերական Ա. Այտընյանը պահպանում է դերբայի այս «ընդունելութիւն» անվանումը՝ ներկայացնելով այն որպես ածական դերբայ. «Դերբայը երկու գլխաւոր մաս ունի. **1. Աներկույթ. 2. Ընդունելութիւն՝** տեսնող...»<sup>133</sup> (ընդգ. մերն է): Ա. Աբրահամյանը նշում է, որ Այտընյանին չեն հետևել մյուս քերականները: Մինչդեռ հարցի այտընյանական մոտեցմանը հանդիպում ենք նաև Հ. Գազանճյանի քերականության մեջ: Նա նախ դերբայ է կոչում «բայերուն աներեւոյթի եւ ընդունե-

<sup>132</sup> Էդ. Աղայանը հիմքերի ավանդական բաժանումը երկուսի՝ **անկատարի** կամ **անորոշի** և **կատարյալի**, բավարար չի համարում: Նա փաստերով ապացուցում է, որ ժամանակակից հայերենի բայական համակարգում (ընդ որում՝ բոլոր բայերի համար) գործում է մի երրորդ հիմք ևս: Դա էդ. Աղայանը կոչում է **դերբայական բայահիմք** կամ **վերջավոր բայահիմք**, քանի որ այն միշտ ունենում է **-ել** կամ **-ալ** վերջավորությունը: Այստեղ Աղայանը **-ան-**, **-են-**, **-ն-**, **-չ-** ածանցները և պատճառական բայերի անկատարի հիմքը կոչում է անկատարի վերջավոր հիմք (տե՛ս **Աղայան Էդ.**, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 332, 334):

<sup>133</sup> **Այտընյան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 101:

լութեան ձեւերը՝ տարբերակելով **ներկա ընդունելություն** (աժական դերբայ, գոյական դերբայ), **անցյալ ընդունելություն**, **ապառնի ընդունելություն**<sup>134</sup>: Իսկ արդեն Եղ. Տասնապետյանը գրում է. «Ներկայ դերբայը բան մը ընողի կամ եղողի գաղափարը կ'արտայայտէ: Անոր այս նշանակութիւնը նկատի ունենալով է, որ ոմանք զայն կոչած են ենթակայական դերբայ»<sup>135</sup>: Նշենք նաև, որ հետագայում ընդունելի չդարձավ «**ներկա դերբայ**» տերմինի գործածությունը, այնուամենայնիվ այդ անվանումը հանդիպում է նաև ավելի ուշ շրջանում:

Պետք է նշել, որ, իրոք, ենթակայական դերբայը **ներկա** կամ **ներկա ժամանակ** չէ և առհասարակ մեր լեզվի երկու տարբերակներում իր մեջ չունի ժամանակի քերականական կարգի իմաստ: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, «այս դերբայը կարող է բոլոր ժամանակների իմաստով եւս բանել եւ յաճախ ժամանակի ոչ մի որոշ իմաստ ցոյց չի տալիս, այլ այնպիսի եղելութիւն, որ միշտ ամէն ժամանակ կարող է լինել»<sup>136</sup>:

Մ. Աբեղյանը այս դերբայը անվանեց «**ենթակայական**»՝ խնդրին մոտենալով շարահյուսական տեսանկյունից: Ենթակայական դերբայն արտահայտում է գործող, եղող, լինելու կամ գործողության ու եղելության իրագործման ունակ կամ ենթակա լինելու գաղափար<sup>137</sup>: Ենթակայական դերբայը ցույց է տալիս գործողի անուն: Բայց գործողի անուն արտահայտող մյուս բոլոր բառախմբերից տարբերվում է քերականորեն: Սրան նույնպես հատուկ է բայաստեղի քերականական կարգը: Այն շարահյուսորեն գործողի անուն ցույց տվող բառերի մյուս խմբերից տարբերվում է նրանով, որ կարող է ուղիղ խնդիր լրացում ունենալ (խոսքը վերաբերում է ներգործական սեղի բայերին), իսկ ձևաբանորեն տարբերվում է նրանով, որ կարող է ստանալ **-վ-** ածանց և վերածվել կրավորականի: Ենթակայական դերբայը ոչ թե դիտվում է որպես բառային առանձին միավոր, այլ բայական բառույթների քերականական յուրահատուկ դրսևորում է: Լեզվաբան Ա. Աբրահամյանի կարծիքով՝ ենթակայական դերբայը անվերապահորեն չի մտնում դիմավոր ձևերի համակարգային կազմության մեջ. նրա

<sup>134</sup> Տե՛ս **Գագանճեան Յ.**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պոլիս, 1907, էջ 140:

<sup>135</sup> **Տասնապետեան Ե.**, Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 106:

<sup>136</sup> **Աբեղեան Մ.**, Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 102:

<sup>137</sup> Նույն տեղը:



դերը հիմնականում շարահյուսական է<sup>138</sup>: Լեզվաբան Պ. Պողոսյանը ենթակայական դերբայը անվանում է «պոտենցիալ դերբայ»: Նա բայի խոնարհված ժամանակային ձևեր է համարում **ենթակայական դերբայ + եմ** կառույցը և առաջարկում է դրանք մտցնել բայի դիմավոր ձևերի հարացույցի մեջ՝ իբրև սահմանական եղանակի «պոտենցիալ և անցյալ պոտենցիալ ժամանակներ»<sup>139</sup>:

Ենթակայական դերբայը կազմվում է **-ող** մասնիկով: Այս մասնիկը հայ հին գրավոր հիշատակարաններում ավանդվել է երկու ձևով՝ **-ող** և **-աւղ** (հետագայում՝ **-օղ**): Այս առիթով Ա. Աբրահամյանը գրում է, որ սրանք ենթադրաբար երկու տարբեր մասնիկներ են եղել, գուցե և ունեցել են իմաստային տարբերություն, սակայն հետագայում դրանց գործառույթները բոլորովին նույնացել են, իսկ **աւ>օ** հնչյունափոխությունը և **օ** ու **ո** հնչյունների արտասանության հետագա նույնացումը նպաստել են այդ մասնիկների խառնվելուն<sup>140</sup>: Իսկ Հ. Աճառյանը այս մասնիկը ստուգաբանում է այսպես. «Գործող անձ ցույց տալու համար հայերենն ունի **օղ>աւղ** մասնիկը, որ առաջանում է **-atl** ձևից: Այս մասնիկը նույնն է հսլ. **tel** հոմանիշ մասնիկի հետ, մինչդեռ հույնն ու լատինը ունի **-ter**. անհայտ է արիականը»<sup>141</sup>:

Ինչպես տեսնում ենք, լեզվաբանները հիմնականում նկատի ունեն **աւղ>օղ** մասնիկը: Ըստ Ա. Ղարիբյանի՝ այն գրաբարի **ո** խոնարհման անորոշ դերբայի **-ող** մասնիկն է, որը իմաստի տարբերակմամբ և **լ>ղ** անցումով դարձել է ենթակայական դերբայի մասնիկ: «Հայերենի **-ող** ածանցը,- գրում է լեզվաբանը,- վերափոխվելով **-ող** ածանցի՝ ծառայել է իբրև դերբայ կազմելու միջոց, որը բառի մեջ համատեղում է գոյականի և բայի հատկություններն այն չափով, որ շատ քերականներ այս ձևը իրավացիորեն համարում են բայական ձև, կոչելով ենթակայական դերբայ: Եվ իրոք՝ մեր ոչ մի ածանց այնքան կենդանի կերպով կապված չէ բայի հետ, որքան **-ող** ածանցը»<sup>142</sup>: Սակայն գրավոր հիշատակարաններում չկան այդպիսի առանձին մասնիկի գործածության

<sup>138</sup> Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 224-236:

<sup>139</sup> Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 103:

<sup>140</sup> Տե՛ս Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 228:

<sup>141</sup> Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Եր., 1940, էջ 31:

<sup>142</sup> Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Եր., 1937, էջ 131:

փաստեր (միակը «գոլ» բայն է, որից, սակայն, -ոլ-ը չի անջատվում հատուկ կիրառությամբ):

Ինչ վերաբերում է ենթակայական դերբայի կազմությանը, ապա նշենք, որ արևելահայերենում և արևմտահայերենում գործում են նույն սկզբունքները մի տարբերությամբ. արևմտահայերենում **ի** և **ու** լծորդության բայերի ենթակայական դերբայը կազմվում է **ե** լծորդության պարզ բայերի նման (ներկայի հիմք + ող)՝ **խօսիլ – խօսող, թողուլ – թողող**:

Ենթակայական դերբայը գործողի անունն է, ցույց է տալիս գործողության ընթացքի մեջ գտնվող առարկա, ուստի և այդ դերբայի մեջ կա երկու նշանակություն՝ առարկայի և գործողության: Մ. Ասատրյանը նկատում է, որ ենթակայական դերբայի մեջ կա առարկայական ընդհանուր գաղափար, ուրեմն այն գոյական է ինքնին և փոխանվանաբար չի կիրառվում: Նույնը նաև որոշչային կիրառության դեպքում է. հանդես է գալիս ածականին հատուկ շարահյուսական պաշտոնով և գտնվում է իր բնական դրության մեջ: Այսպիսով՝ ենթակայական դերբայի և՛ առարկայական, և՛ հատկանշային կիրառությունները բխում են նրա բուն էությունից՝ առարկայական ընդհանուր նշանակությունից<sup>143</sup>: Եվ եթե այս դերբայը բայական համակարգի մեջ է մտնում, որ ունի սեռի և խնդրառության կարգեր, իսկ մյուս հատկանիշներով մոտենում է գոյականին կամ ածականին, ապա սրանից բխում է, որ ենթակայական դերբայը իր մեջ համատեղում է բայի և անվան հատկանիշներ: Մեր կարծիքով, ենթակայական դերբայի առարկայական և հատկանշային իմաստները ածանցյալ իմաստներ են. բուն իմաստով ենթակայականը գործողություն է, որը ընթացքի մեջ է: Ունի բային բնորոշ կարևոր երեք հատկանիշներ՝ բայիմաստ (որը ընթացքի մեջ եղող գործողությունն է), բայասեռ (ստանում է սեռի խնդիրներ) և կերպ (անկատար կերպ):

Արտահայտելով առարկայական նշանակություն՝ ենթակայական դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս գոյականաբար՝ կատարելով գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններ՝ ենթակա, խնդիր և հատկացուցիչ: Ենթակայական դերբայի հիմնական կիրառություններից է նաև նրա ածականական-որոշչային կիրա-

<sup>143</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գ. Բ, Եր., 1973, էջ 365:

ռությունը: Այս դերբայի որոշչային կիրառությունից բխում է դրա գործածությունը որպես ստորոգելիական վերադիր:

Ինչպես նշեցինք, ենթակայական դերբայը ազատ հանդես է գալիս գոյականաբար, սակայն դարձյալ այն կարծիքին ենք, որ գոյականաբար գործածությունը դեռևս գոյականացում չէ: Գոյականացում ասելով՝ նկատի պետք է ունենալ խոսքիմասային փոխանցումը, տարարժեքությունը, այսինքն՝ բառաձևը և՛ դերբայ է, և՛ գոյական, և ոչ թե դերբայ է, որը գործածվել է գոյականաբար, և որը արձանագրված է բառարան(ներ)ում: Շարահյուսական որոշ կապակցությունների մեջ փոխանվանաբար հաճախակի կիրառվելով՝ այս դերբայը իմաստային յուրահատուկ զարգացում է ապրում. խամրում է դրա արտահայտած գործողության, ընթացքի գաղափարը, և միևնույն ժամանակ նրա ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրացականի: Որոշ բայերի ենթակայական դերբայները ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում վերածվել են գոյականի (**ծնող(ք), ուսանող, գրող, զեկուցող, ծառայող, մատուցող, մտածող, ընթերցող** և այլն): Այսպիսի բառերում բայական իմաստը մթազնած է, գործողություն չի արտահայտում: Սրանց խոսքիմասային պատկանելությունը որոշելիս, իհարկե, պետք է հաշվի առնել նաև շարահյուսական կիրառությունները, սակայն չի կարելի անտեսել կամ երկրորդական համարել դրանց իմաստային-ձևաբանական հատկանիշները կամ հարացուցային արժեքը: Ստացվում է՝ որոշ դեպքերում լեզվում առաջանում են **համանուններ** և խոսքիմասային տարարժեքություն, հետևաբար նաև խոսքիմասային փոխանցումներ: Օրինակ՝ **գրող**՝ որպես **գրել** բային համապատասխան ենթակայական դերբայ նշանակում է՝ **նա, ով գրում է**, և ուղիղ խնդիր է պահանջում, իսկ առարկայական իմաստով նշանակում է հատկապես այն **անձը, որ գեղարվեստական ստեղծագործություններ է գրում**: Ընդհանրապես այս բառաձևերի գոյականացմանը պետք է որոշակի վերապահությամբ մոտենալ. սրանցից մի քանիսը՝ որպես գոյական, ունեն բառարանային գրանցում (ծնող, գրող, ուսանող և այլն): Երկու գրականների զարգացման ներկա փուլում կան ենթակայական դերբայներ, որոնք՝ որպես գոյական, թեև ամրագրված չեն բառարաններում, սակայն հանրության գիտակցության մեջ արդեն հստակ ընկալվում են որպես գոյականներ, ինչպես՝ **ընտրող, մտածող**

(գիտնական, փիլիսոփա), **զեկուցող** և այլն: Նկատենք նաև, որ այս բառաձևերը շարունակում են մնալ նաև դերբայական հարացույցում: Եթե **-ող** ձևի մեջ դրսևորվում է ընթացքի գաղափար, ապա այն դերբայ է, եթե ոչ՝ գոյական:

Ենթակայական դերբայը փոխանվանաբար գործածվելիս արևելահայերենում հոլովվում է **ի** հոլովմամբ, իսկ արևմտահայերենում եզակին ենթարկվում է **ի**, հոգնակին՝ **ու** հոլովման:

Ենթակայական դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս տարբեր կիրառություններով: Ստորև ներկայացնում ենք այս դերբայի՝ գոյականի հետ առնչություններ ունեցող շարահյուսական հիմնական գործածությունները: Դրանցից են՝

▪ **Ենթակա.**

արևել.՝ «Երբ **եկողները** պահվեցին դիմացի անտառում, կտուրի վրա **նստողներն** առաջվա դիրքն ընդունեցին» (Ա. Բ.): «Ատում եմ սերը՝ մահի պես անգութ... Այդ քաղցր թույնը, որով **արբողը** ստրուկ է դառնում» (Ա. Ի.): «Ամենից բարձր **խոսողը** մի վիթխարի տղամարդ էր» (Ա. Բ.):

արևմտ.՝ «Մայրս էր դուռը **գարնողը**» (Զ. Ո.): «Սա գործեն **վախցողը** չի կրնար աւարտին հասցնել զայն» (Հ. Օ.): «Նիստին **նախագահողը** անոր ասածին բերաւ հակառակ ապացոյց մը» («Ազդակ»): «Քսան ղուրուշ ղրկողը իր ով ըլլալը գաղտնի պահած էր» (Ե. Օ.):

▪ **Ստորոգելիական վերադիր.**

արևել.՝ «Որ ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին **լիներ սիրող** ու կարեկից» (Հ. Թ.): «Իսկ ժողովո՞ւրդը, որ եղել է հանճարեղ, Եղել է որմնադիր, եղել է **կառուցող**» (Ե. Չ.):

արևմտ.՝ «Յաղթողը **պարտուող մըն է** սիրոյ կամ բանաստեղծութեան մէջ» (Ն. Ս.): «Միջոն տեղեն հեշտ **ելողներեն** չէր» (Հ.):

▪ **Հատկացուցիչ.**

արևել.՝ «**Տեսնողի** հոգով նախագգաց Սաադին, որ այս վերջին գարունն է» (Ա. Ի.): «Նրա սրտում էլ զարթնում է **հաղթողի** զվարթ ուրախությունը» (Ա. Բ.):

արևմտ.՝ «Ու լավ գործ մը **կատարողի** գոհունակությամբ, դարձյալ դունչը կդնե թաթերուն, կնստի» (Հ. Մ.): «Անձրեւէն **փախչողը** կարկուտի բռնուեցաւ»: «Չար **խօսողին** լեզուն պապանձուեցաւ» (Հ. Պ.): «Ճամփան է ան քիչ գործ **ունեցողներուն**, անոնց, որոնք օտարի հողին վրայեն կերթան» (Հ. Մ.):

▪ **Խնդիրներ.**

արևել.՝ «Այստեղ երկար տարիներ **ժամադրվողներին, հանգստացողներին, փողոցում վիճաբանողներին...** հատուկ է մի առանձին քայլվածք» (Ա. Բ.): «**Հաղթողին** փեսի թախտի մոտ բերին» (Հ. Թ.):

արևմտ.՝ «Կ'արհամարհեմ նաև **սպասողը**, մուրացկանը» (Ն. Ս.): «Թևաբաց կայներ է ծանձաղուտքին մեջ և լոգանքի **գացողներուն** մը պես ցույց կու տա իր առջև սյունացող պտույտքը» (Մ. Մ.):

Ենթակայական դերբայը ինքնին հատկանշային նշանակություն ունի՝ պայմանավորված իր իմաստային յուրահատկությամբ (ինչին անդրադարձել ենք): Սրանից էլ բխում է այս դերբայի՝ խոսքում ունեցած հիմնական՝ **որոշչային** կիրառությունը: Օրինակ՝

արևել.՝ «Եղեգնի երկարուն ցուպը խրեց **այրվող** ավազի մեջ» (Ա. Ի.): «**Սիրող** սիրտը լսում է միշտ այն բոլոր խոսքերը, որ մրմնջում են իրերը» (Ա. Ի.): «Մթնածոր **տանող** միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է» (Ա. Բ.):

արևմտ.՝ «Աչքերս հետզհետե պզտիկցան **հեռացող** նավերուն նման» (Զ. Ո.): «Ձմեռը, ձիւնին տակ՝ ճերմակ թելերը **շարժող** հրեշտակներ են ծառերը. ու կան հեքիաթ **պատմող** ծառեր» (Ն. Ս.): «Կան այդ հեքիաթը **ապրող** մանուկներ» (ն. տ.):

**Հարակատար դերբայ:** Ենթակայական դերբայի քերականական-իմաստային կապը ածականի հետ մեր լեզվի երկու տարբերակներում տարակարծությունների տեղիք չի տվել: Խնդիրն այլ է հարակատար դերբայի դեպքում: Պայմանավորված այս դերբայի երկբնույթ իմաստով (իր մեջ համատեղում է և՛ հատկանշային, և՛ ստորոգումային իմաստներ)՝ արևելահայերենում և արևմտահայերենում զգալիորեն տարբեր են դրա իրացումները:

Երկար ժամանակ հայ քերականագիտության մեջ շատ լեզվաբաններ հարակատար դերբայը չեն ընդունել որպես ինքնուրույն դերբայ: Արևելահայերենի քերա-

կանության մեջ խնդրին շատերն են անդրադարձել: Ստ. Պալասանյանը հարակատարն առանձին դերբայ չի ընդունում. այն համարում է «անցեալ դերբայի» մի տարբերակ<sup>144</sup>: Ի տարբերություն Պալասանյանի՝ Մ. Աբեղյանը մի քայլ առաջ է անցնում. «անցյալ դերբայի» -**ած** ձևի համար ստեղծում է առանձին տերմին՝ **հարակատար**: Սակայն նա նույնպես հարակատարը չի համարում ինքնուրույն դերբայ և դարձյալ դիտում է որպես «անցեալ դերբայի» մի տարբերակ<sup>145</sup>: Ըստ Ա. Աբրահամյանի՝ հարակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ որոշ հետևանքով, իբրև գործողի կամ եղողի տևական կամ ժամանակավոր հատկանիշ<sup>146</sup>, իսկ Գ. Սևակը նկատում է, որ այս դերբայը ցույց է տալիս կատարված գործողություն և միաժամանակ արտահայտում է այդ ավարտված գործողության հետևանքը իբրև մնայուն, հարատևող արդյունք<sup>147</sup>: Ըստ Էդ. Աղայանի՝ ենթակայական և հարակատար դերբայները ցույց են տալիս առարկայի վիճակ՝ գործողության (վիճակի) շարունակական կերպով, առաջինը՝ ներկա, երկրորդը՝ անցյալ ժամանակով: Հարակատար դերբայն արտահայտում է գործողություն և վիճակ (դրություն), և այս երկու նշանակությունները միասնաբար են հանդես գալիս<sup>148</sup>: Փաստորեն հարակատար դերբայը գործողության հետ միաժամանակ արտահայտում է նաև հատկանշային նշանակություն: Դրա արտահայտած բայական նշանակությունը (գործողության իմաստը), մյուս դերբայներին համազոր ու համահունչ, իր քերականական-նյութական արտահայտությունն է ստանում բայասեռի և դրանից բխող խնդրառության կարգերում: Իսկ հարակատարի արտահայտած հատկանշային-ածականական նշանակությունը իր քերականական-նյութական դրսևորումն է ստանում դրա շարահյուսական կիրառությունների մեջ: Գործածվելով որպես որոշիչ՝ հարակատար դերբայը ածականների նման ցույց է տալիս առարկայի հատկանիշ որպես դրություն, վիճակ: Գործածվելով բայերի հետ՝ հարակատար դերբայը բնութագրում է գործողությունը՝ հանդես գալով ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով: Այս դերբայը կարող է կիրառվել գոյականաբար (հոլովվում է

<sup>144</sup> Պալասանյան Ա., Քերականութիւն մայրէնի լեզուի, մասն Բ, Թիֆլիս, 1906, էջ 77:

<sup>145</sup> Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 102:

<sup>146</sup> Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 193:

<sup>147</sup> Տե՛ս Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2008, էջ 299:

<sup>148</sup> Տե՛ս Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 348-349:

փոխանվանաբար և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ենթարկվելով **ի** հոլովման), և այդ դեպքում այն ունի է ոչ միայն հատկանշային, այլև առարկայական նշանակություն:

Արևմտահայերենում նույնպես հարակատարն ունի նշված իմաստային հատկանիշները, և այս հարցում որևէ էական տարբերություն երկու գրականներում չի արձանագրվում: Իսկ քերականական գործածության էական տարբերություններին ստորև կանդրադառնանք:

Հարակատար դերբայը կազմվում է **-ած** մասնիկով: Ըստ Ա. Աբրահամյանի՝ այս ածանցը առաջին անգամ ստուգաբանել է Արսեն Բագրատունին, որը կարծում է, որ դա «**ածել**» բայի արմատն է<sup>149</sup>: Մ. Աբեղյանը այն կարծիքն է հայտնում, թե հարակատար դերբայի **-ած** մասնիկը տարբեր է **-ած** մասնիկ ունեցող «բայանունների» մասնիկից: «Հավանաբար տարբեր ծագում ունի «ողորմած», «գտած», «երկյուղած», «քնեած» բառերի մեջ **-ած** ածանցը, որը կարող է և «ածել» (բերել, կրել, ունենալ) բայից ծագած լինել, իբրև ողորմություն, գթություն, երկյուղ բերող, այսինքն կրող, ունեցող»<sup>150</sup>: Ի դեպ, այս առիթով դեռևս Մ. Աբեղյանից առաջ նման վերապահում է անում նաև Ա. Այտընյանը<sup>151</sup>: Մ. Աբեղյանը «**ածել**» բայից ծագած է համարում ոչ թե հարակատար դերբայի **-ած** վերջավորությունը, այլ «ողորմած», «գթած», «երկյուղած», «քնեած» բայանունների **-ած** մասնիկը: Սակայն Ա. Աբրահամյանը կարծում է, որ հայերենում ծագումնաբանորեն երկու կամ ավելի **-ած** մասնիկ չկա. հարակատար դերբայի և «գթած» ու նման բառերի **-ած** մասնիկը նույնն են: «Չենք ժխտում, որ այս մասնիկը կարող է զանազան դրսևորումներ ունենալ և ունի, սակայն այստեղ նկատի ունենք ծագումը և ոչ կիրառությունը. այսպիսով՝ Բագրատունու կատարած ստուգաբանությունը պետք է տարածել նաև հարակատար դերբայի **-ած** մասնիկի վրա»<sup>152</sup>: Արդի քերականության մեջ այն ոչ թե բառակազմական, այլ բառահարաբերական ձևույթ է, որը

<sup>149</sup> Նշենք, սակայն, որ աշխատանքի ընթացքում չգտանք Ա. Բագրատունու նշված աշխատությունում Ա. Աբրահամյանի՝ **-ած** մասնիկի վերաբերյալ մատնանշած ստուգաբանությունը: (Մ. Աբեղյանը այս առիթով Բագրատունու անունը չի հիշատակում): Հմմտ. **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 198-199:

<sup>150</sup> **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 244:

<sup>151</sup> Տե՛ս **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 100-101:

<sup>152</sup> **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 199:

կազմում է հարակատար դերբայ գրեթե բոլոր բայերից՝ դրվելով կա՛մ ներկայի, կա՛մ անցյալ կատարյալի հիմքի վրա:

Ինչ վերաբերում է **հարակատար դերբայ + եմ/էի** կառույցներին, ապա նշենք, որ արևմտահայերենում և արևելահայերենում հարակատար դերբայի իրացումները տարբեր են: Արևմտահայերենում բոլոր բայերի հարակատարը ինքնին և՛ **անկախ դերբայ** է, և՛ **կախյալ**: Մինչդեռ արևելահայերենում հարակատար դերբայի կախյալ (ստորոգումային ձև) լինելը մշտապես վեճերի տեղիք է տվել, և այսօր էլ, ըստ էության, այդ հարցը լուծված չէ<sup>153</sup>: Մենք առավել հակված ենք հարցի վերաբերյալ էդ. Աղայանի այն տեսակետին, ըստ որի՝ արևելահայերենում **հարակատար+եմ/էի** կառույցները **եղանակաժամանակային ձևեր չեն**:

Արևմտահայ քերականագիտության մեջ հարակատարի իմաստը բնորոշելիս հիմնականում զուգահեռ է անցկացվում դրա և վաղակատար դերբայի իմաստների միջև: Վաղակատար դերբայը նույնպես ցույց է տալիս կատարված, ավարտված գործողություն, բայց հարակատարը գործողության կամ եղելության կատարված, ավարտված լինելը արտահայտելու հետ միասին դրսևորում է նաև գործողության կամ եղելության հետևանքը, «որը իբրև մնայուն դրություն հարատևում է»: Այսպես, և՛ վաղակատարը, և՛ հարակատարը անցյալ գործողություն են ցույց տալիս միայն այն տարբերությամբ, որ հարակատարի մեջ դրսևորվում է նաև գործողության հետևանքային կողմը: Հարակատար դերբայի այս յուրահատուկ կողմի անտեսման հետևանքով էլ հայ քերականագիտության մեջ շատ քերականներ այս դերբայը չեն ճանաչում որպես ինքնուրույն դերբայ: Դրությունը նույնն էր նաև արևմտահայ քերականների աշխատություններում: Ա. Այտընյանը նկատում է արևմտահայ գրականում հարակատար դերբայի գոյության փաստը, սակայն այն չի դիտարկում որպես առանձին դերբայ, այլ համարում է անցյալ

---

<sup>153</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Լիսիցյան Ս.**, Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը, Պետական համալսարանի գիտական աշխատություններ, Եր., 1941: **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965: **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969: **Աղայան Էդ.**, Ժամանակակից հայերենի հովովումը և խոնարհումը, Եր., 1967: **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Եր., 1973: **Մարգարյան Ա.**, Հարակատարն ու անցյալի հարակատարը բայական ժամանակներ են, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 1, էջ 162: **Ասմանգուլյան Հ.**, Հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, N 2, էջ 160 և այլն:



դերբայի մի տարբերակ<sup>154</sup>: Նույնը տեսնում ենք նաև արևմտահայ մյուս քերականների աշխատություններում. **-ած** կառույցով դերբայը անցյալ դերբայի մի տարբերակ են համարում նաև Ն. Մելիք-Թանգյանը, Հ. Գազանճյանը<sup>155</sup>:

Արևմտահայերենում հարակատար դերբայով և **եմ** օժանդակ բայով արտահայտված կապակցությունները՝ հարակատար (հարակատար ներկա) և գերակատար (անցյալի հարակատար) անվանումներով, վաղակատարի ու անցյալի վաղակատարի հետ մեկտեղ սահմանական եղանակի ժամանակ են դիտվել դեռևս հայագետ Յովակիմ Շրյոդերի աշխատությունում<sup>156</sup>:

Հարակատար դերբայով և **եմ** օժանդակ բայով կազմված ձևերը ժամանակներ է ճանաչել Ա. Այտընյանը, որը և, ի տարբերություն նախորդների, վաղակատարի և հարակատարի ժամանակները առանձնացնելով իրարից, վաղակատարն ու անցյալի վաղակատարը կոչում է հարակատար անորոշ (**տեսեր եմ, տեսեր ես, տեսեր է, տեսեր ենք, տեսեր եք, տեսեր են**) և գերակատար անորոշ (**տեսեր էի, տեսեր էիր, տեսեր էր, տեսեր էինք, տեսեր էիք, տեսեր էին**), իսկ հարակատարն ու անցյալի հարակատարը՝ հարակատար (**տեսած եմ, տեսած ես, տեսած է, տեսած ենք, տեսած եք, տեսած են**) և գերակատար կամ վաղակատար (**տեսած էի, տեսած էիր, տեսած էր, տեսած էինք, տեսած էիք, տեսած էին**) ժամանակներ<sup>157</sup>:

Արևելահայերենում և արևմտահայերենում հարակատար ձևերի կազմության և իմաստային տարբերություններին անդրադառնում է նաև Ռ. Սաքապետոյանը: Լեզվաբանը նշում է, որ **հարակատար+եմ/էի** կառույցը արևմտահայերենում գործում է անխտիր բոլոր բայերի համար: Սրանից բացի՝ դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ ներգործական սեռը, որպես կանոն, գործողություն է ցույց տալիս, իսկ կրավորական սեռը՝ վիճակ: Սա լիովին համահունչ է հարակատար դերբայների իմաստային առանձնահատկությանը, որի պատճառով էլ արևելահայերենում սովորական է կրավորական սեռի բայերով արտահայտված հարակատարների կիրառությունը<sup>158</sup>: Իսկ

<sup>154</sup> Տե՛ս **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 100, 102:

<sup>155</sup> Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն.**, նշվ. աշխ., էջ 48: **Գազանճեան Յ.**, նշվ. աշխ., էջ 112:

<sup>156</sup> Տե՛ս **Շրոդէր Յովակիմ**, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, էջ 106:

<sup>157</sup> Տե՛ս **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 94:

<sup>158</sup> Տե՛ս **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 155:

չեզոք սեռի բայերից հարակատարով ժամանակային ձևեր են կազմում նրանք, «որոնց մեջ զգալի է վիճակի կամ գործողության հետևանքի գաղափարը, ինչպես՝ **նստած է/էր...**»<sup>159</sup>: Արևմտահայերենում **հարակատար+եմ/էի** կառույցը, ի տարբերություն արևելահայերենի, բնորոշ է բոլոր բայերին՝ անկախ սեռից և իմաստից (**գրած եմ, գրած ես**): Հարակատարի ժխտական խոնարհման մեջ օժանդակ բայը ունի երկու դիրք. հանդես է գալիս և՛ հետադաս, և՛ նախադաս: «...Արևմտահայերենում այդ նույն կաղապարի ժխտականը կազմելիս,- գրում է Յու. Ավետիսյանը,- օժանդակ բայը, ինչպես բոլոր վերլուծական կազմություններում, կարող է գործածվել նախադաս դիրքով, որ արևմտահայ գրականում նույնիսկ նախընտրելի է (**գրած չեմ/չեմ գրած**)»<sup>160</sup>: Հետաքրքրական է հենց այս հանգամանքը. այսինքն՝ արևմտահայերենում, որքան էլ որ հարակատարով ձևերը եղանակաժամանակային ձևեր են, այնուամենայնիվ, ժխտական խոնարհման ժամանակ դրանք տարբերվում են: Հարակատարի ժխտական ձևերում օժանդակ բայի հետադաս կիրառությունը թերևս հուշում է այն մասին, որ նույնիսկ արևմտահայերենում պարզ ժամանակաձևի մեջ ևս ինչ-որ առումով հարակատարը գործողության իմաստին զուգահեռ պահում է նաև ածականական-հատկանշային նշանակությունը: Ավելին, գրական երկերի և պարբերական մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայերենի ձևավորման շրջանի համեմատությամբ ներկայումս առավել տարածված են հարակատարի ձևերում ժխտված օժանդակ բայի նախադաս կիրառությունները: Ընդ որում, օժանդակ բայը հաճախ է հանդիպում հնչյունափոխված ձևով: Հարցի վերաբերյալ փորձել ենք վիճակագրություն անցկացնել: Ընտրել ենք արևմտահայերենով հրատարակվող տարբեր օրաթերթերի («Ազդակ», «Ժամանակ», «Զարթոնք») հինգական համար, դուրս ենք գրել **հարակատար+եմ/էի** կառույցների բոլոր կիրառությունները և համեմատելով 20-րդ դարասկզբի բնագրային նույն իրողությունների հետ՝ նկատել ենք, որ 20-րդ դարասկզբի և այսօրվա արևմտահայերենում նշված ձևերի միջև կան ինչ-ինչ փոփոխություններ. իրոք, ժխտական խոնարհման ժամանակ գերիշխող են ժխտված օժանդակ բայի նախադաս կիրառությունները: Տարածված են նաև հարակատար

<sup>159</sup> Նույն տեղում:

<sup>160</sup> **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգահեռական քերականություն, Եր., 2007, էջ 155:

ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքում օժանդակ բայի հնչյունափոխության դեպքերը: Օրինակ՝ «Անիկա ինձի նամակ **դրկած չէ...**» (Ե. Օ.), «Կյանքիս մեջ շեղում մը **կատարված չէ**» (Զ. Ռ.), «**Տխրած եմ** տակավին, երբ փոթորիկէ մը յետոյ, **չեմ գտած** տապալած ծառ մը» (Ն. Ս.), «Սուրիոյ ղեկավարութիւնն տակաւին **չի որոշած** իր ընելիքները...» («Ազդակ»), «Պոլսո մէջ անիկա **չի կրցած** տակաւին գտնել ինքզինքը» («Ժամանակ») և այլն: Այս փոփոխությունների պատճառը ոչ միայն լեզվի բնական զարգացումն է, այլև մի շարք արտալեզվական գործոնների ազդեցությունը: (Նկատենք, որ արևմտահայերենը հասկանալի պատճառներով այսօր չունի նախկին կանոնավորությունը. լեզվական միևնույն երևույթը Սփյուռքի տարբեր համայնքներում ունի իրացման զանազան դրսևորումներ):

Արևելահայերենի համեմատությամբ այս ժամանակաձևը արևմտահայերենում ունի իմաստային տարբերություն. այն վաղակատար դերբայի նման ցույց է տալիս խոսելու պահից առաջ կատարված, ավարտված գործողություն, այսինքն՝ **գրած է, կարդացած է** ձևերը արտահայտում են նույն իմաստը, ինչ **գրեր է, կարդացեր է**, և մտնում է անցյալ ժամանակի բայաձևի հարացույցի մեջ: Եվ ի տարբերություն վաղակատարով բաղադրված ժամանակաձևերի՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում ունի առավել հաճախական գործածություն: Ավելին, հարակատարով բաղադրված ժամանակաձևերի ժխտականը գործածվում է վաղակատարով կազմված ձևերի ժխտականի փոխարեն՝ ամբողջովին ծածկելով դրանց իմաստային-քերականական դաշտերը, ինչպես՝ **գրեր եմ // գրեր էի - չեմ գրած // չէի գրած:**

**Չեմ գրեր // չէի գրեր** ձևերը արևմտահայերենում անկատար ներկայի և անկատար անցյալի ձևեր են. այսինքն՝ ժխտման դերբայն է: Այս դեպքում ևս խոսքը քերականական համանունության մասին է: Տարբերությունն ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք **ա** խոնարհման բայերը կամ սոսկաձանվոր և պատճառական բայերը, ինչպես՝ **կը կարդամ - չեմ կարդար և կարդացեր եմ - չեմ կարդացած:** Առաջին դեպքում սահմանական ներկայի ժխտականն է, երկրորդ դեպքում՝ վաղակատար ներկայինը:

Այսպիսով, արևմտահայերենում հարցը հստակ է. սահմանական եղանակի անցյալ ժամանակներ բաղադրող բայաձևերի մեջ հարակատարն ունի իր կայուն տեղը:

Այս դերբայը, բացի վերը նշված կառույցից, երկու գրական լեզուներում հիմնականում ունի նույն կիրառությունները:

Հարակատարը, զուտ **բայական-դերբայական** նշանակությամբ գործածվելով և առարկայի կամ գործողության հատկանիշ ցույց տալով, նախադասության մեջ կարող է լինել՝

▪ **Որոշիչ՝**

արևել.՝ «Ծաղկափոշու մեջ **թաթախված** բզեզին մանուշակը ճոճք էր թվում» (Ա. Բ.): «Երկնասլաց գնում է նա... **անմահացած** մահկանացուն՝ Միանալու իր աստրճուն» (Հ. Թ.): «Եվ նա գիտե՞ արդյոք այդ **բզկտված** գազանը, Որ նշված է արդեն նրա ուղին» (Ե. Չ.):

արևմտ.՝ «Կը խօսին **կորսուած** երկինքէ մը» (Ն. Ս.): «Անցավ ձին **լճացած** ջրի մը քովէն» (Ն. Մ.): «Տառապանքով **քաղուած** պտուղ մըն է ուրախությունս» (Ն. Ս.): «Կու գամ... աղետալի ճամբայէն, ուր նորածին հայ մանկիկները...՝ իրենց մայրերէն **լքուած**, մեր աչքերուն առջեւ»... (Ե. Օ.):

Ունենալով անկախ գործածություն՝ հարակատարը կիրառվում է նաև գոյականաբար (ինչպես որ հատկանիշ արտահայտող ամեն մի բառ)՝ իր մեջ համատեղելով բայական և գոյականական նշանակություններ, որոնցից եթե առաջինը «հետին պլան է մղվում» ու կարծես մթագնում, ապա երկրորդը դառնում է հիմնական ու բնորոշ: Այն հատկանշվում է գոյականին հատուկ քերականական իրողություններով. հոլովվում է՝ ենթարկվելով **ի** հոլովման (արևմտ. հոգնակին **ու** հոլովման է), հոդ է ստանում, ունենում է եզակի և հոգնակի թիվ: Նախադասության մեջ էլ կարող է հանդես գալ հետևյալ պաշտոններով՝

▪ **Ենթակա՝**

արևել.՝ «**Անցածն** էլ ետ չի գալու»: «Նրա **պատմածը** հավաստի է թվում»: «...Որ իր **ուզածը** լինի» ( Ե. Չ.): «Իմ **երգածը** սար է, Իմ **երգածը** քար է, Մեկն ասում է՝ չար է, Մյուսն ասում է՝ չոր է» (Հ. Ս.): «...Քո **որոնածը** աննյութեղեն է, Իսկ ես՝ հողեղեն, հողոտ, հողածին» (Հ. Ս.):

արևմտ.՝ «Մեր **ուզածը** երջանկությունն է միշտ» (Ն. Ս.): «Քու յօդուածին մէջ **գրածդ** գնահատուեցաւ»: «...Ակոս-ակոս ման գալով՝ **Սիրածս** հարս է» (Դ. Վ.):

▪ **Հատկացուցիչ՝**

արևել.՝ «Երբ որ **սիրածի** դագաղը մըթին Վիի են իջեցրել ու դեմքը ծածկել» ... (Հ. Թ.): «Ու թող տեսնեն ին աչքերի մեջ **կախվածի**, Իմ բորբ երկիր լուսապսակ քո ապագան» (Ե. Չ.):

արևմտ.՝ «**Գրածին** բովանդակությունը կարդա՛»: «Նալպանտեան եւ Մեմէտեարով մեկգմեկու **ըսածին** հակառակը կը պնդեն» («Նոյյան Տապան»):

▪ **Խնդիրներ.**

արևել.՝ «**Մնացածը** տուր զոռբային» (Ե. Չ.): «Մենք ուզում ենք տեսնել **արարվածը** վերջին» (Ե. Չ.): «Իր մտքում նա ներեց նրա երեկվա **արածը**» (Ա. Բ.): «Սաքանը քուրսու վրա գցած կարպետի ծոպերի հետ էր խաղում, ականջը կնոջ **պատմածին**» (Ա. Բ.): «Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ, Չեմ հասել երբեք քո **որոնածին...**» (Հ. Ս.):

արևմտ.՝ «...Որպեսզի համոզուիք **ըսածին**» (Վաղինակ Վարդապետ): «... Էդ մարդ գալըմ կնկա **ըսածով** կյ՛րնե» (Հ. Օ.): «Ուրիշներու **ըրածին** մի՛ հետևեք» («Ազգակ»):

Հարակատարը արևելահայերենում հանդես է գալիս որպես **ստորոգելիական վերադիր**, իսկ արևմտահայերենում՝ նաև **պարզ ստորոգյալ**.

արևել.՝ «**Կանգնած էր** բարդին հնավանդ Բլուրի վրա հայրենի»» (Ե. Չ.): «Հենց առաջին օրից **բզկտված են** նրա Նիհար կողերը. - բյուր գազանների կողմից»» (Ն. տ.): «Գիշերը չէր քնել: –**Հոգնած էր, վաստակած, Խոհերը** խառնիխուռն և վրդովյալ»» (Ն. տ.):

արևմտ.՝ «Կյանքիս մեջ շեղում մը **կատարված էր**» (Զ. Ո.): «Անսպասելիորեն ինձի գործ **գտած էի**» (Ն. տ.): «**Մոռցած եմ** բոլոր կեղծիքը» (Ն. Ս.): «Թափառիկ ու դյուրաբեկ ստվերայնություն..., որ **ծնրադրած** կթվեր քեզի...» (Մ. Մ.): «**Ըրածդ** սրտես համարած էր ան»: «...Եվ իր ափունքեն շատ անդին բոլոր թուփերուն, բոլոր խատուտիկ ծաղիկներուն, քումայթ ու թուփս հողերուն իր բազուկները **երկարած**, անոնցմե բուռ-բուռ **խլած, առած-փախած է...**» (Մ. Մ.):

Ինչպես ենթակայական դերբայի, այնպես էլ հարակատարի դեպքում որոշ բառաձևերի համար փոխանվանական գործածության հետևանքով նկատվում է խոսքիմասային հստակ անցում: Այս բառաձևերը նույնպես, շարունակելով մնալ դերբայական

հարացուցային ձև, բառարաններում արձանագրված են նաև որպես գոյականներ, ինչպես՝ **արարած, կոտորած, խորոված, նշանած, սիրած** և այլն: Օրինակ՝ «...Ակոս-ակոս ման գալով, - **Սիրածս** հարս է» (Դ. Վ.): «**Նշանածիդ** քովեն կու գաս, ի՞նչ լուրեր առիր...» (Ե. Օ.), «**Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...** քաղաքներուն մեջ և քաղաքներեն դուրս» (Ս.):

Հարակատար դերբայը երկու գրականներում էլ գործածվում մակբայական արժեքով: Նախադասության մեջ դառնում է.

▪ **Ձևի պարագա.**

արևել.՝ «Արմավենին **զայրացած** հրեց նրան» (Ա. Ի.): «Ճերմակ ալիքները բարկ հովին **տված՝** նորից հարցում արավ դերվիշը» (Ա. Ի.): «Որ լուրթ երկնքում մի օր **բազմած՝** Հորինեց պայծառ զրույցը այս» (Ե. Չ.): «**Քաղցած**, քոսոտ, անբուրդ, դեպի լյան Մասիս Քայլում է առասպելյալ մեր գայլը»» (Ն. տ.):

արևմտ.՝ «Մոռցեր էի արդեն ամեն ինչ, **ամփոփված** ինքզինքիս մեջ, **հանձնված** երջանիկ խոհ խոհերուս հոսանքին» (Զ. Ո.): «Կը սլանար **խենթացած**» (Ն. Ս.): «Սենյակին մեջ կգտնեի եղբայրս, սեղանին շուրջ **նստած**, հացի իր չափված բաժինին առջև» (Զ. Ո.): «Ծառերը **կանգնած** կը մահանան» (Ավ. Ահ.): «Ու ես կմտածեմ աչքերս կիսափակ ու **հոգնած**, գլուխս քարի մը **հենած** ու հոգիս հեշտանքով ու տենդով լեցուն» (Մ. Մ.):

▪ **Ժամանակի պարագա.**

արևել.՝ «Կեսօրից քիչ **անցած՝** հասանք մի հորդ աղբյուրի» (Մ.):

արևմտ.՝ «Պատասխանը **չստացած՝** ահա կը գրեմ վերստին» (Ա. Չ.): «Գետը, դեռ գյուղ չհասած, կթաղվտի իր քարե անկողինին մեջ՝ փրփրալից ու հեստ...» (Մ. Մ.): «Ամայի դաշտավայրեն անցած՝ հանկարծ իր կայքեն դուրս նետված էր» (Մ. Մ.):

## 2.5. Բայի և մակբայի քերականական-իմաստային հատկանիշները դերբայական համակարգում

Բայական համակարգում դերբայները առնչություններ են դրսևորում նաև մակբայ խոսքի մասի հետ: Արևելահայերենում դերբայներից մակբայական արժեք ունի հիմնականում **համակատար** (անկատար երկրորդ) դերբայը, իսկ արևմտահայերենում՝

**ընթացակցական** դերբայը: Հարակատար դերբայը երկու գրականներում էլ կարող է ունենալ մակբայական կիրառություն: **Համակատար** դերբայ արևմտահայերենում չկա:

**Համակատար դերբայ:** -**իս** մասնիկով դերբայական ձևը կա **Ել** և **Ում** ճյուղերի բարբառներում և գործածվում էր դեռևս գրաբարում:

Անդրադառնալով -**իս** վերջավորությամբ ձևին՝ Մ. Աբեղյանն այն անվանում է մակբայ՝ «**դերբայական մակբայ կամ բայական մակբայ**»<sup>161</sup>: Այսպիսի մոտեցումը բխում է Մ. Աբեղյանի՝ խոսքի մասերի որոշման հարցում որդեգրած սկզբունքից:

Ա. Աբրահամյանը, վկայակոչելով Փավստոս Բուզանդի բնագրային հայտնի օրինակը՝ «Իսկ թագաւորն Արշակ ի **լալիսն** տեսանէր զկինն սպանելոյն...», գրում է. «Ճիշտ է, ընդգծված ձևը դիմավոր ձև չէ և ոչ էլ վերջնականորեն ձևավորված դերբայական արդի իմաստով, սակայն այն շատ բան է ասում մեզ հետաքրքրող հարցի մասին: Բնավ անհավանական չէ պատկերացնել, որ «**ի լալիս**» ձևին օժանդակ բայի կցումով ստացվել է **ի լալիս եմ** և ապա նախդիրի անկումով՝ **լալիս եմ**»<sup>162</sup>: Եվ ինչպես նշում է Լեզվաբանը, հետագայում մթագնում է -**իս**-ով անկատար դերբայի հոլովական իմաստը, և այն արդեն ընկալվում է ոչ թե հոլովածև, այլ դերբայ: Իսկ իր արտահայտած իմաստով, գործառույթային ընդհանուր նշանակությամբ չի տարբերվում -**ում**-ով անկատարից և նույնպես ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող, շարունակվող գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար:

Սրա հիման վրա որոշ Լեզվաբաններ այն համարում են անկատար դերբայի մի տարատեսակ և ոչ թե առանձին դերբայ՝ «համակատար», «համընթացական», «զուգընթացական», «հարակցական» անվանումներով: Այսպես, վերջին անվան տարբերակումը տեսնում ենք Ս. Աբրահամյանի աշխատությունում. «Մենք այս դերբայն անվանում ենք **հարակցական** (ընդգծ. մերն է)՝ հաշվի առնելով, որ նա ցույց է տալիս մի այլ գործողության զուգահեռ հարակից գործողություն»<sup>163</sup>: Լեզվաբանն անգամ նշում է, որ այս դերբայն իր իմաստային հատկանիշով, քերականական արժեքով էապես տարբերվում է անկատարից: «Նախ, նա անկախ դերբայ է, այսինքն՝ ինքնուրույն շարահյուսական արժեք ունեցող բառածև է, որ չի մասնակցում բայի դիմավոր ձևերի

<sup>161</sup> **Աբեղյան Մ.**, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 161:

<sup>162</sup> **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 117:

<sup>163</sup> **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 157:

կազմությանը՝ ի տարբերություն անկատար դերբայի, որը միայն դիմավոր ձևերի կազմության մեջ է հանդես գալիս»<sup>164</sup>: Հարցի վերաբերյալ նույնպիսի մոտեցում է դրսևորում նաև Էդ. Աղայանը: «Անկատարից սա որոշակիորեն տարբերվում է, կարդում ենք Էդ. Աղայանի գրքում.- անկատարը կազմում է բայի եղանակային ձևեր, իսկ սա չի կազմում (բացի երեք բայից), անկատարը ինքնին նախադասության անդամ չէ, իսկ սա նախադասության երկրորդական անդամ է որպես ժամանակի պարագա»<sup>165</sup>: Սա նկատի ունենալով՝ Էդ. Աղայանը այն անվանում է **ժամանակային դերբայ**:

Սակայն պետք է նշել, որ այս անվանումը կարող է ընկալվել որպես իմաստային հատկանիշ, մինչդեռ դերբայը ժամանակ չի արտահայտում: Իհարկե, **-ում** և **-իս** ձևերը չեն կարող դիտվել սոսկ որպես նույն քերականական կարգի տարբերակներ, սակայն սխալ կլինեք անտեսել այս ձևերի իմաստային և կիրառական ընդհանրությունները: Սա հաշվի առնելով՝ Մ. Ասատրյանը առաջարկում է **-ում**-ով ձևը կոչել **անկատար առաջին** կամ ուղղակի **անկատար**, իսկ **-իս**-ով ձևը՝ **անկատար երկրորդ**: «Այսպիսով, մենք նախ՝ մի փոքր միայն հեռացած կլինենք այս ձևերի ավանդական անվանումներից, երկրորդ շեշտած կլինենք, որ դրանք ոչ թե միասնական անկատար դերբայի տարբեր ձևեր են, այլ տարբեր դերբայներ, որոնց իմաստային և կիրառական որոշ ընդհանրություններ թույլ են տալիս գոնե մասնակիորեն դրանք նույն անունով կոչելու»<sup>166</sup>:

Արևելահայերենում համակատարի **-իս** մասնիկը դրվում է բոլոր բայերի դերբայական հիմքի վրա. ինչպես՝ **լսել-լսելիս, գթալ-գթալիս, բարձրանալ-բարձրանալիս, վախեցնել-վախեցնելիս** և այլն:

Համակատար դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս որպես ինքնուրույն անդամ և ունենում է ժամանակի պարագայի, նաև պարագայական բացահայտչի պաշտոն, ինչպես, օրինակ՝ «Ու տակավին հուր **տեսնելիս** մեջն են ընկնում անհամբեր» (Հ. Թ.): «Սաքանը կերավ կուշտ, **ուտելիս** չժպտաց» (Ա. Բ.): «Ամեն անգամ՝ դարմանը քթոցի մեջ **լցնելիս**, Սաքանի աչքի առաջ սպիտակ շորերով կինն էր» (Ն. տ.): «Երեկոները՝ իրար **տեսնելիս**, մարդիկ կովի մասին էին հիշում» (Ս. Զ.):

<sup>164</sup> Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 158:

<sup>165</sup> Աղայան Էդ., ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 358:

<sup>166</sup> Ասատրյան Մ., ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Եր., 1973, հ. Բ, էջ 269:



Այս դերբայը **լինել** բայի հետ կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ: Նման կառույցների շատ ենք հանդիպում հեքիաթներում, առած-ասացվածքներում և ընդհանրապես ժողովրդախոսակցական լեզվում, ինչպես՝ «Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում **տիրելիս է լինում** Ուքանա թագավորը» (Հ. Թ.), կամ՝ **ապրելիս է լինում, գնալիս կլինի** և այլն:

Արևելահայերենում համակատար դերբայը բացառիկ դեպքերում ոչ սովորական կառույցներ է կազմում՝ դառնալով ստորոգելիական վերադիր, ինչպես՝ «Կամրջի վրայով **անցնելիս էր**, որ կրկին հիշեց այդ դեպքը»: «Գործ **անելիս էր**, որ լսեց երեխայի լացը»: Այս կառույցները թերևս բաղադրյալ երկրորդական ժամանակաձևերի կրճատված տարբերակներ են, որոնք առաջացել են **լինել** բայի խոնարհված ձև(եր)ի զեղչումով՝ **անցնելիս էր լինում, անելիս էր եղել**: Այս կրճատված տարբերակները թերևս բարբառային ծագում ունեն, որտեղից ներթափանցել են խոսակցական լեզու: Այս ձևերը հատկապես նպաստում են բանավոր (հանպատրաստից) խոսքի սեղմությանը: Իրողությունը, ինչ խոսք, առկա է լեզվում, սակայն դժվար է ասել, թե այսպիսի կառույցները միտում ունեն ընդհանրանալու կամ գրական խոսք թափանցելու:

**Ընթացակցական դերբայ**: Հայ քերականության մեջ որոշ լեզվաբաններ դերբայական համակարգում առանձնացնում են ընթացակցական դերբայ<sup>167</sup>: Այն արտահայտում է դիմավոր բայով դրսևորվող գործողությանը կամ եղելությանը զուգահեռ ընթացող մի ուրիշ գործողության կամ եղելության գաղափար:

Դերբայական այս ձևը ծագում է անորոշ դերբայից և ունի հատուկ մասնիկ՝ **-էն**, որը անմիջականորեն դրվում է անորոշի վրա, այսպես՝ **երգել+էն, լալ+էն** և այլն: Պատասխանում է **ի՞նչ ընելէն, ի՞նչ ըլլալէն** հարցերին:

Այս դերբայը տարբերակվում է արևմտահայ քերականության մեջ: Բացի սրանից՝ այն տարածված է նաև որոշ բարբառներում: Ընթացակցական դերբայը՝ որպես ինքնուրույն դերբայական ձև, դիտարկում է Էդ. Աղայանը «Մեղրու բարբառը» ուսումնասիրության մեջ<sup>168</sup>: Հետազոտվող բարբառի «**ըտելէն**» (**ուտելով**), «**խըսելէն**»

<sup>167</sup> Տե՛ս **Աղայան Էդ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 358-359:

<sup>168</sup> **Աղայան Էդ.**, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 196-197:

**(խոսելով)** և նման ձևերը նա իրավացիորեն դիտում է որպես առանձին դերբայ և այն կոչում **մակբայական՝** «նկատի ունենալով, որ **-իս** ձևով դերբայը այդ բարբառում վերածվել է բուն անկատար դերբայի (կերպային), իսկ **-ում** ձևով դերբայը բոլորովին չկա: Քանի որ այդ բարբառում մակբայական դեր կատարող դերբայը միայն դա է, ապա հարմար է այդ բարբառի համար այն կոչել մակբայական դերբայ»<sup>169</sup>: Ա. Աբրահամյանը, ուսումնասիրելով հայերենի դերբայները գրական լեզվի երկու տարբերակներում և բարբառներում, ցույց տվեց, որ այս դերբայը առկա է նաև այլ բարբառներում, որոնցից թափանցել է գրական լեզու, և, ինչպես արդեն նշեցինք, այն անվանեց **ընթացակցական**: Էդ. Աղայանը այդ անվանումը ճիշտ է համարում և՛ ընթացակցական, և՛ անկատար երկրորդ (Աղայանի անվանած ժամանակային դերբայ) դերբայների համար: Իմաստային առումով երկուսն էլ ցույց են տալիս շարունակական վիճակ, որն ընթացակից է մեկ այլ գործողության, իսկ կիրառական տեսակետից երկուսն էլ նախադասության անդամ կարող են լինել որպես պարագա: Տարբերությունն այն է, որ մեկը ժամանակի պարագա է, մյուսը՝ ձևի: Այսպես, «ընդհանրությունների հիման վրա երկուսն էլ կկոչենք մակբայական դերբայներ, իսկ տարբերության հիման վրա մեկը՝ ժամանակային, մյուսը՝ ձևի դերբայ»<sup>170</sup>:

Ըստ Էդ. Աղայանի՝ արևելահայ գրական լեզվում այս դերբայը սահմանափակ գործածություն ունի, այն էլ իբրև խոսակցական ձև. դրա փոխարեն գործածվում է անորոշ դերբայի գործիական հոլովը (**երգելէն-երգելով, գոռալէն-գոռալով**): Մեր կարծիքով, այս ձևերը ժամանակակից արևելահայ գրական լեզվում գործածական չեն ընդհանրապես:

Արևմտահայերենում այս դերբայը ունի համեմատաբար լայն կիրառություն. հանդես է գալիս ձևի պարագայի պաշտոնով, ինչպես՝ «Պատառները կոկորդնուս մեջ **խեղդվելեն** կճաշեիք» (Զ. Ո.): «Ճերմակ-ճերմակ **լողալեն** կու գար» (Հ. Օ.): «Այս ամառ ալ հոգին **խածնելեն, իյնալեն-ելլալեն**, պիտի կրնա մինչև հոն գալ» (Հ. Օ.): «Ոտքի՛ ելեք **խաչակնքելեն**» (Ն. Ս.): «Պիտի անցնիմ ես այս գիշեր Յոյսի ոսկի բոցին անուրջն **առկայծելեն**» (Ս.):

<sup>169</sup> Նույն տեղում, էջ 358:

<sup>170</sup> **Աղայան Էդ.**, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 359:

Փոխանվանական կիրառությամբ այն նաև կարող է դառնալ տեղի պարագա, ինչպես՝ **հնձելեն կու գամ, երգելեն կու գամ** (հնձելու տեղից, երգելու տեղից...):

Ընթացակցական դերբայը քերականական համանունություն է դրսևորում անորոշ դերբայի բացառական հոլովաձևի հետ. սակայն դրանք ունեն իմաստային տարբերակում: Բացառական հոլովով դրված անորոշը պատասխանում է **ինչէ՞ն, ինչո՞ւ** հարցերին (Անունդ **կանչելեն** ձենս քաշվեցավ (<.)): Իսկ ընթացակցական դերբայը պատասխանում է **ի՞նչ ըլլալեն, ի՞նչ ընելեն (ինչպե՞ս)** հարցերին՝ «Պուտ-պուտ փաթիլներ **փայլելեն** կիյնային» (<. Օ.): Սակայն երբեմն տարբերակումը հստակ չի երևում, օրինակ՝ **ուրախանալեն** կերգեր, նշանակում է ուրախանալի՞ց էր երգում, թե՞ ուրախանալով էր երգում: Որոշ լեզվաբաններ չեն տարբերակում ընթացակցական դերբայը. այն համարում են անորոշի բացառական հոլովաձև: Նման մոտեցում նկատել ենք <. Աճառյանի «Քննություն Պոլսահայ բարբառի» աշխատությունում. «Անորոշի բացառական հոլովը ցույց է տալիս այդ գործողությունը անելով և գործածվում է իբր մակբայ (սովորաբար հոդ է ստանում): Օր.՝ «**Բարձենալեն** կխօրաթէ գոր: **Ուղելեն** գերթա»<sup>171</sup>:

Ամփոփելով նշենք, որ արևելահայերենում և արևմտահայերենում դերբայական հարացույցի ձևերը, նմանություններով հանդերձ, դրսևորում են կազմության և կիրառության տարբերություններ: Պայմանավորված գործածությամբ՝ դրանք արտահայտում են իմաստային բազմազանություն. դրա շնորհիվ երկու գրական լեզուներում էլ առավել ակնհայտ են դառնում առնչությունները գոյական, ածական և մակբայ խոսքի մասերի հետ: Կախված իմաստային յուրահատկությունից՝ այդ առնչությունները լինում են բուն դերբայական իմաստից բխող կամ պայմանավորված են փոխանվանական կիրառությամբ:

## 2.6. Փոփոխություններ-տեղաշարժեր արևմտահայերենի բայի խոնարհման համակարգում

Ներածության մեջ նշել ենք, որ բայի խոնարհված ձևերին չենք անդրադառնալու, քանի որ հարցը ըստ էության քննվել է մենագրություններում, գիտաուսումնական ձեռ-

<sup>171</sup> Աճառյան <., Քննություն Պոլսահայ բարբառի, Եր., 1941, էջ 156:

նարկներում: Սակայն անհրաժեշտ ենք համարում երկու խոսքով ներկայացնել արևմտահայերենի բայի խոնարհված ձևերում կատարված ինչ-ինչ փոփոխություններ, որոնք ձևակազմական իրողություններ են: Թեև մեր աշխատանքը ենթադրում է քննվող լեզվական իրողությունների զուգադրական ուսումնասիրություն, սակայն այս դեպքում արևելահայերենում կատարվող փոփոխություններին մանրամասն չենք անդրադառնա: Խնդրո առարկայի վերաբերյալ արևելահայ քերականագիտության մեջ կան անդրադարձներ, առանձին ուսումնասիրություններ, որոնցում հանգամանորեն ներկայացված են և՛ ուղղախոսական, և՛ բառապաշարային, և՛ քերականական փոփոխություն-տեղաշարժերը<sup>172</sup>:

Մինչ այժմ բայակազմության և ձևակազմության որևէ հարցի մասին խոսելիս նկատի ենք ունեցել և՛ արևելահայերենի, և՛ արևմտահայերենի **գրական նորմով սահմանված**, այսպես ասած, դասական լեզվավիճակի իրողությունները: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, տարբեր (արտալեզվական և լեզվական) գործոններով պայմանավորված, բոլոր կենդանի լեզուները իրենց զարգացման ընթացքում անընդհատ ինչ-ինչ փոփոխությունների, տեղաշարժերի են ենթարկվում: Գալիս է մի պահ, երբ լեզվի մեջ ստեղծվում է այնպիսի վիճակ, որ քերականական նույն երևույթն արտահայտելու համար առաջ են գալիս մի քանի տարբերակներ, որոնք դառնում են հավասարապես գործածական: Այդ տարբերակները սովորաբար առաջ են գալիս խոսակցական լեզվում, իրենց սկզբնական «հղացման» մեջ հաճախ, որպես կանոն, սխալակազմության, խոսքային անհետևողականության կամ չիմացության հետևանք են: Դրանցից մի քանիսը, սակայն, ժամանակի ընթացքում միտում են ցուցաբերում տարածվելու, ընդհանրանալու: Եվ շատ դեպքերում անհրաժեշտ է, որ դրանք լեզվական կանոնի ուժ ստանան (դրա վկայությունը մեր լեզվի զարգացման ողջ ընթացքը), արձանագրվեն և ամրագրվեն որպես կանոնավոր ձևեր:

Արևելահայերենի համեմատությամբ արևմտահայերենում այդ փոփոխություններն ու անցումները (բոլոր մակարդակներում) առավել շատ են և շատ առումներով անհամակարգելի: Պատճառները խիստ տարբեր են. մի կողմից՝ գերակա լեզուների (նաև

---

<sup>172</sup> Տե՛ս **Խաչատրյան Լ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, **նույնի՝** Խոսքի-մասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Եր., 2011 և այլք:

արևելահայերենի), ինչպես նաև տարբեր մշակույթների ազդեցությունը, մյուս կողմից՝ հայերենով և հայկական կրթության կտրուկ նվազումը, համայնքային տարանջատ վիճակը էապես ներազդում են լեզվի որակների վրա: Իսկ վերջին տարիներին արևմտահայերենի առկախ գոյությունը է՛լ ավելի վտանգվեց Մերձավոր Արևելքի հայ համայնքների կամ, այսպես ասած, դասական Սփյուռքի տարրալուծման հետևանքով<sup>173</sup>: Խնդրի մասին դեռևս խորհրդային տարիներին մտահոգություն է հայտնում Արևմտահայերենի եզրաբանական խորհուրդը. «Լեզուն գործածող հաւաքականութեան մասնատուածութիւնը եւ ցրուածութիւնը, զանազան երկիրներուն մէջ հիմնուած գաղութներու միջեւ եղած անբաւարար կապը, լեզուական միասնութիւնը ստեղծող ընդհանուր՝ համասփիւռքային մամուլի, հեռատեսիլի չգոյությունը եւ այլն լեզուին բնականոն զարգացումը խոչընդոտող գործօններ են»<sup>174</sup>:

Արդի արևմտահայերենն էապես տարբերվում է իր դասական որակից. նկատելի տեղաշարժեր կան լեզվական բոլոր համակարգերում, որոնցից բայական համակարգի միայն ձևակազմական և իմաստային որոշ փոփոխությունների կանդրադառնանք: Դրանք առայժմ առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել և մեկնաբանության կարիք ունեն: Թերևս այդ փոփոխությունները մեծ թիվ չեն կազմում, բայց եղածներն էլ արևմտահայերենի արդի վիճակում հաճախադեպ կիրառություններ ունեն: Ավելին, միևնույն քերականական իմաստի համար առաջացած տարբերակային ձևերը հանդիպում են անգամ նույն տեքստում: Ասվածը վերաբերում է ոչ միայն հեղինակային առանձին ստեղծագործությունների (որոնցում այդ տարբեր ձևերի գործածությունը կարող է ռճական նպատակ ունենալ), այլև, օրինակ, մամուլի և լեզվակիրների խոսքին:

Այսպես, հիմք ընդունելով սփյուռքահայ արդի մամուլի լեզուն, որոշակի ներհամակարգային տեղաշարժ ենք նկատել **ու** լծորդության բայերի ձևակազմության մեջ, այն է՝ **ու** լծորդը դարձել է **ե**: Առանց այն էլ **ու** լծորդով բայերի թիվը խիստ սահմանափակ էր, իսկ այժմ նույնիսկ ամենագործածական **թողուլ** բայը ոչ միայն չունի խոնարհման ողջ հարացույցը, այլև դուրս է եկել գործածությունից: Այդ բայը խոսակցական արևմտահայերենում փոխարինվել է **ծգել** բայով: Առավել գործածական մնացել է **թողուլ** բայի

<sup>173</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Ավետիսյան Յու.**, Արևմտահայերեն. խնդիրներ և հեռանկարներ, «Հայագիտության հարցեր», դ 2, Եր., 2014, էջ 23-33:

<sup>174</sup> «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ», Ուղեցոյց, պրակ Ա, Մարտել, 1993, էջ 2:

միայն **թող** ձևը՝ որպես ըղձականի եղանակիչ՝ **թող երթա, թող մարէ: Արգելու** բայը գերազանցապես հանդիպել է **արգիլել** ձևով, իսկ **ջեռնուլ** բայը վաղուց դուրս է մղված գործածությունից:

Խոնարհման համակարգում նկատել ենք հետևյալ փոփոխությունները: **Թքանել** բայն այսօր ունի չորս տարբերակային ձևեր՝ **թքանել, թքնել, թքնիլ, թքիլ**, որոնք անցյալ կատարյալի և հրամայականի կազմության ժամանակ խոնարհվում են հինգ ձևով: Եվ դժվար է ասել, թե դրանցից որևէ մեկը սխալ է, քանի որ գրեթե հավասարաչափ են գործածվում: Այդ ձևերն են՝

ա) անցյալ կատարյալ՝ **թքի // թքայ // թուքի // թքնեցի // թքեցի, թքիր // թքար // թուքիր // թքնեցիր // թքեցիր, թքալ // թքալ // թուքալ // թքնեց // թքեց,**

բ) հրամայական՝ **թո՛ւք // թքի՛ր // թո՛ւք // թքնե՛ր // թքե՛ր:**

**Կառուցանել** բայը ևս արևմտահայերենում կիրառվում է երեք ձևով՝

ա) անցյալ կատարյալ՝ **կառուցանեցի // կառուցի // կառուցեցի, կառուցանեցիր // կառուցիր // կառուցեցիր, կառուցանեց // կառույց // կառուցեց,**

բ) հրամայական՝ **կառուցանե՛ր // կառուցո՛ւր // կառուցե՛ր:**

Թերևս կլինեն ձևակազմական այլ փոփոխություններ ևս (որոնք չենք նկատել):

Ամփոփելով նշենք, որ այս փոփոխությունները ինչ-որ առումով սպասելի են. վերջին տասնամյակներում, հասարակական-քաղաքական հայտնի իրադարձություններով պայմանավորված՝ շատ է ակտիվացել Հայրենիք-Սփյուռք կապը, և արևելահայերենի ազդեցությունը թերևս դարձել է անխուսափելի: Ինչևէ. այսօր երկու գրականները ակնհայտորեն փոխադարձաբար ազդում են իրար վրա. արևելահայերենի ազդեցությամբ պայմանավորված՝ արևմտահայերենում արտասանության մեջ նկատվում է եռաստիճան բաղաձայնական համակարգի վերականգնում<sup>175</sup>, արևելահայերենի բառապաշարը տասնամյակներ է՝ համալրվում է արևմտահայերեն նորակազմություններով<sup>176</sup>: Իսկ արևմտահայերենի խոնարհման համակարգի

<sup>175</sup> Տե՛ս **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 12:

<sup>176</sup> Տե՛ս «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ», Ուղեցոյց, պրակ Գ, Մարտի, 1998, էջ 64: Տե՛ս **Սաքապետոյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Եր., 2004:

նշված փոփոխություններում թերևս մեծ է կրկին արևելահայերենի ներգործման դերը: Հեռու մնալով հայերենագիտության խրթին-վիճահարույց հարցերից մեկից՝ երկու տարբերակների մերձեցման խնդրից, նշենք միայն, որ այդ ազդեցությունները ոչ միայն չեն քննադատվում, այլև նույնիսկ խրախուսվում են մասնագետ-լեզվաբանների, ՁԼՄ-ի ներկայացուցիչների, ազգային-հասարակական-քաղաքական գործիչների կողմից: Եվ սա հույս է տալիս, որ գուցե մի օր նաև գտնենք այդքան ցանկալի մերձեցման ուղին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրական արևելահայերենի և արևմտահայերենի բայական համակարգերի, հատկապես բայի կազմության քերականական կարգի զուգադրական քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների:

1. Հայերենն ավանդաբար պահպանել է առավելապես **սեփական բառակազմական միջոցներով** բառապաշարը հարստացնելու իր առանձնահատկությունը՝ նախկին բառակազմական կաղապարների գործուն կիրառությամբ: Սա ցույց է տալիս, որ ավանդաբար հայերենի բառակազմական համակարգն ավելի կայուն է եղել լեզվի մյուս՝ ձևաբանական և շարահյուսական համակարգերի համեմատությամբ:

2. Արևելահայերենի ու արևմտահայերենի բայական համակարգերում **հարադրական բայերը հիմնականում համընկնում են** իրենց իմաստային, քերականական և բառակազմական հատկանիշներով: Սակայն **քիչ չեն նաև տարբերությունները**, որոնք դրսևորվում են թե՛ բառակազմության, թե՛ ձևակազմության մեջ, հետևաբար նաև խոնարհման համակարգերում: Այդ տարբերությունները պայմանավորված են և՛ լեզվական (լեզվի զարգացման նախորդ փուլերի՝ գրաբարի և միջին հայերենի ժառանգորդությամբ, տարբեր բարբառային հիմքերով), և՛ արտալեզվական գործոններով:

3. Չնայած դասական քերականության մեջ նշվում է, որ արևմտահայերենը **պահել է գրաբարյան** չորս լծորդությունները, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **մասամբ** է պահել. **ու** լծորդության բայերից միայն **թողուլ**-ն է պահպանվել, այն էլ ոչ ամբողջական հարացույցով:

4. Այլ խոսքի մասերից բայեր բաղադրելիս արևելահայերենում առավել կենսունակ է **-ել** լծորդը, իսկ արևմտահայերենում՝ **-իլ**-ը:

5. Արևելահայերենում և արևմտահայերենում այլ խոսքի մասերից կազմված բայերը ու ինքնուրույն գործածություն չունեցող բայարմատներից բաղադրված բոլոր բայերը ունեն հետևյալ կաղապարները՝ **1.** բայարմատ + բայակերտ ածանց, **2.** գոյական + բայակերտ ածանց, **3.** գոյական + բայածանց + բայակերտ ածանց, **4.** ածական + բայակերտ ածանց, **5.** ածական + բայածանց + բայակերտ ածանց, **6.** թվական + բայակերտ ածանց, **7.** թվական + բայածանց + բայակերտ ածանց, **8.** դերանուն + բայածանց +



բայակերտ ածանց, **9.** մակբայ+ բայածանց +բայակերտ ածանց, **10.** ձայնարկություն + բայակերտ ածանց:

**6.** Բայակազմ համադրական բայերը արևելահայերենում և արևմտահայերենում կազմվում են երկու եղանակով՝ **նախածանցմամբ**. նոր բայը բաղադրվում է **վեր-, արտ-, բաղ-, ներ-, համ-, հակ-** նախածանց(ներ) + **բայ** կաղապար(ներ)ով և **վերջածանցմամբ**. նոր բայը բաղադրվում է **բայ + -ացն-, -եցն-, -ցն-, -ուց-, -տ-, -կոտ-, -կոտ-, -ատ-, -ոտ-, -կլտ-, -վ-** վերջածանցներ կաղապար(ներ)ով:

**7.** Բայական-բառակազմական բոլոր ածանցներն էլ **ընդհանուր են** երկու գրականների համար: Սակայն հանդիպում են հնչյունափոխ, դիրքային տարբերակներով (**-անալ, -նալ**), և կիրառության կամ կենսունակության տեսակետից սրանց դաշտերը **ամբողջությամբ չեն համընկնում**: Հնչյունափոխության պայմանավորված՝ գրական արևմտահայերենում **-ն**-ածանցը դառնում է համանուն՝ բուն **-ն**- (մեռնի) և **-ան-, -են-**ի դիրքային տարբերակ **-ն**- (գողնալ), որոնց տարբերությունները երևան են գալիս կատարյալի հիմքում՝ **մեռ-** և **գողց-**:

**8.** Բայակազմական օրինաչափությունները նույնպես ընդհանուր են, սակայն **տարբեր են բառակազմական կաղապարները**՝ կապված բառակազմական ձևային տարբերակների հետ: Տարբերությունը միայն անցյալի հիմքն է. արևելահայերենի ցոյական հիմքի **-աց, -եց** ցուցիչների դիմաց արևմտահայերենն ունի **-աց, -եց, -ուց, -ց**:

**9.** Երկու գրականներում էլ գործում են պատճառական միևնույն ածանցները, բոլոր պատճառականները **ե** լծորդության են: Սակայն բոլոր բայերի պատճառականները արևելահայերենում կազմվում են **րեական** հիմքից, իսկ արևմտահայերենում **-ցն-** ածանցով բայերի պատճառականները կազմվում են հետևյալ կերպ. **-ցն-** ածանցի **ն**-ն փոխվում է **ուց**-ի. այսպիսով ձևավորվում է պատճառականի **-ցուց-** հիմքակազմիչը:

**10.** Կրավորականության ցուցիչը երկու գրականներում էլ **-ու-// -վ-**ն է (արևմտահայերենում սակավ դեպքերում բացակայում է), բոլոր կրավորականները գրական արևելահայերենում **ե** լծորդության են, իսկ գրական արևմտահայերենում՝ **ի**:

**11.** Բազմապատկական բայերը, հիմնականում բարբառային ծագում ունենալով, առավել շատ են և բազմազան կազմություններ ունեն գրական արևմտահայերենում:

**12.** Արևմտահայերենում և արևելահայերենում համընկնող անկախ դերբայները երեքն են՝ **անորոշ, հարակատար, ենթակայական (ապառնի երկրորդը՝ որոշ վերապահությամբ)**:

13. Արևելահայ գրական լեզվում առանձնացվում է նաև **անկատար երկրորդ դերբայը**, իսկ արևմտահայերենում՝ **ընթացակցական դերբայը**, որի փոխարեն արևելահայ գրական լեզվում գործածվում է անորոշ դերբայի գործիական հոլովածը:

14. Բայի անդեմ ձևերը կամ դերբայները երկու գրականներում իմաստային առումով, քերականական ընդհանուր և էական հատկանիշներով **հիմնական տարբերություններ չեն դրսևորում**:

15. **Անորոշ դերբայն** ունի ելակետային արժեք, որով տարբերակվում են լծորդությունները: Որպես բայի սկզբնածև՝ անորոշ դերբայի կազմում հանդես են գալիս բայական համակարգում եղած բոլոր բայածանցները: Երկու գրականներում անորոշը չի մասնակցում բայի խոնարհմանը, բայց հոլովվում է:

16. Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում հարակատար դերբայը **ձևաբանական դեր** ունի, այն օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով կազմում է հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակներ: Արևելահայ գրականում դրանց դրսևորած իմաստը արտահայտելու համար կիրառվում են սովորաբար վաղակատարի համապատասխան ձևերը: Եթե արևմտահայերենում այս դերբայը մասնակցում է նաև հիմնական ժամանակային ձևերի կազմությանը, ապա արևելահայերենում այն մասնակցում է միայն երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը:

17. Երկու գրականներում էլ ենթակայական դերբայը **չունի ձևակազմական արժեք**:

18. Արևմտահայ գրական լեզվում **ընթացակցական դերբայի** տարբերակումը միանշանակ է. այն **չի կարելի համարել** անորոշ դերբայի գործիական հոլոված:

19. Արևելահայ գրականում անկատար երկրորդ դերբայը ունի լայն կիրառություն, և դա (անկատար դերբայը) արևելահայերենի հիմնական տարբերակիչ հատկանիշն է արևմտահայերենից:

20. Թե՛ արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում **ապառնի երկրորդ դերբայի** նշանակությունը շատ հաճախ փոխարինվում է անորոշ դերբայով: Ապառնի դերբայների մեծ մասի մեջ զարգանում է առարկայական նշանակություն, և, այսպիսով, դրանք վերածվում են գոյականների:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Ա. Գրքեր, մենագրություններ, հոդվածներ

1. **Աբեղեան Մ.**, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Սուրբ Էջմիածնի, 1906, 168 էջ:
2. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, հ. 2, Երևան, «Միտք» հրատ., 1965, 701 էջ:
3. **Աբեղյան Մ.**, Երկեր, հատոր Զ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 848 էջ:
4. **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962, հ. 1, 720 էջ:
5. **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1953, 441 էջ:
6. **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, «Լույս» հրատ., 1975, 440 էջ:
7. **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. II, Երևան, «Լույս» հրատ., 1974, 587 էջ:
8. **Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ.**, Հայոց լեզու, հ. 2, Երևան, «Լույս» հրատ., 1975, 479 էջ:
9. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, 370 էջ:
10. **Աղայան Էդ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, 403 էջ:
11. **Աղայան Էդ.**, Լեզվի գոյության տարբերակային ձևեր, «Բանբեր Երևանի համալսարանի», ԵՊՀ հրատ., 1973, № 2(20):
12. **Աղայան Էդ.**, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1963, N 3:
13. **Աղաջանյան Զ.**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, «Տիգրան Մեծ» հրատ., 2007, 451 էջ:
14. **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1951, 355 էջ:

15. **Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի հմմտ. 562 լեզուների, հ. I-V, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1952-1971, հ. 4, 543 էջ, հ. 5, 430 էջ:
16. **Աճառյան Հր.**, Քննություն Պոլսահայ բարբառի, Երևան, ԵՊՀ հրատ., 1941, 234 էջ:
17. **Այտընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 502 էջ:
18. **Անթոսյան Ս., Մուրադյան Հ.**, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 229 էջ:
19. **Առաքելեան Կ.**, Արդի հայերէնի քերականութիւն, գիրք II, Պէյրութ, 1998:
20. **Ասմանգուլյան Ա.**, Հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի հարցի շուրջը «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1963, № 2:
21. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, 470 էջ:
22. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, Երևան, ԵՊՀ հրատ., 1970, հ. Ա, 415 էջ, հ. Բ, էջ:
23. **Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 1992, 320 էջ:
24. **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 286 էջ:
25. **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, «Ձանգակ - 97» հրատ., 2011, 92 էջ:
26. **Ավետիսյան Յու.**, Արևմտահայերեն. խնդիրներ և հեռանկարներ, «Հայագիտության հարցեր», դ 2, Երևան, ԵՊՀ հրատ., 2014:
27. «Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ», Ուղեցոյց, Մարսել, պրակ Ա, 1993, «Պրովանս» հրատ., 107 էջ, պրակ Գ, 1998, «Պրովանս» հրատ., 87 էջ:
28. «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում», Երևան, «Ասողիկ» հրատ., 2015, 78 էջ:
29. **Արևշատյան Ս.**, Աշխարհաբարի բայական համակարգը ըստ արևմտահայ քերականության, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, ԵՊՀ հրատ., 1976, № 1:

30. **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, ՀՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատ., 1953, 424 էջ:
31. **Գազանճեան Յովհ.**, Նոր քերականություն, Կ. Պոլիս, «Պալենց» տպարան, 1910, 221 էջ:
32. **Գազանճեան Յովհ.**, Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Ա եւ Բ մաս, Հնչաբանություն: Բառագիտություն: Բարձրագոյն եւ լրացուցիչ դասընթացք, Կ. Պոլիս, Գրատուն Ս. Յակոբեան, 1924, 250 էջ:
33. **Գազանճեան Յովհ.**, Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, Գրատուն Ս. Յակոբեան, 1929, 94 էջ:
34. **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Երևան, 1978, 325 էջ:
35. **Գալստյան Ս.**, Բայական բառակազմության և դերբայական կառուցվածքները արդի հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2007:
36. **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ԵՊՀ հրատ., 1971, 164 էջ:
37. **Լիսիցյան Մ.**, ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը, Պետական համալսարան, Գիտական աշխատություններ, հ. 19, Երևան, ԵՊՀ հրատ., 1941:
38. «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 184 էջ:
39. **Հարությունյան Հ.**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, 338 էջ:
40. **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 375 էջ:
41. **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 426 էջ:
42. **Ղազարյան Ս.**, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. 1, Երևան, «Հայպետհրատ», 1964, 535 էջ:
43. **Ղարիբյան Ա.**, Հայերենի բայաձանցները և նրանց ուսուցումը, «Սովետական մանկավարժ», № 8, 10:

44. **Ղարիբյան Ա.**, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Երևան, «Հայպետհրատ», 1950, 318 էջ:
45. **Ղարիբյան Ա.**, Ներածություն հայոց լեզվի պատմության ուսումնասիրության, Ծրագիր, Երևան, 1937, 96 էջ:
46. **Մարգարյան Ալ.**, Հայերենի անկանոն բայերի զարգացումը, Երևան, ԵՊՀ հրատ., 1961, 57 էջ:
47. **Մարգարյան Ալ.**, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, «Միտք» հրատ., 502 էջ:
48. **Մարգարյան Ալ.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, 2004, ԵՊՀ հրատ., 626 էջ:
49. **Մարգարյան Ալ.**, Հայերենի դերբայների բառակազմական արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, ԵՊՀ հրատ., 1977, № 1:
50. **Մարգարյան Ալ.** Հարակատարն ու անցյալի հարակատարը բայական ժամանակներ են, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1964, № 11:
51. **Մելիք-Թանգեան Ն.**, Աշխարհաբարի քերականութիւն, Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1900, 80 էջ:
52. **Մելքոնեան Ջ.**, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրութ, 1970, հ. Ա, 126 էջ:
53. **Մուրվալյան Ա.**, Հայերենի բայաձանցները, «ԼԻԱԺ1», Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1946, էջ 219-272:
54. **Շրոդեր Յ.**, Արամեան լեզուին գանձ, Ա հ., Ամստերդամ, 1711, հրատ. 570 էջ:
55. **Չոլաքեան Յ.**, Հայերէնի եւ հայ գրականութեան համադրեալ ձեռնարկ, գիրք Գ, Հալէպ, «Անդաստան» հրատ. Բերիոյ հայոց թեմի, 2010, 136 էջ:
56. **Չոլաքեան Յ.**, Համազգային հայագիտական հիմնարկ, Հայերէնի դասընթացք, Բ գիրք, Ձեւաբանութիւն, Հալէպ, «Արեւելք», 2000, 96 էջ:
57. **Չոլաքեան Յ.**, Հայերէնի Դասագիրք, գիրք Գ, Հալէպ, «Արեւելք», 1991, 92 էջ:
58. **Պալասանեան Ա.**, Քերականութիւն մայրենի լեզուի, Տփլիս, տպ. Մ. Շարաձէի, 1894, 242 էջ:

59. **Պողոսյան Պ.**, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ., 1959, 244 էջ:

60. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 588 էջ:

61. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:

62. **Ջահուկեան Գ.**, Հայոց լեզուի տեսութեան և պատմութեան հիմնահարցերը, Պէյրուֆ, Համազգային Վահէ Սէթեան տպարան, 2001, 408 էջ:

63. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք» հրատ., 1969, 291 էջ:

64. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, ԵՊՀ հրատ., 1975, № 3:

65. **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 298 էջ:

66. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 2004, 232 էջ:

67. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 286 էջ:

68. **Սևակ Գ.**, Հայոց լեզվի դասընթաց, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 350 էջ:

69. **Տասնապետեան Ե.**, Քերականություն, Անթիլիաս, Տպարան Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 1990, 266 էջ:

70. **Քիրէճճեան Մ.**, Հայերեն քերականություն աշխարհաբար լեզուի, Կ. Պոլիս, տպ. Մ. Մինասեան, 1864, 138 էջ:

71. **Քիրքճեան**, Նոր քերականություն հայերեն լեզուի (Արեւմտահայերէն), Միջնակարգի Ա տարի, գիրք Բ, Աթէնք, «Հայկական հրատարակչական», 1989, 152 էջ:

72. **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, 491 էջ:

## **Բ.Բառարաններ**

1. **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, մաս 1, 929 էջ, մաս 2, 930-1615 էջ:
2. **Աւետիքեան Հ., Սիրմելեան Հ., Աւգերեան Հ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 2 հատորով, Վենետիկ, Սուրբ Ղազարի հրատ., հ. 1, 1836, 1140 էջ, հ. 2, 1837, 1067 էջ:
3. **Բաղիկյան Խ.**, Ոսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2002, 734 էջ:
4. **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 1403 էջ:
5. **Գայայեան Յ.**, Բառարան-Գանձարան, Գահիրե, «Գալֆա» տպարան, 1938, 542 էջ:
6. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», 4 հատորով, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, 1969, 604 էջ, հ. 2, 1972, 720 էջ, հ. 3, 1974, 576 էջ, հ. 4, 1980, 828 էջ:
7. **Կռանեան Անդրանիկ Վարդապետ**, Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրուֆ, «Շիրակ» հրատ., 1998, 524 էջ:
8. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, 1987, հ. 1, 418 էջ, հ. 2, 468 էջ:
9. **Ճերէճեան Գնէլ Արքեպիսկոպոս, Տօնիկեան Փարամազ Կ., Տէր-Խաչատուրեան Արտաշէս**, Հայոց լեզուի նոր բառարան, 2 հատորով, Պէյրուֆ, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատարակչատուն, 1992, հ. 1, 1301 էջ, հ. 2, 1206 էջ:
10. **Սարգսյան Ա.**, Արևմտահայերենի բառարան, Երևան, «Արևիկ» հրատ., 1991, 321 էջ:
11. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2000, 338 էջ:
12. **Սաքապետոեան Ռ.**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2011, 380 էջ:
13. **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1967, 683 էջ:
14. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան Երևան, ԵՊՀ հրատ., 1975, 610 էջ:



## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Ա.** - Արփիար Արփիարյան  
**Ավ. Ահ.** - Ավետիս Ահարոնյան  
**Ավ. Իս.** - Ավետիք Իսահակյան  
**Ա.Ծ.** - Անդրանիկ Ծառուկյան  
**Ա. հ.** - Առանց հրատարկության  
**Ա. Ջ.** - Արշակ Չոպանյան  
**Գ.Ջ.** - Գրիգոր Ջոհրապ  
**Գ.Խ.** - Գուրգեն Խանջյան  
**Դ.Վ.** - Դանիել Վարդուժան  
**Ե.** - Երուխան  
**Ե. Օ.** - Երվանդ Օտյան  
**Զ. Ո.** - Զարեհ Որբերյան  
**Հ.** - Համաստեղ  
**Հ. Մ.** - Հակոբ Մնձուրի  
**Հ. Պ.** - Հակոբ Պարոնյան  
**Հ. Օ.** - Հակոբ Օշական  
**Մ. Մ.** - Միսաք Մեծարենց  
**Մ.** - Մուրացան  
**Ն.Ս.** - Նշան Սիմոնյան  
**Շ.Շ.** - Շահան Շահնուր  
**Պ. Ս.** - Պարույր Սևակ  
**Ս. Ջ.** - Ստեփան Զորյան  
**Ռ. Ս.** - Ռուբեն Սևակ  
**Ս. Ս.** - Սիմոն Սիմոնյան  
**Տ.Կ.** - Տիգրան Կամսարական  
**արևել.** - արևելահայերեն  
**արևմտ.** - արևմտահայերեն  
**խսկց.** - խոսակցական  
**կբ** - կրավորական բայ  
**նբ** - ներգործական բայ  
**չբ** - չեզոք բայ  
**պբ** - պատճառական բայ